Բարև

ՎԱՂԱՐՇԱԿ ՆՈՐԵՆՑ

ԼԵՌ ԿԱՄՍԱՐ

ԱԲՐԱՀԱՄ ԱԼԻՋԵԱՆ

ԱԼ. ԱՐԱՔՍՄԱՆԵԱՆ

ԱՐՇԱՒԻՐ ԳԱՐԲՆԻ

ՄԿՐՏԻՉ ԱՐՄԷՆ

ՀԵՆՐԻԿ ԷԴՈՅԵԱՆ

ԲԱՂԻՇ ՇԱՎԱՍԷՓԵԱՆ

ԱՐՏԵՄ ՏԱՐԱՒԹԻՆԵԱՆ

ԳԷՈՐԳ ԱՐՇԱԿԵԱՆ

ՆՈՐԱՏՐ ԱԳԱԼԵԱՆ

ՀԱՅԻՍ 1986

digitised by A.R.A.R.@

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1.— * * * . . . . . Կիսահուն զօղանջներ...

7.— Վ. ՆՈՐԵՆՑ . . . . . Լոր գիւղի այգում

8.— » » . . . . . Ծաղկումն երգի

10.— Լ. ԿԱՄՍԱՐ . . . . . Ճարտարապետների ուշադրութեան

12.— » » . . . . . Հարկադրուած յարութիւն

15.— Ա. ԱԼԻՔԵԱՆ . . . . . Փոքորիկների ժամադիր

17.— » » . . . . . Բառաշխարհ

19.— ԱԼ. ԱՐԱՔՍՄԱՆԵԱՆ . . . Երկուսիք — *Թատերախաղ*
(*Հինգերորդ արարուած*)

26.— Ա. ԴԱՐԲՆԻ . . . . . Քծնողի կոշտուկը

26.— » » . . . . . Կլասիկի մահը

27.— » » . . . . . Խոնկորի կարծիքը

28.— Մ. ԱՐՄԷՆ . . . . . Հեղնար աղբիւր — (*Նախաբան*)

33.— Հ. ԷԴՈՅԵԱՆ . . . . . Ջեռուս դանդաղ բարձրանում է...

39.— » » . . . . . Ինֆուզորիա

39.— » » . . . . . Արեւածաղիկ

40.— » » . . . . . Էլեգիաներ

41.— » » . . . . . Մի խօսք

42.— Բ. ՅՈՎՍԷՓԵԱՆ . . . . . Սերմնացանները չվերադարձան

53.— Ա. ՅԱՐՈՒԹԻՒՆՅԱՆ . . . . Անհունը

54.— » » . . . . Հայաստան

51.— Գ. ԱՐՇԱԿԵԱՆ . . . . . Սեւ ու սպիտակ կարապներ

64.— Ն. ԱԴԱԼԵԱՆ . . . . . Պատմութեան դասը

72.— Յ. ՊԷՐՊԷՐԵԱՆ . . . . . Քերթողական աճող սահմաններ

digitised by A.R.A.B.I@ 2000

Բազմն

ԱՅՍԱՓԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ

ԺԲ. ՏԱՐԻ. ԹԻՒ 5 ՄԱՅԻՍ 1956 ՊԷՅՐՈՒԹ

ԿԻՍԱՀՈՒՆՉ ՂՕՂԱՆՋՆԵՐ...

Արեւմտահայ գրական դէմքերու յեղուին հանդէպ առաւելագոյն չափով մը հոգածութիւն ցոյց տալու նոր վերաբերումին առընթեր՝ Սփիւռքի հետ աւելի ամուր կամուրջներ հաստատելու համար, Հայաստան վերջին քառորդ դարուն սկսաւ աւելի բծախնդրութիւն ցոյց տալ նաեւ Մեսրոպեան ուղղագրութեան նկատմամբ:

Առ այդ գլուխ բերուած առաջին ձեռնարկը Սփիւռքի դրպրոցներուն համար հրատարակուած դասագիրքերու շարքն էր, որուն մէջ ի յայտ եկած ձեռնհասութեան աստիճանէն ու ընտրական թերութիւններէն աւելի՝ ուշագրաւ էր փաստը ինք, Մեսրոպեան ուղղագրութեան կիրարկումը, որ լուսեւան կը թելադրէր մեր ժողովուրդի երկու հատուածներուն միջեւ գոյութիւն ունեցող երկփեղկումներէն գոնէ՝ այս մէկուն վերջ մը դնելու ձգտումը:

Աւելորդ չէ բացուած փակագիծը քիչ մը աւելի լայնցնել ու հաստատել, որ մեր մտաւորականութիւնը առաջին օրէն անդրադարձաւ երկփեղկման պատճառներէն այդ մէկուն: Դեկրետային նոյն աղէտին դէմ անմիջապէս ընդվզեցան մաքի մեր ամէնէն հանգամանաւոր ներկայացուցիչները՝ Թումանեանէն մինչեւ Ա-ճառեան, Դուրեան արքեպիսկոպոսէն մինչեւ Ղազիկեան վարդապետ եւ ուրիշներ, բայց նոր սարքուած Աբեղեանականը պարտադրուեցաւ մեր երկրին, ու քառասնական թուականներուն կրած կարգ մը բարեփոխութիւններով հանդերձ, շարունակեց խորթ մնալ ամէնուն համար:

Ընդգծենք՝ ամէնո՛ւն համար:

Արդարեւ, ոեւէ մէկուն ուշադրութենէն չի կրնար վրիպած ըլլալ այն հանգամանքը, որ Խորհրդային Հայաստանի կողմէ առնուած ամէն քայլ ու որոշում, անպայման ձայնակից մը ունե-

digitised by A.R.A.R.@

ցաւ Սփիւռքի մէջ, բայց Աբեղեան ուղղագրութիւնը՝ ո՛չ։ Բոլոր խորթութիւններուն արդարացում գտնող արտասահմանի ուղղափառ համայնավարնե՛րն անգամ շարունակեցին իրենց թերթերն ու գիրքերը լոյս ընծայել Մեսրոպեան ուղղագրութեամբ։

Այդ մասին հաղիւ թէ կարելի է մանակի երեւոյթներ յիշել, որոնցմէ մէկը հաւանաբար պէտք է համարել ներգաղթի օրերուն գրականութեան մէջ իրենց առաջին քայլերը նետող ոգեշունչ նորափետուրներուն փութկոտ ենթակայութիւնը։ Իրապէս գտնուեցան այդպիսիներ։ Հաւասիկ նմոյշ մը՝ մէկուն լոյս ընծայած բանաստեղծական հատորիկէն.

Աշնան գոդին, նրբին գովին եմ կարոտ,
Հյուսիսի գուրտ հովին, բուքին եմ կարոտ,
Այս ճակատիս կրակին դէմ՝ զովանալու,
Ես Մասիսի մաքուր ձյունին եմ կարոտ։

Եւայլն։ Եւ այսպէս ամբողջ գիրքը՝ «կարոտ Հյուսիսի ձյունի»։

Ասոնք, սակայն, ուղղագրական այս ուղեկիցները, մատի վրայ կը համրուէին, նոյնիսկ մատի վրայ չէին համրուեր, իններսունինը տոկոսը հաւատարիմ մնացին դարերը նուաճած ու վերջնականօրէն նուիրագործուած հինին, որ մինչեւ այսօր կը յուզէ մեր մտաւորականները ու կը ժղէ արդար ընդվզման։ Դեռ քանի մը տարի առաջ, «Պարոյրը» անուն իր յուշագրութեան մէջ, թատերագէտ ու քննադատ Լեւոն Հախվերդեան կը գրէր.

«Շտապում էր գրականութեան ինստիտուտ՝ Սարգիս Ցարուբիմեանի դոկտորական դիսերտացիայի պաշտպանութեանը, թեման՝ *«Մանուկ Աբեղեան»*։ Ինքն ընդդիմախօսներից մէկն էր։ Աբեղեանի ծառայութիւնները շատ են, — ասացի, — բայց տրուած վնասն էլ քիչ չէր։ — Ուղղագրութեան փոփոխո՞ւմն ես ասում։ — Ի հարկէ՛, ամբողջ ժողովրդին կիսագրագէտ դարձրեց, Հայաստանն ու Սփիւռքը բաժանեց...։ Զթողեց շարունակեմ՝ հիմա հետս արի կը լսես ինչ եմ ասելու։

«Զգնացի, ես ուրիշ տեղ էի շտապում»։

Դժուար չէ կռահել, թէ ինչ ըսած է Պարոյր Սեւակ, ուրիշ գրութիւններէ գիտենք, թէ ինչ կրնայ ըսած ըլլալ այս մասին, ինչպէս գիտենք հայրենի մեր մտաւորականներուն այս հարցին հանդէպ որդեգրած կեցուածքը, բայց դժուար է հոս ամփոփել կատարուած բոլոր հաստատումները։ Այսքանը անհրաժեշտ էր սակայն, զգալի դարձնելու համար «Հայրենի զօրանցներ»ուն աւագ արժանիքներէն մէկը։

«Սփիւռքահայ դպրոցականի գրադարան»ի հաշուոյն պատրաստուած չորրորդ եօթը հարիւր էջնոց ստուար հատոր մըն է «Հայրենի զօրանցներ»ը, «Մաղկաքաղ սովետահայ գրականութեան», զոր լոյս ընծայեց Երեւանի «Լոյս» հրատարակչութիւնը, 1985ին, ինչպէս ըսուեցաւ՝ Մեսրոպեան ուղղագրութեամբ։

«Հայրենի զօրանցներ»ը կազմած են որդի Ցարուբիմեանի Սարգիս եւ Ազատ Եափուճեանները, որոնք հաղիւ թէ բան մը կ՚ըսեն սփիւռքահայ ընթերցողին։ Մենք եւս լայն տեղեկութիւն չու-

digitised by A.R.A.R.@

Նինք անոնց մասին, մէկ-երկու անգամ հանդիպած ենք իրենց Սփիւռքի դպրոցներուն համար պատրաստուած դասագիրքերուն վրայ գտնուող կազմողներուն չարքին, ու կարդացած երկրորդին մէկ գրութիւնը՝ «Վահան Թէքէեան», ուրկէ կ'իմացուի, որ ինք անցած է Մելքոնեան հաստատութենէն, իսկ մեծ եղբայրը՝ Անթիլիասի դպրեվանքէն: Հաւանաբար ներգաղթի օրերուն մեկնած են Հայաստան, ուր տարած են մտաւորական աշխատանքներ: Ուրեմն իրենք՝ ներգաղթած Եափուճեանները կազմած են «Հայրենի գողանցներ»ը, որ, Մեսրոպեան ուղղագրութեամբ օժտուած ըլլալու իր արժանիքին հետ՝ ուշադրութիւն կը գրաւէ նաեւ լաւորակ թուղթով, տպագրական մաքրութեամբ, նմոյշներուն կողքին տրուած դժուարիմաց բառերուն բացատրութիւններով ու կենսագրական տուեալներու ամփոփումով:

Կը թուի սակայն, որ Եափուճեան եղբայրները քիչ կը ճանչնան հայրենի գրականութիւնը եւ քիչ անդրադարձած են նոյն գրականութեան հետեւող Սփիւռքի ընթերցողներուն կուտակած ծանօթութեանց չափին, այլապէս, կը կարծենք, տարբեր բովանդակութեամբ պիտի օժտէին իրենց կազմած հատորը: Քիչ մը չատ ի միջի այլոց հաշուի առնուած են մա՛նաւանդ ժամանակի եւ տեղի հակացողութիւնները, որոնք լոյս մը բերելէ աւելի՝ տարտամութիւն մը կը սփռեն հատորին տարբեր բաժիններուն վրայ:

Արտագրենք «Ղողանցներ»ուն իբրեւ ուղեցոյց տրուած միակ ծանօթագրութիւնը, որպէսզի աւելի պարզ դառնան մեր արտունչներուն տուն տուող պատճառները.

«Սովետահայ գրականութեան «*Հայրենի ղողանջներ*» խորագրուած այս ծաղկաքաղը իր տեսակին մէջ առաջին ձեռնարկն է, որ սփիւռքահայ դպրոցականներուն հնարաւորութիւն պիտի ընձեռէ աւելի լայն պատկերացում կազմելու հայրենական գրականութեան զարգացման 60ամեայ ընթացքի, անոր գաղափարական, գեղագիտական միտումներու, ինչպէս նաեւ այդ հոլովոյթի ընթացքին ասպարէզ եկած գրական մշակներու կեանքի ու գործունէութեան մասին:

«Ծաղկաքաղը, իբրեւ ուսումնական օժանդակ ձեռնարկ, պիտի դիւրացնէ սովետահայ գրականութեան դասաւանդումը, պիտի օգնէ հայ գրականութեան ուսուցիչներուն՝ անկէ քաղուած նիւթերով աւելի հիմնաւոր եւ շօշափելի ընծայելու իրենց հաղորդումները:

«Նուազ կարեւոր չենք նկատեր ծաղկաքաղի բերելիք նպաստը գրականութեան ուսուցման արտադասարանական ձեռնարկումներու արդիւնաւէտ աշխատանքին:

«Ծաղկաքաղը կրնայ օգտակար ըլլալ նաեւ բոլոր անոնց, որոնք կը հետաքրքրուին սովետահայ գրականութեամբ:

«Նիւթերն առնուած են ընդգրկուած հեղինակներու տարբեր տարիներու հրատարակուած ժողովածուներէն»:

Ինչպէս կ'երեւի, դուրսը մարդ չէ մնացած, հաշուի առնուած են բոլորը, — դպրոցականները, գրականութեան ուսուցիչները, սովետահայ գրականութեամբ հետաքրքրուողները, բո՛լորը, որոնց ծաղկաքաղը «հնարաւորութիւն պիտի ընծեռէ աւե-

digitised by A.R.A.R.@

լի լայն պատկերացում կազմելու հայրենական գրականութեան զարգացման 60ամեայ ընթացքի» մասին։

Ոչ մէկ կասկած այն մասին, որ իր ամբողջութեանը մէջ «Ղօղանջներ»ը կրնայ գաղափար մը տալ Սփիւռքի ընթերցողին, մանաւանդ այն խաւին, որ հեռուէն կը հետեւի հայրենի գրականութեան տեղաշարժներուն, բայց չի կրնար պարտկել իր խոցելիութիւնը, որ կ'ուրուագծուի երկու երեսով՝

անհարկի ներկայութիւններով եւ

զգայի բացակայութիւններով։

Այսինքն՝

խմբագրութիւնը մէկ կողմէ չատ ծանրաբեռնած է հայ գրականութեան սովետահայ շրջանը եւ, միւս կողմէ՝ չատ թեթեւցուցած է նոյն ժամանակահատուածին ձեռք բերուած իրական բերքը։

Վերը արտագրուած բացատրականէն եւ անոր անմիջապէս հետեւող «Հայկական սոցիալիստական հանրապետութեան հիմն»էն ետք, հատորը տեղ կու տայ Յովհ. Թումանեանին՝ 18 էջ, ապա՝ Շիրվանզադէին՝ 22 էջ, մէկ հեղինակ (Ա.. Իսահակեան) ետք՝ Վահան Տէրեանին՝ 10 էջ եւ...

Քիչ մը կանգ առնենք հոս...

Մեր աշխարհաբարին զոյգ թեւերուն կազմութենէն ետք, անցնող շուրջ մէկուկէս դարու հայ գրականութիւնը վերլուծուած ու արժեւորուած է պայմանական չորս բաժանումներու մէջ, — Արեւելահայ գրականութիւն, Արեւմտահայ գրականութիւն, Սովետահայ գրականութիւն եւ Սփիւռքի գրականութիւն։

Ուղղակի չէ ըսուած ու լռելեայն բնաւ չի հասկցուիր, թէ ինչու «Հայրենի զօղանջներ»ուն խմբագիրները Արեւելահայ գրականութենէն անջատած ու Սովետահայ գրականութեան մէջ տեղաւորած են վերոյիշեալ դէմքերը։

Դեռ այնքան զարմանալի պիտի չթուէր այս վերաբերումը, եթէ երբեք տուեալ հեղինակներէն ընտրուած նմոյշները վերցուած ըլլային Սովետական Հայաստանի օրօք ստեղծած անոնց թուղթերէն, մինչդեռ Թումանեանէն ընտրուած կտորները գրուած են 900ական թուականներէն առաջ, իսկ Սովետահայ գրականութեան հաշուոյն Շիրվանզադէէն իբրեւ նմոյշ տրուած է հատուած մը «Քառս»էն, գրուած 1898ին, եւ ուրիշ մը՝ «Արտիստ»էն, գրուած՝ 1903ին։

Կազմողները, թերեւս հաշուի առած են այն պարագան, որ ենթականները ապրած են խորհրդային կարգերու ներքեւ, բայց եթէ սոսկական այդ փաստը կ'արտօնէ, որ տուեալ գրողը մաս կազմէ Խորհրդային գրականութեան, ապա ուրեմն «Ղօղանջներ»ը ինչո՞ւ այդ պատիւէն զրկած է Յովհաննէս Յովհաննիսեանը, որ ճիշդ Շիրվանզադէին (1926–1935) չափ ապրեցաւ Խորհրդային Հայաստանի մէջ, մինչեւ 1929։ Միւս կողմէն՝ Թիֆլիսաբնակ եւ դարձեալ արեւելահայ Յովհաննէս Թումանեանին ու Յակոբ Յակոբեանին յատկացուած էջերը կը յիշեցնեն ուրիշ զրկեալ մը, Նար-Դոսը, նոյնպէս Թիֆլիսաբնակ, որ որեւէ յիշատակութեան չէ արժանացած «Ղօղանջներ»ուն մէջ, հակառակ անոր, որ Թու-

digitised by A.R.A.R.@

մանեանէն ուղիղ տասը տարի աւելի ապրեցաւ խորհրդային կարգերուն տակ։

«Ղօղանջներ»ուն մէջ իբրեւ Սովետահայ գրականութեան դէմքեր տեղատորուած վերոյիշեալ գրողներուն պարագան դեռ հասկնալի է չափով մը, անոնք ունին ի՛բր թէ կամ իրաւամբ կողմնորոշուած ըլլալու արդարացում մը, բաներ մը ողջունած են, ընդունած են ուրիշ բաներ, սովետական քաղաքացիի իրաւունքներ ձեռք ձգած են, եւայլն, եւայլն։ Շատ աւելի տարօրինակ է սակայն Վահան Տէրեանին եղած գրկաբաց ընդունելութիւնը, որովհետեւ, ինչպէս ամէն ոք գիտէ, Տէրեան աչքերը գոցեց Հայաստանի մէջ խորհրդային կարգեր հաստատուելէն ուղիղ տասնմէկ ամիս առաջ, Հայաստանէն ու սահմանակից երկիրներէն հեռո՛ւ տեղ մը, Էրէնրուրգ։ Այս հանգամանքներուն լոյսին տակ չենք դիտեր ինչպէս կրնայ ան տեղ գտնել Սովետահայ գրականութեան մէջ, իսկ եթէ Ստեփան Շահումեանին նուիրուած քանի մը տողը եւ յարեւանները բաւարար են Սովետական գրականութեան մաս կազմելու համար, այն ատեն ինչու հարկ տեսնուած է «Ղօղանջներ»ը զրկել հոկտեմբերեան միւս յարեւաններէն, որոնց հոգին Տէրեանի պէս հեռուներէն եւ Տէրեանէն երկար զօղանջեց...

Այս օրինակները աչքի առջեւ բերելով՝ կարելի չէ չշարունակել ու չըսել տակաւին, որ «Հայրենի զօղանջներ»ը արդար չէ գտնուած նոյնպէս Կոստան Զարեանի եւ Արեւմտահայ գրականութեան մէջ վաստակած Զապէլ Եսայեանի նկատմամբ, որոնցմէ առաջինը եօթը տարի ապրեցաւ Խորհրդային կարգերուն ներքեւ, իսկ երկրորդը չուրջ չորս տարի, եւ այդ կարգերուն տակ ստեղծագործեց ուեւէ մէկէն աւելի, գլուխ բերելով երեք գործ՝ «Կրակէ շապիկ», «Սիլիհտարի պարտէզները» եւ «Բարբա խաչիկ»։

Վերի էջերուն մէջ ցարդ յիշատակուած Արեւելահայ դէմքերէն թերեւս միայն մէկը իրաւունք ունէր տեղ ունենալու Սովետահայ գրականութեան մէջ, Աւետիք Իսահակեանը, որ ո՛չ Զապէլ Եսայեանի չափ թէեւ, բայց հոն տպրած քսան տարիներուն կրցաւ առնուազն քանի մը կտոր բան գրել։

Ամփոփենք այս գիտողութիւնները հարցումներով.

Ինչո՞ւ Շիրվանզադէն եւ ոչ Նար-Դոսը։

Ինչո՞ւ Թումանեանը եւ ոչ Յովհաննիսեանը։

Ինչո՞ւ Տէրեանը եւ ոչ Զարեանը։

Ինչո՞ւ Իսահակեանը եւ ոչ Եսայեանը։

«Հայրենի զօղանջներ»ուն համար երկայրի սուր է այս պատկերը, ո՛չ ներս առնուածներուն չարժառիթը արդարացում ունի եւ ոչ ալ դուրս ձգուածներուն պարագան բացատրելի է։

⁂

Նախասովետական չրջանին արդէն դիմագիծ կազմած գրողները սովետականացնելու անհասկնալի միտումին պէս անհեթեթը թուի նաեւ սովետահայ գրողներէն ոմանք բոլորովին անտեսած ըլլալու փաստը։ Սփիւռքահայ դպրոցականներուն, ուսուցիչներուն եւ հետաքրքիր ընթերցողներուն «Հայրենական գրականութեան զարգացման 60ամեայ ընթացքի» մասին աւելի լայն պատ-

digitised by A.R.A.R.@

կերացում ընձեռելու հեռանկարով կազմուած ժողովածուէ մը՝ ինչպէ՞ս կարելի է դուրս ձգել անոր առաջին վաստակաւորներէն Մկրտիչ Արմէնն ու Վաղարշակ Նորենցը, կամ անոնց կազմութեան օրերուն իր առաջին հատորները լոյս ընծայած Լեռ Կամսարը, կամ միւսները, յաջորդ սերունդէն՝ Ալեքսանդր Արաքսմանեանը, Արշաւիր Դարբինին, եւ աւելի նորերէն՝ Բաղիշ Ցովսէփեանը, Գէորգ Արշակեանը, Նորայր Ադալեանը, Աբրահամ Ալիքեանը կամ Հենրիկ Էղոյեանն ու Արտեմ Ցարութիւնեանը, որոնցմէ իւրաքանչիւրը ունի իր գրական անհատականութիւնը։

Այս դէմքերը եւ նոյնքան ալ ուրիշներ դուրս ձգելով՝ «Հայրենի զօրանոցներ»ը կազմող խմբագիրները երբեք չեն անդրադարձած, որ իրենց աշխատանքը կը զրկեն նաեւ ուրիշ հրապոյրէ մը, այլազանութեան հարստութենէն։ «Հօրանոցներ»ը կարդացողը այն ապաւորութիւնը կ՚ունենայ, որ ամբողջ վաթսուն տարի հայրենի մեր գրողները բանաստեղծութիւն, վէպ ու պատմուածք մշակած են միայն եւ միւս սեռերը՝ առակը, երգիծանքը, թատերգութիւնը, ժամանակագրութիւնը կամ գիտաերեւակայական գրականութիւնը ներկայացուցիչներ չեն ունեցած հոն, չունին։

Տեղաբաշխումները արդարօրէն կատարելով՝ կարելի էր ըղձալի չդարձնել այս բացերը։ Պարզ է, որ նման ժողովածուներուն մէջ կարելի չէ բոլոր արժէքները ցուցադրել, որովհետեւ եթէ այդ ըլլար նպատակը, այն ատեն պէտք էր, օրինակի մը համար, արտագրել ամբողջ Բակունցը եւ տեղ չձգել միւս արձակագիրներուն մեծ մասին։ Ժողովածուներուն պարագան այդ չէ սակայն, ժողովածուները նմոյշներ միայն կը հաղորդեն, ուրիշ խօսքով՝ անուս չեն առներ այլազանութիւնը։ Ցիշելով դարձեալ անառարկելի հեղինակութիւն հանդիսացող Բակունցը՝ պիտի ըսենք, որ երբեք տեղ կարելի էր մէկ պատմուածք տալ իրմէ եւ «Հօրանոցներ»ը չզրկել Մկրտիչ Արմէնի ներկայութենէն, կամ կարելի էր Ազատ Վշտունիի գրաւած էջերը կէսի վերածել եւ միւս կէսը յատկացնել Վաղարշակ Նորենցին, եւ այսպէս շարունակաբար...

Վաթսուն տարիներու վրայ երկարած Սովետահայ գրականութեան երեք հարիւրէ աւելի պաշտօնական եւ հարիւրէ աւելի անպաշտօն գրողներ, բնական է, հնարաւոր չէր նկատի ունենալ նման ձեռնարկներու պարագային, բայց Սովետահայ գրականութեան որակական երեսին համար «Հայրենի զօրանոցներ»ը անհրաժեշտաբար պէտք է հաշուի առնէր վերոյիշեալ դէմքերը եւ ներս առնուած եօթանասունէն առնուազն քսանին յատկացնէր ուրիշ տեղ մը, արդարօրէն դուրս ձգուած Սեւադա-Սիրաս-Սեւունցներու կողքին կամ խառնել Գէորգ Արով-Թորբրտ Կարայեաններու անդարձ կարաւանին։

Հետագայ էջերուն կու տանք «Հայրենի զօրանոցներ»էն դուրս ձգուած կարգ մը գրողներէ որոշ նմոյշներ, որոնց հաղորդուող ընթերցողը վստահաբար ինք եւս պիտի զարմանայ թոյլ տրուած անարդարութեան համար։

Սովետահայ գրականութիւնը, գրակա՛ն առումով՝ շատ աւելի կշիռ ունի, քան կը թելադրեն «Հայրենի զօրանոցներ»ուն մատուցած նմոյշները։

digitised by A.R.A.R.@

Վ. ՆՈՐԵՆՑ

Բանաստեղծ, արձակագիր եւ թարգմանիչ Վազգարշակ Նորենց (բուն անունով՝ Վազգարշակ Երիցեան) ծնած է 13 Սեպտեմբեր 1903ին՝ Սասունի Շենիկ գիւղը։ Նախնական կրթութիւնը ստացած է Շենիկի եւ Բշխանաձորի վարժարաններուն մէջ։ 1916ին, դուռրաձնեերէն փրկուելէ ետք, անցած է Անդրկովկաս եւ ապրած՝ Թիֆլիսի որբանոցներուն մէջ։ Այս շրջանին, ուսումը շարունակած է Թիֆլիսի գիմնազիայի եւ Ներսիսեան վարժարանին մէջ։ 1925ին իր մասնակցութիւնը բերած է Հայաստանի պրոլետարական գրողներու «Նոյեմբեր» միութեան հիմնադրման աշխատանքներուն։

Այնուհետեւ, գրական ստեղծագործական աշխատանքներու զուգահեռ՝ պաշտօնավարած է մշակութային հաստատութիւններու եւ հասարակական կազմակերպութիւններու մէջ։

Վազգարշակ Նորենց հրատարակած է 16 անուն հատորներ, որոնց նշանաւորներն են՝ «Գիրք ճնարակաց», «Ճանապարհներ», «Ցուշեր եւ տրամգանգներ»։ Նաեւ գրաշած է թարգմանութեամբ, գլխաւորաբար էնդրոնանալով մանկական գրականութեան վրայ։

Մահացաւ 20 Յունուար 1973ին՝ Երեւան։

ԼՈՐ ԳԻՒՂԻ ԱՑԳՈՒՄ

Հ. Սահեանին

Խնձորենինե՞ր, աշնան պտղաբարձ խնձորենինե՞ր...
Լորի ձորակում սեղմուած այգին աշո՞ւն է խշշում.
Ձորակից նեղուած նա մագլցել է լեռան կողն ի վեր,
Հասել անտառին, թափանցել նրան՝ հեռու է քշում։

Պտղաբերութեան ուժն է պոռթկացել հզօր, անպարփակ
Եւ բեռնաւորել այս հեքիաթային հրաշալի այգին.
Եւ կորացել են ծառերը իրենց ազնիւ բեռի տակ,
Անհամբեր տոկում եւ սպասում են պտղահաւաքին։

Այստեղ մոյթով են պահւում ճիւղերը պտղաբեռներով,
Ուր մոյթ չի հասնում՝ ճիւղակոտոր են ծառերը արդէն,
Մրգահեղեղն այս դու չես հաւաքի միայն ձեռներով,
Եւ ո՞ւր տանել այն, երբ մեքենայի ճամբայ չեն հարթել։

digitised by A.R.A.R.@

Եւ իր ծանրութեան քաղցր բեռի տակ տմբում է այգին,
Նա թօթափում է եւ թեթեւացնում բեռները իր պերն...
Գիշերն արջերն են անտառից իջնում մրգահաւաքի, —
Այդպէս է կեանքում, ինչպէս ակսելեան նօրավէպի մէջ:

Այս շռայլութեան համար ուզում եմ հողը համբուրել,
Գրկել ծառերի բնները, ինչպէս հարազատների,
Կոտրած ճիւղերը, ինչպէս հիւանդի, բուժել, զուրգուրել,
Սեղմել ձեռքերը այս հողի որդի պարտիզպանների:

Ես անցնում եմ այս եռքիաթի միջով, ասես կախարդուած,
Ցանկարծ անսովոր մի ծառ եմ տեսնում կանգնած իմ առաջ...
Կայծա՞կը, կամ ի՞նչ, կամ ո՞վ է տուել այս ծառին կաթուած,
Կանգնած է ծառը՝ ամբողջ կիսով չոր ու կիսով կանաչ:

Որքա՜ն կենսական ուժ է սպառել ծառը մահուան դէմ,
Կեանքի ալիքով ուզեցել փակել վէրքը ահաւոր.
Թէպէտ վէրքն ամբողջ չի կարողացել փաթաթել, յաղթել,
Սակայն պահել է կէսն իր կենսունակ եւ արգասաւոր:

Մի ձեռն ու ոտը կուում կորցրած գինուորի նման՝
Մի ձեռքով պահած յաղթական, կանաչ դրօշը կեանքի՝
Խիզախ մնում է ծառը նոր վտանգների յանդիման.
Բանակի նման, հիացած՝ նրան նայում է այգին:

Եւ ես նայելով ծառին՝ իր կանաչ ճիւղերի կողմից՝
Այնպէս կենսալի իր պտուղներով բեռնաբարձ, փարթամ,
Ասում եմ՝ օ՜, նա չի տապալուելու էլ ոչ մի հողմից
Եւ այս կենսայորդ այգում չի զգում իրեն հաշմանդամ:

Իմ հոգում հիմա մի նոր զգացում իր երգն է երգում.
Աղօտանում են յուշերս տխուր, որքան դեռ կայնն...
Օ՜, մա՛յր հող, որքան կենսական ուժ կայ քո սուրբ ընդերքում,
Օ՜, ծա՛ռ, որքա՜ն ես դու էլ ինձ նման, որքա՜ն մարդկային:

1957

ԾԱՂԿՈՒՄՆ ԵՐԳԻ

Հայրենական երգի բերքովն ես գոհ, երբեմն,
Ասում եմ ինքս ինձ, — ի՞նչ լիութիւն է այս,
Գարունն այնքան շքեղ, շռայլ է երփներփել,
Որ չի թողել, կարծես, չկատարուած երազ.

digitised by A.R.A.R.@

Եւ ամառը այնքան հուր է տուել երգին,
Հողն իր հիւթերն ամբողջ գարձրել է յոյզ եւ երգ,
Ու այնքան են շռայլ յորդել սիրտն ու հոգին,
Որ մեր լեզուն լեցուել է եզերքից եզերք...

Մրգահաստը այսպէս եւ մրգահաղն այսպէս,
Մի՞թէ անսպառ է, ո՛վ մայրենի բարբառ...
Եթէ՝ այո, ինչո՞ւ, օ՜, յագեցած եմ ես,
Եթէ յագեցած եմ, ե՞ս եմ յոգնած ի սպառ:

Ահա նորից ծաղկումն հայրենական երգի, —
Նոր խօսքերի վսեմ ուռճացում նոր յոյզով...
Եւ ես յիշում եմ մեր հայրենական այգին,
Հօրս՝ դէմքը վառուած ներքին խաղաղ լոյսով:

Ամէն գարնան այգին երբ շքեղ էր փթթում,
Եւ աշխատանքն արդար խոստանում էր բարիք,
Հայրս մրմնջում էր գոհունակութիւնն իր սրտանց՝
«Փառաւորեալ լինես, ո՛վ բարեբեր տարի...

Երկինքն եթէ չտայ անժամանակ կարկուտ,
Կը գայ առատութիւն՝ չտեսնուած երբեք...»
Եւ ասում էր աշնան, — «Առատ ի՛նչ այգեկութ,
Մի ադէտ է գալու, երբ կայ այսպիսի բերք...»

Եւ մի անգամ կասկածն... օ՜, ահաւոր տարի...
Օ՜, մեր աւեր այգի, օ՜, մոխրացած մեր տուն,
Արեան ճապաղիքում ընկած հա՜յր իմ բարի...
Օ՜, բա՛ւ է, բա՛ւ... փակուի՛ր, անսիրտ յիշողութիւն...

Ների՛ր դու ինձ, ների՛ր, իմ հո՛ղ, իմ Հայաստան,
Որ ճայում եմ երբեմն այսպէս դէպի անցեալ,
Ների՛ր դու ինձ, ների՛ր, երգի իմ անդաստան
Մտորմունքս տխուր, երկիւղն իմ անիծեալ:

Օ՜, փոքրոգի իմ սիրտ, մի վայրկեանով անգամ
Դու իրաւունք չունես քո յոգնութեամբ ճսեմ
Աղարտելու անուն երգը հայրենական,
Որ տալիս է նորից նոր անուններ վսեմ...

Ահա նորից ծաղկումն հայրենական երգի,
Նոր խօսքերի դաշներգ՝ անհուն եւ անսահման,
Ցաւերժական երգով յաւերժացող երկիր,
Պատրաստ եղիր լսել նոր հիմներ քո անուան:

ՎԱՂԱՐՇԱԿ ՆՈՐԵՆՑ

1957

digitised by A.R.A.R.@

Լ. ԿԱՄՍԱՐ

Երգիչ-արան։ Բուն անունով՝ Արամ Թովմասեան, ծնած է 1888ին՝ Վան։ Նախնական կրթութիւնը ստացած է տեղւոյն վրայ, ապա՝ յաճախած է Էջմիածնի Գէորգեան ճեմարան, որուն բնիկացրը աւարտելէ հաք, վերադարձած է ծնընդավայրը եւ զուգահեռ ուսուցչութեամբ, միաժամանակ աշխատակցելով հոն հրատարակուող «Աշխատանք» թերթին, ստորագրելով գեղարուեստական-երգիծական գործեր։ 1915ին կը մասնակցի Վանի ինքնապաշտպանութեան կռիւներուն եւ ապա՝ մեծ նահանջի ատեն կ'անցնի Կովկաս։ Կովկասի մէջ կ'աշխատակցի «Հարիզոն»ի, «Արեւ»ի եւ այլ թերթերու։

1921ին, Փետրուարեան ապստամբութենէն հաք կ'անցնի Թուրքիոյ, իսկ քանի մը ամիս անց կը վերադառնայ Երեւան ու կ'աշխատակցի «Հարերդոյին Հայաստան» թերթին՝ միշտ երգիծական դրութիւններով։

1924ին, Երեւանի մէջ լոյս կը տեսնէ երգիծական իր երկերուն առաջին ժողովածուն՝ «Անվաւեր մեռելներ», որուն կը յաջորդէ «Ազգային այբբենարանը» 1926ին։

1934ին Լեռ Կամսար կը հրատարակէ «Վրիպած արցունքներ» ժողովածուն։

1959ին Հայպետհրատը լոյս կ'ընծայէ անոր «Գրաբար մարդիկ» հատորը, իսկ 1965ին՝ «Մարդը տանու շարիքով» ժողովածուն։

Մահացաւ 22 Նոյեմբեր 1965ին՝ Երեւան։

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԻ ՈՒԹԱԴՐՈՒԹԵԱՆ

Կար ժամանակ, երբ մէկը իր ընկերոջը գաղտնիք յայտնելու լինէր՝ ականջին կը շշնջար.

— Փողոցում անյարմար է, գնանք տուն՝ ասեմ։

Իսկ հիմա, ճիշդ դրա հակառակը՝ ասում է.

— Տանը անյարմար է, գնանք փողոց՝ ասեմ։

Ինչու՝ որովհետեւ մեր նորակառոյցները գաղտնիք չեն պահում այլեւս, տարածում ու ծրնծում են ողջ չէնքովը մէկ։

Ես ամուսնացած մարդ եմ։ Ունեմ կին, որին յաւիտենական սէր եմ ուխտել։

digitised by A.R.A.R.@

Ինչքան էլ որ չսիրեմ ներկայիս, ինչքան էլ որ զղջացած լինեմ նրան առնելուս համար, այնուամենայնիվ, որպէս օրինական ամուսին, պարտաւոր եմ իրիկուն տուն մտնելիս՝ նրա դէմ մի քանի կարեւոր մասերին «մեռնել» կամ «մատաղ» լինել։

Հապա, մի փորձիր այդ անել մեր նորակառոյցներում, տես ինչ խաթառակութիւն կը ստացուի։

Մանաւանդ, եթէ կնոջդ ականջը մի փոքր ծանր է լսում եւ պիտի պառաս։ Առաւօտեան ողջ չէնքի բնակիչները դատուած հաշուապահի ճչդտպահութեամբ քեզ մէկ-մէկ կը սկսեն թուել, թէ գիշերը քանի անգամ կնոջդ հոգուն «մատաղ» ես եղել, քանի անգամ «ջանին», «ծով աչքերին» եւայլն, եւայլն տեղերին։

Է, եթէ դու մի փոքր հասակաւոր մարդ ես, կամ քո լրջութեամբ ու ծանրախոհութեամբ աչքի ընկած մէկը քո չրջապատում կամ, ենթադրենք, ուսուցիչ՝ է՞նչ կը լինի վիճակդ։ Ի՞նչ պատասխան պիտի տաս քո աշակերտներին այդ օրը բարոյագիտութեան դասին։

Պիտի պապանձուես՝ կենաս։

Հիմա պատմեմ մի կոնկրետ դէպքի մասին։

Երկու տարուց աւելի է իմ բնակարանի վերին յարկում ապրում է մի կին՝ Արուսեակ անունով։

Շնորհակալ եմ իրենից, շատ ազնիւ կին է։ Մտնելով իմ գրութեան մէջ, տուն մտնելիս անմիջապէս հանում է իր կոկտան կօշիկները եւ հագնում թաղիքէ հողաթափեր։

Բայց երէկ իրիկուն յանկարծ կատաղեց։ Իր բարձրակրունկ կօշիկներով այնպէս սկսեց իր սենեակի մէկ անկիւնից միւսը վազել, այնպէս ուժգին յատակին խփել, որ ես ակամայ գրիչս վար դրի։ որովհետեւ մտքերս այդ անօրինակ աղմուկից սաստիկ՝ վայրի նապաստակների նման անմիջապէս անյայտացան։

Գրիչս վայր դրի եւ վերեւ բարձրացայ այն յոյսով, որ ինձ կը յաջողուի սիրով հետը խօսելով, աղաչելով, պաղատելով մի կերպ հանգստացնել նրան։ Նախ իր զայրոյթի պատճառն իմացայ, որը հետեւեալն էր։

Մի գեղին անցնելիք լուսանկարիչ տիկնոջը նկարելիս ինչպէս է եղել՝ նրա քիթը մի քիչ երկար է բռնել։ Այսպէս՝ մէկ-երկու սանտիմետրի սահմաններում։

Նրան մխիթարելու համար հաւաքում եմ բոլոր հնարաւոր փաստարկները եւ բերում եմ մէկ-մէկ.

— Տիկի՛ն, — ասում եմ, — եթէ դուք նկարուէիք ձմեռուայ ցրտին կամ սառցարանում՝ այդ սխալը չպիտի պատահէր. դուք նկարուել էք տաք եղանակին, երբ, ինչպէս գիտէք, մարմինները աստիճանից լայնանում ու երկարում են...

— Ո՛չ, — դոչում է կինը, առանց թոյլ տալու, որ խօսքս շարունակեմ, — այդ ֆիզիկական օրէնքը, — ասում է, — մեռաղներին է միակ յատուկ եւ ոչ իմ քթին։

Ու կանչում է աւելի բարձր, ոտները գետնին է զարկում աւելի ու աւելի ուժգին։

Ուրեմն այս մէկը չեղաւ։ Գեռոյ՝

— Տիկի՛ն, — ասում եմ, — այս լուսանկարը ձեր բնագիրը չէ, դա ձեր պատճէնն է. իսկ ձեր ամուսինը, ինչ խօսք, ձեզ սիրելիս օգտւում է բուն բնագրից եւ ոչ զանազան մարդկանց ձեռքով հանուած պատճէններից

digitised by A.R.A.R.@

կամ թարգմանութիւնից։ Էհ, ի՞նչ վնաս քթի մի երկու սանտիմ երկարութիւնից։

— Իսկ ինչո՞ւ չլինել հանրամատչելի։ Ամէ՞ն մարդ միջոց ունի բնագրից օգտուելու...

Այս էլ չեղաւ։

— Հիմա, տիկին, մի ուրիշ բան, — ասում եմ, — դուք ծանո՞թ էք, արդեօք, ձեր նկարչի անցեալին, գիտէ՞ք ով է այդ մարդը։ Գուցէ այդ թշուառականը մի նախկին ճոթամաճառ է եղել կառքեղէնի խանութում եւ թերաչափման պատճառով բանտարկուել վեց տարի եւ նորից բանտը չընկնելու սարսափից, հիմա, իր նոր աշխատանքում, կլիենտների քթերը մի փոքր... երկար է բռնում։ Եւ այդ՝ զգուշացնում ձեզ, սանտիմորիա գնալիս կամ վերադարձին կամենաք կշռուել՝ ձեր իսկական քաշն իմանալու համար՝ նայեցէք, որ կշռավարը որեւէ մթերային խանութի գործակատար եղած չլինի եւ թերակշռման համար դատապարտուած։ Այդպիսիները ձեր քաշը առնուազն մի փթով կ'աւելացնեն։ Համառօտ քթի էք ուզում ունենալ՝ նկարուեցէք նախկին գրողի մօտ, գրող, որ քննադատուել է իր ասելիքները ամփոփ երկարացնելու համար։

Այսպէս մի կերպ հանգստացրի տիկնոջը եւ անմիջապէս վար չտապեցի գործերս վերջացնելու։ Որովհետեւ գրականութիւնը կեանքի հայելին է եւ ոչ մի հայելի նրա քիթը փոքր չի ցոյց տայ...

1955 թ.

ՀԱՐԿԱԴՐՈՒԱԾ ՅԱՐՈՒԹԻՒՆ

Գիշերը երազիս մէջ Կոմիտասը յարութիւն էր առել։

Եւ ես չեմ մեղադրում։

Ով էլ լինէր նրա տեղ՝ այդպէս կը վարուէր։

Մեր որոշ կոմպոզիտորները, ախր, չատ համը հանեցին իրենց «ստեղծագործութիւններով»։ Ինչպէս «Աբիսողոմ Աղա»ի մէջ՝ տեղից վեր կացող բեռնակիրը «Ես ալ Ծաղկի փողոց թիւ 2 գիտեմ» ասելով խեղճ մարդու բեռները շալակից-տարաւ, այնպէս էլ մեր կոմպոզիտորների մօտ է. ամէն ոք «Ես էլ ստեղծագործել գիտեմ» ասելով, Կոմիտասի բոլոր գործերը շալակած տարան, անգամ չիմանալով Ծաղկի փողոցի տեղը...

Կոմիտասը եթէ մի փոքր էլ ուշանար, իր անունից էլ կը գրկուէր։

Օրինակ՝ Ինքեանն արդէն սկսել էր «Կոմիտաս-Ինքեան» կոչուել այն յոյսով, որ մի գեղեցիկ օր «Կոմիտաս»ից ազատուելով՝ միայն «Ինքեան» պիտի կոչուի։

Սա արդէն նշանակում է գլխովին բնաջնջել մարդուն։

Եւ այս բոլորը եղանակի՞ համար։

Զարմանում եմ. եղանակն ի՞նչ է, որ մեր կոմպոզիտորները այսօր իրար բերանից են խլելում։

digitised by A.R.A.R.@

Ես ընաւ երաժիշտ չեմ, բայց երբ երկու թաս անկում եմ, մի եկ տես ինչպիսի տարօրինակ ձայներ եմ հանում։

Ձայներ, որոնք ինձանից զատ ոչ մի արարած չի հանել իր օրում։

Պիտի ասէք երաժշտակա՞ն չեն. ի՞նչ անենք, 3a TO իմ սեփականն են։

Եթէ քեզանից գեղեցիկ մի տղամարդ, ասենք Պետրոս անունով, տուա-ջարկի իր դէմքը քոնի հետ փոխել՝ կը համաձայնե՞ս։

Ոչ։

Կամ գլուխ գլխի հետ փոխել։

Դարձեալ ոչ։ Ձեռ փոխի, որովհետեւ կը դադարիս այլեւս ասենք՝ Պօղոս լինելուց եւ կը դառնաս Պետրոս։

...Մինչդեռ երաժշտութեան մէջ բոլորն ուզում են Կոմիտաս լինել։

Այս՝ ի միջի այլոց։

Այժմ դառնանք դիշերուայ երազիս։

Հա։ Ուրեմն Կոմիտասը զայրացած վեր կացաւ գերեզմանից, միլի-ցիատուն մտաւ, միլիցիտի ու երկու սպառազէն միլիցիոնների հետ դուրս եկաւ։

Կոմպոզիտորները, որոնք «ստեղծագործական երեկոյ»ում միացեալ ե-լոյթի էին հաւաքուել՝ տեսնելով այս՝ սփրթնեցին։

— Ի՞նչ ես անում այստեղ, — ներս մտնելով հարցրեց Կոմիտասը կոմ-պոզիտորներից մէկին։

— Երգում եմ։

— Ի՞նչ։

— «Նուբար-Նուբար»։

— Դո՞ւ, — դարձաւ Կոմիտասը երկրորդ կոմպոզիտորին։

— Երգում եմ։

— Ի՞նչ։

— «Նուբար-Նուբար»։

— Դո՞ւ, — հարցրեց երրորդին։

— «Նուբար-Նուբար»։

— Դո՞ւ, — հարցրեց չորրորդին։

— «Նուբար-Նուբար»։

— Վա։ Բոլորդ էլ մեւնոյն «Նուբա՞ր»։ Մէկ «Նուբարով» երեկոյթ կը լինի՞։

— Մենք կէս «Նուբարով» էլ ենք երեկոյթ կազմակերպում, — ասաց մի կոմպոզիտոր։

— Լաւ, այդ ձեր գործն է, ի հարկէ, ես չեմ խառնւում, — ասաց Կո-միտասը ու դառնալով միլիցիային՝ խնդրեց սկսել։

Միլիցիան, պաշտօնական դիրք առնելով, յայտարարեց.

— Մեզ հասած լուրերի համաձայն, դուք իւրացնում էք այլոց ստեղ-ծագործութիւնները եւ երգում որպէս ձերը։ Առաջարկում եմ յօժար կամքով յանձնել այդպիսիները, այլապէս մանրակրկիտ խուզարկութիւն պիտի կա-տարեմ եւ ուրիշի ստեղծագործութիւն յայտնաբերելիս, յանցաւորը 10 տա-րով բաղաձայնութեան պիտի դատապարտեմ, 25 տարի՝ ձայնազրկութեան։

— Ոչ մի խուզարկութիւն թոյլ չենք տայ մեր երգերում, — յայտա-րարեցին կոմպոզիտորները։

— Այն ժամանակ «կրակի պատրա՛ստ», — գոռաց միլիցիան եւ երեք հրազէնի փողերն ուղղուեցին դէպի ապստամբները։

Դիմադրութիւնն ընկճուած էր։ Միլիցիան հաւաքեց բոլոր «ստեղծա-գործութիւնները» եւ տարաւ։

digitised by A.R.A.R.@

Այդ միջոցին չեմ յիշում ո՞ր կոմպոզիտորն էր, ձեռքը ծոցը տարաւ, «ախ էրեց, լացեց», որին մի այլ կոմպոզիտոր մխիթարեց.

— Ոչինչ, դարդ մի անի, սիրելիս, կը տանի, կը նայի, կոմիտասինը կը վերցնի, իսկ մնացեալները եւ կը վերադարձնի։

— Այնտեղ էլ ի՞նչ կը մնայ, որ վերադարձնի, — պատասխանեց կոմպոզիտորը, արցունքը սրբելով։

Կոմպոզիտոր Ա.-ն ժառեցաւ Բ.-ին.

— «Շողիկի պարը» տարա՞ն։

— Ո՞ր «Շողիկի պարը»։

— Այն, որ երկուքս միասին վերցրեցինք Կոմիտասից։

— Տարան։

— Ինձ էլ տարան։ Ափսոս։ Եթէ մէկն ու մէկկիս մնար, միասին եւլա կ'երթայինք։

— Իսկ քո «Լիճ» բալե՞տը։

— Նոյնպէս տարան։

— Ափսոս։ Ո՞նց պիտի անես առանց «Լճի»։

— Բոլորովին էլ հոգս չի։ Տանում են՝ տանեն, ոչինչ ինքնուրոյն չունէի մէջը, բոլորը սրանից-նրանից հաւաքած բաներ էին։

— Իսկ յայտնի՞ է, արդեօք, Կոմիտասի յարութիւնը քանի՞ օր է տեւելու։

— Յիսուսինը, պիտեմ, 40 օր տեւեց, բայց Կոմիտասինը յայտնի չէ։

— Իսկ եթէ այլեւս չմեռնի՞։

— Այդ դէպքում կորած ենք...

ԼԵՌ ԿԱՄՍԱՐ

digitised by A.R.A.R.@

Ա. ԱԼԻՔԵԱՆ

Բանաստեղծ եւ թարգմանիչ Աբրահամ Ալիքեան ծնած է 21 Մայիս 1928ին՝ Ալիքսանդրէպոլ։ Նախնական կրթութիւնը ստացած է ծննդավայրի «Նուպարեան» վարժարանին մէջ։ 1939ին ընտանիքին հետ գաղթած է Գէյրութ, 1946ին աւարտած է Գէյրութի «Հնչակ Փալանճեան» ճեմարանը եւ տարի մը ետք ներգաղթած է Խ. Հայաստան։ 1954ին աւարտած է Մոսկուայի Մաքսիմ Կորքիի անուան հիմնարկը եւ այդ թուականէն սկսեալ ժամ կը կազմէ վերոյիշեալ ուսումնարանի ուսուցչական կազմին՝ երբեւ դասախօս։

Ա. Ալիքեան հրատարակած է չորս տասը քերթողութիւններ, որոնց նշանաւորներն են՝ «Բարիյուսոյ երգանգան», «Լիմիրթ», «Նժդեհ» եւ «Արիւնամաղ»։ Ան Ֆրանսերէնէ թարգմանած է եօթը անուն բանաստեղծական եւ արձակ հատորներ։

ՓՈԹՈՐԻԿՆԵՐԻՆ ԺԱՄԱԴԻՐ

Լուսիային՝ քնքշագին սիրով

Եկո՛ւր...
Հենց որ ջրերը յուզուին, հենց որ
ծովը փոթորկի...

(«Հին աստուածներ»)

Ա.

Ու Ռոդենի «Սիւնարձանի» նման կէտ
Մեծ քաղաքի ձեզուններէ բերծերի տակ՝
Քանի՞ անգամ ես նշացի՝ «Սեւա՛ն, կը գա՞մ»,
Քանի՞ անգամ ձիչս մնաց հարմի կտակ։

Սակայն սեւ անդարձօրէն հեռու նորէն
Մեծ քաղաքից ու նիչերիս յիշատակից՝
Պառկել եմ ես սեւանափին, ինչպէս ոստրէն,
Որի մէջ ծովն է պղպջաքուռ անդարագիծ։

digitised by A.R.A.R.@

Սեւ բաղեր են պոկւում իրենց տատան տարմից,
Սատարելով, որ իմ յոյզերը երամեն.
Աւազի պէս թափանցում են ինձ մի առ մի
Ալիք ու հով եւ փրփուրի հեւք ու համբոյր...

— Օ՜, դա՛ր, օ՜, դա՛ր, հոգիդ սիրես՝ մի քիչ հոգի՜,
Մի քիչ հոգի դիր թաւալքիդ մէջ անայլայլ,
Արա այնպէս, որ մարդն անհետ չցամաքի
Քո յեսանի վրայ իբրեւ ձէթի կայլակ:

Տո՛ւր, տո՛ւր նրան անիւներիդ միջից մի պահ
Ընդնշմարել գէթ պտրտուող շուքն էլ մաշու,
Եւ տուն դարձին՝ տո՛ւր, մի կոհակ թող սրսփայ
Ու ցատկոտի իր դէմ, ինչպէս ծանօթ մի շուն:

Հիւլէական սպառնալիքդ բովանդակ
Նրա սրտում արա մանկան նախազգացում,
Որ տարիներ յետոյ, դարձած մի հո՜վ անտառ,
Ամէն թփում նախկին մանկան դէմքն է բացում:

Ի՜նչ փոյթ պլացքդ սրընթաց երկրից երթը,
Եթէ նախրդ չի խնայի նախրող հոգուն,
Եթէ, արկուն պարսատիկի պէս, երկինքներ
Անաբեկեն թռչունների թեւթափն ու չուն:

Ի՜նչ փոյթ յոյսդ սեւանածին, թէ Գեղամայ
Լճի նաւ չոր յատակում է ճաճանչում,
Ի՜նչ փոյթ, որ կայ այգում մրգի շքե՛ղ ամառ,
Երբ իշխանն է երախաթաց մեռնում անջուր...

Օ՜, դա՛ր, օ՜, դա՛ր, կշեռքը քո թանկի արդար,
Թող ճծարանները քո լինեն զայգ խորանարդ՝
Չի՜մ մոռանայ գիտութեանդ ներքող կարդալ,
Մարդու հոգուն ներքող կարդալ մի՛ մոռանայ:

Հորթ է գալիք ամէն եղեմ ու երախտիք,
Եւ ամէն գիւտ մի Եայէն է անիծաթեր,
Եթէ մարդն է վտարուելու այդ դրախտից,
Զոհուելու է հոգի՛ն նրա, ինչպէս Աբէլ...

Բ.

Սէ՛ր իմ՝ հրա՜շք,
դարիւ-դարիւ
Գետակներ են բոլոր տարին վազում Սեւան:
Օ՜, ինչպէ՜ս են իրենց հունին հաւատարիմ
Զրերն այս հին՝ ճիշդ ինձ նման, ճիշդ քե՛զ նման:

digitised by A.R.A.R.@

Սակայն մի՞թէ մտացածին
Ցնորքնե՛ր են ու տրոփներ սովորութեան
Վերապրումներն իմ քեզ, շուրջդ, միշտ քո անձին:
Գետ ու լճի արդեօք դաշի՞նքը լռելեայն:

«Գրքայինն են արդէն հիմա
Սէրն ու բոլոր սիրոյ երգերն, ինչպէս Սափոն:
Կատարում է մի ռոսկալի Հիրոսիմա
Հոգիներում, ուր սէրն հիւանդ է սարսափով»:

Դու լսո՞ւմ ես, լսո՞ւմ ես դու:
Ձա՞յնն է դարի, թէ ճչիւնը մի ռորոտի:
Գուցէ իրօք դեռ մեզ, ինչպէս մի համեստ տուն,
Օրօրում են հովուերգական հով ու բարդի:

Գուցէ իրօք մե՛նք էլ, մե՛նք էլ
Հոգոցներ ենք մի վաղեմի՛ գրքից թռած,
Որ դիպուածի շունչն է անշուշտ փոշեգրկել,
Ինչպէս անյուշ դամբարանում պեղուած դրամ:

Սակայն ի՞նչ փոյթ: Թող, որ հեռուից
Հաւաքեմ քո դէմքից ստուերը կարօտի,
Հանեմ շուրջդ ժպիտ ու շող, որ քեզ ներքուի
Ամէ՛ն քմայք՝ ամէն եմայք օտարոտի:

Թող, որ այս հին, հի՛ն քերթուածով
Ազօթեմ ես մեզ ու մութի մէջ անփարատ,
Որ չտեսնեն խանդաղատանքս բրածոյ,
Որ չտեսնես, թէ ինչպէ՛ս եմ դողում վրադ...

ԲԱՌԱՀԱՐՀ

Օ՛, թարմութի՛ւն,
շնչուած բարձունքներին բառեղէն...

Ես՝ բառերի անդրածին, ես՝ բառերի բնակիչ,
Ինչպէս քամին, որ ունի կապոյտ եզր ու սահման:
Ամենատեղ անձրեւներ մերթ դառնում են ինձ դակիչ,
Բայց ճիրեխս մէջ իսկ չունեմ արեւից զատ հարեւան:

Նայեցէ՛ք իմ դռնից ներս, կառչած ներա բռնակին,
Տեսէ՛ք, տեսէ՛ք, թէ ինչքա՞ն հուզեռ կայ ու տողան.
Ամէնուրեք հեզ բառեր որպէս մրջիւն-բեռնակիր,
Ինձնից մեկնած՝ դէպի ինձ կրում են ի՛նձ միմիայն:

digitised by A.R.A.R.@

Գեղօրի պէս կախել եմ բարաւորիս բառ-յուռուքէ
Եւ թագել եմ մաղթանքի բառ-համայիլ իմ սիրին,
Որ թժժանքի զօրութեամբ իմ երկիւղն են պարուրում:
Ես՝ աւազի մէջ որուն, սահմանններիս վերծանիչ,
Լուռ երազում եմ, ինչպէս ճամբի եզրին եղեւին,
Եւ մերթ բառեր արձակում իբրեւ կապոյտ դեղձանիկ:

●

Ես՝ ափսորեալ բառերի, ինչպէս իմ տան ու անուան,
Որ գթառատն է բոլոր անուններից կարեկից:
Դատակնիքն այս իբրեւ աստուածառաք պատուիրան
Խեցու վրայ կոպերիս փորագրել է մի փրկիչ:

Եւ օրհնում եմ, փառաւորում, բարեբանում թիւր բերան
Բառի դէմքով յայտնուող տարագրութիւն ու կսկիծ,
Ուր մերթ չուող լօրի պէս մինչեւ մահս բնական
Գտնում եմ մահ տաքաժամ անգամ անկեղծ մի սիւրից:

Պիտի ապրե՛մ իմ բախտի խեցեվնիքը, ինչպէս
Աթենացի զօրապետ Արիստիդեսը Արդար,
Որի խղճից խոհերն իսկ չեն կարգել հեծէ ու ողբեր:

Պիտի ապրե՛մ փրկութեան փառքն այն յոյսով
մակարդած,
Թէ դիպուածի մի աստուած, որպէս արմատ ու կորիզ,
Ինձ աւելի կը ուզի ընթերքի մէջ ափսորի:

ԱԲՐԱՀԱՄ ԱԼԻԳԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Ալ. ԱՐԱՔՍՄԱՆԵԱՆ

Արձակագիր, թատերագիր, թատերագէտ, բեմագիր եւ լրագրող Ալիքսանդր Արաքսմանեան ծնած է 3 Յունիս 1911ին՝ Ալիքսանդրապոլ (այժմ՝ Լենինական)։ Ուսումը ստացած է Թիֆլիսի Սուլիսիանի տեսական վարժարանին մէջ եւ փոքր տարիքէն չփոյթ ունեցած է թատրոնի աշխարհին հետ։ Շրջան մը ուսուցչութեամբ զբաղելէ ետք, 1943ին փոխադրուած է Երեւան եւ աշխատած Գ. Սունդուկեանի անուան թատրոնին մէջ, ապա՝ «Հայֆիլմ» օրիւռոյին եւ «Սովետական Հայաստան» թերթին մէջ։ 1968-73 ժամանակամիջոցին վարած է «Էկրան» հանդէսի խմբագիրի պաշտօնը։

1937էն ի վեր, հայրենի բեմերու վրայ ներկայացուած են Ալ. Արաքսմանեանի աւելի քան 30 թատերախաղերը։ Ան նաեւ հրատարակած է չուրջ 20 հատորներ, որոնց նշանաւորներն են՝ «Ճանապարհ դէպի կամիշլի» (վէպ) եւ «Երկուքմէ», (թատերախաղերու ժողովածու)։

Ալ. Արաքսմանեանի գործերէն ոմանք թարգմանուած են ռուսերէն եւ այլ լեզուներու։

Մահացաւ Երեւանի մէջ։

ԵՐԿՈՒՆՔ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԱՐԱՐՈՒՍԻ

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԴՊՐԱՆՈՑԻ ԱՐՏԱՔԻՆ ՄԱՍԸ։

(Ծառագարդ գաւիթ, պատշգամբ։ Ամառային պայծառ օր է։ Լիակատար անդորրութիւն։ Գաւիթում ներսում են Մեսրոպի աշակերտները լուռ ու մտասոյզ։ Կորիւնը պատշգամբում ճոտած գրում է։ Պատշգամբի սիւներից մէկին փակցուած է երկաթագիր այբուբենը)։

ՎԱՐԴԱՆ (մօտեցաւ Կորիւնին)։— *Կորիւն ժառանգագիր, ի՞նչ գրի առաք դարձեալ։*

ԿՈՐԻՒՆ (կարդաց)— *«...Մեծ Հայաստանի Վռամշապուհ արքայի թագաւորութեան հինգերորդ տարում վարդապետ Մեսրոպ Մաշտոցը ետ դարձաւ Հայոց Միջագետքից, ուր եւ ոքանչելիագործ խոնարհութեամբ նշանակեց, անուանեց եւ գտաւորեց հայոց նշանագրերը։ Ե-*

digitised by A.R.A.R.@

բասթ գետի ափին վարդապետին դիմաւորեցին թագաւորը, կաթողիկոսն հայոց, նախարարագունդ աւագանու բազմութիւնը, թագաւորական քաղաքի ու գիւղերի ժողովուրդը։ Վաղարշապատում տօնական ուրախութիւն էր...»։

ՎԱՐԴԱՆ — Իրաւ... Ի՞նչ ուրախութիւն էր... Լաւ ես գրել...

(Լսուեց ձիերի դոփիւն)։

ՅՈՎՍԷՓ — Պարոպի մօտ ձիաւորներ կանգնեցին։
ՎԱՐԴԱՆ — Ովքե՞ր են։
ԿՈՐԻՒՆ — ԵՔԷ աչքս չի խաբում, կամսարական իշխանն է։
ՎԱՐԴԱՆ — Ասում են՝ ապանել է իշխանուհուն։
ԿՈՐԻՒՆ — Բայց ինչո՞ւ է եկել։

(Բոլորը, բացի Կորիւնից, հեռացան։ Գաւիթ մտաւ Կամսարականը իր երկու զաւակների՝ ազիկայ եւ որդու հետ։ Անհամարձակ բարձրացաւ պատշգամբ։ Մերացել է. կերպարանափոխուել)։

ԿԱՄՍԱՐԱԿԱՆ — Դու Կորիւնը չէ՞ս։
ԿՈՐԻՒՆ — Ես եմ, իշխան։
ԿԱՄՍԱՐԱԿԱՆ — Ցիլեցի... (Դարձաւ պատանիներին)։ Սա Մեսրոպ վարդապետի աշակերտն է, զաւակներս, Կորիւնը։ Սա էլ հայոց նշանագրերն են երեւի...
ԿՈՐԻՒՆ — Այո, իշխան։
ԿԱՄՍԱՐԱԿԱՆ — Ինչ խաղաղ է այստեղ։

(Եկաւ Մեսրոպը։ Լուռ իրար ողջունեցին)։

ՄԵՍՐՈՊ — Գնա՛, Կորիւն։

(Կորիւնը հեռացաւ)։

ԿԱՄՍԱՐԱԿԱՆ — Ներում չեմ հայցում, անարժան եմ։ Գոնէ զաւակներիս արժան համարիր, ուսուցանիր սրանց։
ՄԵՍՐՈՊ — Մօտ եկէք, պատանեակներ։ (Նրանք մօտեցան։ Մէկին ճստեցրեց ծնկին)։ Մեր աշխարհի բոլոր զաւակները պարտաւոր են իրենց մայրենի լեզուն սովորել։ Ուստրիդ աչքերը քոնը չեն, իշխան։ Ո՞ւմ աչքերն են...
ԿԱՄՍԱՐԱԿԱՆ — Դու ինքդ տեսնում ես։
ՄԵՍՐՈՊ — Գնացէք զաւիթ, զաւակներս, ճեմեցէք։ Այնտեղ աղբիւր կայ սառնորակ ջրով, երեւի չոգից ծարաւած լինէք։

(Պատանիները մօտեցան իրենց հօրը)։

ԿԱՄՍԱՐԱԿԱՆ (համբուրեց նրանց)։ — Նուիրուած եղէք ձեր վարդապետին։ Այն, ինչ ուսուցանել են ձեր հայրն ու մայրը, յանձնէք մոռացման։ Ճշմարտութիւնն այստեղ է։ Գնացէք։
ՄԵՍՐՈՊ — Կորիւն... Տար պատանեակներին, ցոյց տուր մեր պարտէզը։

(Կորիւնը նրանց տարաւ)։

digitised by A.R.A.R.©

ԿԱՄՍԱՐԱԿԱՆ (ծնկի իջնելով Մեսրոպի առջեւ).— Ներիր ինձ, վարդապետ, թողութիւն արա։

ՄԵՍՐՈՊ.— Ես ոչինչ չունեմ քո հանդէպ, իշխան։ Տես, այս նորագիւտ տառերը...։ Սրանք ծնունդ առան այն կոյսի արեամբ՝ Սաթենիկի։ Եւ բարի կը մնայ նրա յիշատակը, օրինակ՝ դալոց հայ օրիորդներին։

ԿԱՄՍԱՐԱԿԱՆ.— Բարի յիշատակ...

ՄԵՍՐՈՊ.— Վերադարձիր խաղաղութեամբ, իշխան։

ԿԱՄՍԱՐԱԿԱՆ.— Վերադառնա՞մ...։ Ոչ։ Լսիր ինձ, Մեսրոպ։ Այսօր կամ վաղը քեզ այցելելու է նենգ Առաւանը։ Շողոքորթ լեզուով նա քեզ Տիգրան է հրաւիրելու։ Դաւադրութիւն է, չհամաձայնուես։

ՄԵՍՐՈՊ.— Շնորհակալ եմ, իշխան։

ԿԱՄՍԱՐԱԿԱՆ.— Զգիտեմ, ո՞րն անեմ, որ թեթեւանայ յանցաւոր հոգիս։

ՄԵՍՐՈՊ.— Նուիրաբերուիր բարի գործերի եւ մահն էլ կեանք կը դառնայ։

ԿԱՄՍԱՐԱԿԱՆ.— Թոյլ տուր, վարդապետ, յանախ այցի գալ քեզ։ Ո՛չ, չկարծես զաւակներիս տեսնելու հոգսից դրդուած։ Այսուհետեւ քո յարկի տակ եմ ոտքդում գտնելու։

ՄԵՍՐՈՊ.— Իմ դուռը բոլորի առաջ բաց է, իշխան։ Գնա՛ պարտէզ, զաւակներիդ մօտ։ Այսօր իմ հիւրն ես, իշխան։ (Կամսարականը մտազբաղ հեռացաւ։ Մտաւ Կորիւնը)։ Կորի՞ւն, աչքերիդ արտասուք եմ տեսնում։

ԿՈՐԻՒՆ.— Միշտ աչքիս առջեւ է այն վազանցուկ երազը...

ՄԵՍՐՈՊ.— Քո հասակին ես էլ կորցրի սիրտս ջերմացնող մի կրակ։ Ինչպէս սուրս, այնպէս էլ սիրտս մտաւ պատեանի մէջ։

(Ներս եկաւ Ցովսէփը)։

ՑՈՎՍԷՓ.— Վեհն է գալիս։

(Ներս մտաւ Սահակ Պարթեւը։ Ողջագուրուեց Մեսրոպի հետ)։

ՍԱՀԱԿ.— Մեսրոպ, ցնծութիւն եմ բերել։ Պատրաստուիր մեկնել Բիւզանդիա։

ՄԵՍՐՈՊ.— Ի՞նչ...

ՍԱՀԱԿ.— Երկու թուղթ եմ ստացել Թէոդորոս կայսրից եւ եպիսկոպոս Ատիկոսից, որպէս պատասխան իմ թղթերի։ Իրաւունք են տուել իրենց կողմերի հայերին գրել ու կարդալ, նաեւ ուսանել մեր նշանագրերով, որ ժամասացութիւնը լինի հայերէն...

ՄԵՍՐՈՊ.— Ուրեմն այլեւս Բիւզանդիոյ հայերն էլ փրկուեցին օտարանալուց։ Ամբողջ երկիրը ոտի տակ կը տամ, դպրոցներ կը բանամ, վարդապետներ կը կարգեմ։

ՍԱՀԱԿ.— Վարդան Թոռանս էլ շնորհ են արել ստրատելատ դարձնել։

ՄԵՍՐՈՊ (դիմաց խմբուած աշակերտներին).— Լսեցի՞ք, տղայք։ Այսուհետեւ ձեզանից ամէն մէկը մի վարդապետ է։ Պատրաստութիւն տեսէք ուղեւորելու։

(Աշակերտները հեռացան)։

ՍԱՀԱԿ.— Բայց տրտմութիւնս դարձեալ չի անցնում, Մեսրոպ։ Վռամշա-

digitised by A.R.A.R.@

պուհի պահպանած խաղաղութիւնը երկար չի տեւի։ Որչափ ամրանանք, այնքան վտանգւում է մեր գոյութիւնը։ Խրուել ենք երկու աշխարհակալութիւնների միջեւ։ Որի՞ հզօրութեանն ապաւինենք ուրեմն, որի՞ հովանու տակ մտնենք։ Այլեւս Պարսկաստանը քիչ կը համարի կարգել մեզ վրայ մի վերակացու։ Մէկ օր էլ գահընկէց կ'անի Վռամշապուհին ու կը հաստատի մարզպանութիւն...։ Վա՜յ մեզ այն ժամ, վա՜յ մեզ...

ՄԵՍՐՈՊ — Իսկ ես ահ չունեմ այլեւս...։ Ահ չունեմ, սրբազնասուրբ հայր։ Մենք ստեղծեցինք մեր դիրը, մեր դպրութիւնը։ Այսօր կը կործանուի ամբութիւնը, վաղը նորից կը յառնի, կը խեղդեն պտուղը, նորից ծիլ կ'արձակի, այդպէս յաւիտեան՝ քանի ի գոյ է ժողովուրդը, նրա ոգին, նրա զօրաւոր բանականութիւնը։ Ուրեմն ինչո՞ւ ողբալ։ Այլեւս բաւ է։ Ապաւինենք մեր սեփական հզօրաւոր հզօրութեանը, մեր ժողովրդին։ Ահա մեր ապագայ վարդապետները — Կորիւնը, Վարդանը, Եղնիկը, Մովսէսը, Եղիշէն, Մուշէն...։ Նրանք վառ կը պահեն հայոց ասն կրակը։ Այս է հշմարտութիւնը։

ՍԱՀԱԿ — Ո՜հ, Մեսրոպ, կ'ուզէի, որ կանխատեսութիւնդ յաւիտենական նեամի նման պլանար դարերի մէջ։

(Գալիս է Վահրիճը)։

ՎԱՀՐԻՃ — Մեսրո՜պ վարդապետ, Մեսրո՜պ վարդապետ...

ՄԵՍՐՈՊ — Ազնիւ Վահրիճ, այս ի՞նչ է, փոխանակ սարդը վրաց ոստայն գործի, կորել ես փոշու մէջ։

ՎԱՀՐԻՃ — Առաւանը քեզ այցի է գալիս... Իր արքայից թուղթ է բերել, որ երթաս Տիզբոն ու աշակերտներիդ էլ հետդ տանես։

ՄԵՍՐՈՊ — Ուրեմն կ'երթանք։

ՎԱՀՐԻՃ — Ո՛չ, Աստուա՛ծ սիրես։ Մեր թագաւորն է ինձ ուղարկել, որ ասեմ քեզ մի հնար գտնես, չզայրացնես Առաւանին, բայց եւ խօսք չտաս Տիզբոն երթալու։

ՄԵՍՐՈՊ — Այլեւս հնազանդութեան լեզուով չպիտի խօսեմ։

ՍԱՀԱԿ — Ինչպէ՞ս, վերակացուին հիւրասիրութեամբ չե՞ս մեծարելու։

ՄԵՍՐՈՊ — Ո՛չ, այլեւս։

ՍԱՀԱԿ — Մեսրո՜պ...

ՄԵՍՐՈՊ — Նենդ ու օտար վերակացուին պիտի հասկացնենք, որ դայեակի կարիք չունենք։ Վարդա՛ն... (Եկաւ Վարդանը)։ Վարդան, գաւիթում սրամարժութիւն սկսէք։ Երբ Առաւանը մանի, իբրեւ անտեղեակ նրա դալստեան՝ շարունակեցէք ձեր սրախաղը։

ՎԱՐԴԱՆ — Կայծակ կ'արձակեն մեր սրերը։

ՄԵՍՐՈՊ — Բեր իմ սուրը, որ նուիրել էր Շաբիթ իշխանը։ Եթէ ժանգոտուել է, վա՛յ ինձ։

(Վարդանը գնաց)։

ՍԱՀԱԿ — Մթոգդ ի՞նչ է, Մեսրոպ։

ՎԱՀՐԻՃ — Թող նրան, սրբազնասուրբ հայր։ Չե՞ս տեսնում, որ երիտասարդի աւիւն է առել, կրակ է ցայտում նրա աչքերից եւ նրան հիմա կը սազէր զօրավարի ասպար։

digitised by A.R.A.R.@

ՍԱՀԱԿ.— Վերջապէս ի՞նչ լեզուով պիտի խօսես այսօր, Մեսրոպ։
ՄԵՍՐՈՊ.— Արժանապատուութեան՝ հայոց լեզուով։
ՍԱՀԱԿ.— Ես չեմ հեռանայ, որ սառը ջուր դառնամ անպատեհ կրքիդ։

(Վարդանը վերադարձաւ)։

ՎԱՐԴԱՆ.— Ահա սուրդ, վարդապետ։ Ես նոր փորձեցի։ Հարուածից այնպէս կայծեր արձակեց, որ քիչ մնաց երեսս խանձէր։
ՄԵՍՐՈՊ (սուրը ընդունեց, սեղմեց կրծքին).— Սո՛ւրս... Հեռանանք, վեհափառ։

(Բոլորը հեռացան։ Ներս մտաւ Առաւանը թիկնապահներով։ Զարմացած նայեց սրավարժութեան կողմը, ապա բարձրացաւ պատշգամը, որտեղ տեսաւ հայոց այրուրենը)։
ԱՌԱՒԱՆ.— Ռազմական տաղտուարի առջե՞ւ եմ, թէ՞ վարդապետի խաղաղ կացարանում։ Եւ ինչո՞ւ չեն դիմաւորում հարկ ու պատշաճ։ Թէ՞ մտնողը Առաւանը չէր՝ Զիկի տոհմից, հայոց աշխարհի վերակացուն եւ ապագայ... մարզպանը։

(Մեսրոպը վերադարձաւ)։

ՄԵՍՐՈՊ.— Երբէք Առաւանը չէր այցելել իմ կացարանը։
ԱՌԱՒԱՆ.— Արքայից-արքայի կամքն է, որ քո աշակերտներով այցելես Տիգրոն։ (Մեկնեց հրաւիրագիրը։ Մեսրոպը վերցրեց, բայց չկարդաց)։
ՄԵՍՐՈՊ.— Որպիսի՜ շնորհ անապատելի։ Ուրախ եմ հրաւէրին։
ԱՌԱՒԱՆ.— Այս սրերի շաչը խանգարում է մեր քաղցը զբոյցը։
ՄԵՍՐՈՊ.— Հակառակը, խմաստ է տալիս։
ԱՌԱՒԱՆ.— Ես կ'ուզէի այստեղ ձեր զպրութեան ձայնը լսել եւ ոչ մարտակոչ։
ՎԱՀՐԻՃ (որ ներս էր եկել).— Տէր Առաւան, բնաւ թող չխաբեն ականջներդ...։ Մեսրոպի աշակերտները հանգստի ժամին այսպէս... խաղում եմ։
ԱՌԱՒԱՆ.— Բաղուկն ամրացնում են թշնամեաց ընդդէմ։ Փառք Ահուրա-Մազդային եւ մեր արքային, ձեր հողի վրայ կռիւ չկայ։
ՄԵՍՐՈՊ (հայեացքը սրավարժութեան կողմը).— Կրակ են կարել, սրերը փայլատակում են, խանձում սերեւ ու ճիւղեր։ Հա՛յ քաջեր, քաջե՛ր...
ԱՌԱՒԱՆ.— Ո՞վ է այն պատանին, որ բոլորից շատ է իրեն մոռացել։
ՎԱՀՐԻՃ.— Սահակ Գարթեւի թոռն է, Վարդանիկը...
ՄԵՍՐՈՊ.— Վարդան Մամիկոնեանը...
ԱՌԱՒԱՆ.— Իսկապէս, քաջ է երեւում, հինգ հոգու դէմ մենակ է կռւում։ Երեւի սրերը սուր չեն։
ՄԵՍՐՈՊ.— Այնքան սուր են, որ զինուորին պատիւ կը բերեն։
ԱՌԱՒԱՆ.— Այդպիսի սրով Տիգրոնի երեխաները հաւեր են մորթում։ (Նրա ծիծաղին միացան թիկնապահները)։
ՄԵՍՐՈՊ.— Ի զուր, Առաւան, ուրախ ես ձեւանում վատ խաղի ժամին։
ԱՌԱՒԱՆ.— Խաղը վատ չէ, եթէ խաղ է։ Իսկ եթէ խաղ է վատի համար,

digitised by A.R.A.R.@

ուրեմն վատ է, որ խաղ չէ։ Սակայն անցնենք հրաւէրին։ Ե՞րբ ես հաճելու շուքով ճանապարհ ընկնելու գէպի Տիզբոն։

ՄԵՍՐՈՊ.— Եթէ արքայից-արքան խոստանայ, որ ես Տիզբոնում կը տեսնեմ Արշակ արքային, Վասակ Մամիկոնեանին, Խոսրով արքային, Գարգեւ Ամատունուն, Գաղավոն սպարապետին, բոլորին, որոնք տեսել են Տիզբոնը, ձեր արքաների ողորմած հիւրասիրութիւնը եւ այլեւս չեն վերադարձել հայրենի հողը, ինչո՞ւ չէ, այս պայմանով կ'այցելեմ ե՛ս էլ։

ԱՌԱՒԱՆ.— Այդպէս ուրեմն, անարգում ես հրաւէրը։ Ներիր, վարդապետ, եթէ քեզ բռնութեամբ տանենք։

ՄԵՍՐՈՊ.— Սոխպուած պիտի պաշտպանուեմ։

ԱՌԱՒԱՆ.— Ֆո թոթովարան նշանագրերո՞վ։

ՄԵՍՐՈՊ.— Ո՛չ։ (Հանեց շապիկը՝ տակը ոսմիկի շոր է։ Դուրս քաշեց սուրը)։

ԱՌԱՒԱՆ.— Սուր վարդապետի ձեռքի՞ն։

ՎԱՀԻՃ.— Մի զարմանայ, աղնիւ Առաւան։ Մեսրոպը ռազմիկ է եղել եւ շատ վարժ է սրամարտի մէջ։

ԱՌԱՒԱՆ.— Վա՞րժ է, ասում ես։ Հիմա կը փորձենք։ (Դուրս քաշեց թուրը)։ Ես զարմանում եմ, թէ ինչո՞ւ ձեռքիդ սուր ունես, երբ սուր բռնելու համար ձեռք չունես։ (Թիկնապահներին)։ Ոչ ոք չշարժուի։

ՄԵՍՐՈՊ.— Սկսենք, ուրեմն։

ԱՌԱՒԱՆ.— Ես թոյլ չեմ տայ, որ պարտութիւնից նսեմանաս աշակերտներիդ առաջ. կեանքիդ վերջ կը տամ մի ակնթարթում։ (Մենամարտում են փոփոխական յաջողութեամբ։ Առաւանն իսկոյն զգաց իր մոլորութիւնը։ Դուրս եկան աշակերտները)։ Ես իմ արքային կը տանեմ կաչիդ։

ՄԵՍՐՈՊ.— Իսկ ես քեզ կենդանի կը թողնեմ, որ հասնես արքայիդ՝ պարտութեան բերը քթիդդ կախուած։

(Մի պահ Առաւանը նեղեց Մեսրոպին)։

ԱՌԱՒԱՆ (ոգեւորուած).— Երդւում եմ կրակով, այսօր այստեղ չի մթնելու, կրակ եմ վառելու մինչեւ լուսաբաց։

ՎԱՀԻՃ.— Բոլորիդ ճարպը հերիք չի անի, Աստուած է վկայ, կրակը չի դիմանայ։

ՄԵՍՐՈՊ.— Առաւանը չտապեց...։ Իրաւունք ունի, ես այնչափ երկար սուրս չեմ ճօճում։ (Անսպասելի մղումով ետուեց Առաւանի վրայ, հարուածեց թրին ու ցած նետեց։ Ցարձակման ուժից Առաւանն ընկաւ ծնկի)։

ԱՌԱՒԱՆ.— Ձեռ սպանի ինձ, եթէ չես ուզում արքայից-արքայի ցասումը սահման չունենայ։

(Դուրս եկաւ Սահակը)։

ՍԱՀԱԿ.— Մեսրո՛պ... Զգաստացիր։

ՎԱՀԻՃ.— Զարթէ, որ սրա արիւնը պղծի մեր օրհնեալ հողը։

ՄԵՍՐՈՊ.— Դեռ՝, Առաւան, բռնութեան գաւարկ տոպրակը շալակիդ առած։

digitised by A.R.A.R.@

ԱՌԱՒԱՆ.— Տոպրակը ծակ չէ, մի բան կը լցնեմ։ (Թիկնապահներին)։ Եկէք իմ յետեւից (Գնաց)։

ՍԱՀԱԿ.— Դու զօրական պիտի մնայիր, Մեսրոպ։

ՄԵՍՐՈՊ.— Վերջացաւ... Բազուկս տկար է, նա իր ամբողջ ուժը տուել է մտքիս ու հոգուս։ Այլեւս այս սուրն ինձ պիտանի չէ։ Կեանքիս նրման փայլատակից վերջին անգամ։ Վարդան ստրատելատ...

ՎԱՐԴԱՆ.— Այստեղ եմ, վարդապետ։

ՄԵՍՐՈՊ.— Մօտեցիր, Վարդան։ Վարդան Մամիկոնեան, քեզ եմ տալիս այս սուրը, պահպանիր նրան։

ՎԱՐԴԱՆ.— Կը պահպանեմ, վարդապետ, աչքիս լոյսի պէս։

ՍԱՀԱԿ.— Ծանր ժամանակներում պիտի ապրես, Թոռնիկս։ Տուր համբուրեմ ճակատդ, որ կնճռոտուելու է հայրենեաց հոգսից։

ՄԵՍՐՈՊ.— Տղայք, ինչպէս տեսնում էք, իմ ու վեհի կեանքը յաւիտենական չէ։ Հազար մի դիպուածով կարող ենք հեռանալ աշխարհից։ Կարող կը լինէ՞ք ամուր պահել այն, ինչ Սահակ Պարթեւն ու ես արարեցինք ու հաստատեցինք տառապանքով, կը պահէ՞ք գործի յիշատակը։ Լոկ վստահեցրէք, որ վարդապետների ժամը՝ վարդապետութեան մահը չէ եւ մենք հանգիստ կը լինենք։ (Նա եւ Սահակը բռնեցին երկաթագիր այրուբենը)։ Ահա երդուեցէք այս սրբութիւններով։

ԲՈԼՈՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ.— Երդւո՛ւմ ենք։

ՄԵՍՐՈՊ.— Երդուեցէք այս նշանագրերով աշխարհը ամբողջ մեր աշխարհը բերել. փիլիսոփայութիւն, գիտութիւն, դպրութիւն, արուեստ, ամէնը գրի առնել ու յանձնել մեր ժողովրդին։ Երդուեցէ՛ք։

ԲՈԼՈՐԸ.— Երդւո՛ւմ ենք։

ՍԱՀԱԿ.— Ի՛նչ փոքրիկներ էլ անցնեն մեր աշխարհով, ի՛նչ արհաւիրքներ էլ կախուեն՝ արբութեամբ կը պահպանէք մեր դպրութեան ծիլերը։ Երդուեցէ՛ք։

ԲՈԼՈՐԸ.— Երդւո՛ւմ ենք։

ՄԵՍՐՈՊ.— Արդ, գրի առնենք առաջին երգը, որ յանձնենք գալոց սերունդներին...

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՐԱՔՍՄԱՆԵԱՆ

1943–1945, Լենինական

ՎԵՐՋ

digitised by A.R.A.R.@

Ա. ԴԱՐԲՆԻ

Առակագիր, բանաստեղծ եւ թատերագիր Արշաւիր Դարբնի (բուն անունով՝ Արշաւիր Մնացականեան) ծնած է 16 Յունուար 1910ին՝ Գեղարշէն գիւղը (այժմ՝ ազրբէջանական Խանլարի շրջան)։ Աւարտած է Բաքուի Յովհաննէս Թումանեանի անուան միջնակարգ վարժարանը, ապա՝ Մոսկուայի շարժապատկերի հիմնարկի գրականագիտական բաժանմունքը։ Երկար տարիներ աշխատած է Բաքուի Հայկական դրամատիկական թատրոնին մէջ՝ իբրեւ գրական գեղարուեստական բաժինի վարիչ։ 1948ին հաստատուած է Երեւան եւ պաշտօնավարած՝ «Սովետական գրականութիւն» ամսագրի, «Հայֆիլմ» սթիւտիոյի եւ շարժապատկերի ու գրողներու միութիւններուն մէջ։

Արշաւիր Դարբնի գրած է հինգ թատերախաղեր եւ հրատարակած 15 անուն գիրքեր, որոնց նշանաւորներն են՝ «Երբ բացւում է մանուշակը» (թատերախաղ), «Առակներ» եւ «Ազգուէրը դրախտում»։

Ա. Դարբնիի գործերէն սմանք թարգմանուած են ռուսերէն եւ այլ լեզուներու։

Մահացաւ Երեւանի մէջ։

ՔԾՆՈՂԻ ԿՈՇՏՈՒԿԸ

Հիմնարկում մէկը
Սխալմամբ կոխեց քծնողի ոտը.
Խեղճի աչքերը մի պահ մթնեցին
Ու նա չչոկեց, թէ ո՛վ է մօտը։
Ամբողջ կոկորդով այնպէ՞ս բղաւեց
(Ըստ երեւոյթին՝ կոշտուկը ցաւեց).
Ու երբ ուզում էր
Ոտը ճմռոցին թափով հարուածել,
Չի ոտի ցաւից շատ էր բարկացել, —
Նոր միայն տեսաւ՝
Հիմնարկի պետն էր կոշտուկը կոխել...
Նրան մնում էր
Իր ցասկոտ դէմքը անյապաղ փոխել.
Ու ո՞նց է ժպտում,
Կատրաւում, նազում,
Ցաւը զսպելով
Մտքի մէջ ասում.
«Ա՜խ, երանի՜ թէ
Մի՛ւս ոտս էլ կոխէր
Գուցէ դուր գայի,
Պաշտօնս փոխէր...»
Ու խոնարհուելով նա մինչեւ գետին՝
Բեկբեկուն ձայնով դիմում է պետին.
— Ե՛ս եմ մեղաւոր,
Խնդրում եմ ներել,
Ոտս սխալմամբ
Ծո՛ւռ էի դրել...

ԿԼԱՍԻԿԻ ՄԱՀԸ

Մէկը գրել էր շատ սովորական,
Հասարակ նովել։
Բայց արի դու տես,
Որ սկսեցին այդ գործը գովել։
Բարեկամները
Երկինք հանեցին մեր նովելիստին.
— Օ՜, դու նման ես հզօր ձայնի տէր,

digitised by A.R.A.R.@

Դիւրոդ սոլիստի:
Քեզ սպասում է մեծ հեռանկար.
Դու անմահների մատեանը ընկար:
Թուրդ կարող է
Աջ ու ձախ կտրել...
Իրաւունք ունես արձանիդ համար
Մեր Քաղսովետից յարմար տեղ խնդրել:
Դու քո նովելով, իրօք, բացել ես
Գրական էրա:
Այ, ի՞նչ ասել է առողջ միջավայր,
Լաւ ատմոսֆերա...
Սեղանակիցներ,
Թասերը լցրէք դուք բերնէ-բերան...
Այսպէս ճառելով՝
Կասիկի հաշուին շա՞տ անգամ կերան:
Իսկ մի էֆքում էլ առաջարկ եղաւ՝
Հանճարի պատուին կրակներ վառել
(Բարի հիւրերը փող էին տուել,
Տարբեր գոյների հրթիռներ առել):
Հրավառութեան գեղեցիկ պահին
Փորձանք պատահեց.
Հիւրերից մէկը, վառուող հրթիռը
Ինչ-որ ծուռ պահեց...
Եւ ահա, յանկարծ,
Վառուեց ու խանձուեց ինքը՝ քանքարը...
Հիւրերն ասացին՝
— Կորուստը մեծ չէ, գլուխը քարը:
Նա ի՞նչ էր տուել —
Մի չնչի՛ն ճովել...

ԽՈՃԿՈՐԻ ԿԱՐԾԻՔԸ

Մի դրամատուրգ
Քննադատին կանչեց ճաշի,
Որ իր գրած պիեսի մասին
«հօսք դուրս քաշի»:
— Իմ բարեկամ, — դիմեց հիւրին, —
Անուշ ձայնդ ե՞րբ ենք լսում.
Ասա տեսնենք՝
Ի՞նչ լաւ բան կայ իմ պիեսում...
— Ի՞նչ ասեմ քեզ.
Դու գրել ես շատ վատ պիես...
Դրամատուրգը միտք է անում.
— Ի՞նչ տոնով է խօսում տանս,
Թէ նոյնն ասի մէկ ուրիշ տեղ —
Ասել է թէ՝ քո՛ւրդ է քանս...
Ու նա յարմար պահ է որսում,
Իր կնոջ հետ ծածուկ խօսում:
Խոհանոցից կինն է գալիս,
Ո՞նց է վառուում, ո՞նց է լալիս.
— Բա չէք ասի՝
Հարեւանի շունն ի՞նչ աքաւ.
Խոհանոցից զոհին տարաւ,
Իսկ կատուն էլ կերաւ հաւը...
Մարդը ասաց.
— Մի՛ մտածի, բեր փլաւը...
— Ձեռքս կոտրէր, խունձայի մէջ
Շուռ տուեցի մեծ պղինձը,
Ու շաղ եկաւ ե՛ւ չամիչը,
Ե՛ւ բրինձը...
...Յաջորդ օրը, սիրով անհաւն,
Դրամատուրգը կանչեց իր տուն
Մի քաղցրախօս քննադատի,
Որը ունէր փոքրիկ ալուտ —
Շատ էր սիրում՝ «Դուին», «Գառնի»
Եւ «Աբարատ»:
Սեղանի մօտ
Հիւրը թերթեց պիեսի կէսը
Եւ հիացած բացագանչեց.
— Քեզ մօտ ճո՛ւտ է Սոֆոկլէսը:
Այս պիեսը
Քեզ կը բերի փառք ու համբաւ...
Մէկ էլ յանկարծ՝
Մէջտեղ եկան խոճկոր ու հաւ:
Հիւրը ժպտաց
Ու խոճկորը քաշեց մօտիկ,
Մենակ ինքը
Անուշ արաւ երեք տոտիկ:
Ամէն տոտիկ երբ ուտում էր —
Վեր էր լուծում մէկ արարը.
— Այս տեսակ երկ
Դեռ չի տեսել ներկայ դարը...
...Քննադատը այդ պիեսից
Բան չէր յիշում միւս օրը:
Չի պիեսը ընթերցել էր
Ոչ թէ ինքը, այլ խոճկորը:

ԱՐՇԱՒԻՐ ԴԱՐԲՆԻ

digitised by A.R.A.R.@

Մ. ԱՐՄԷՆ

Բանաստեղծ, պատմուածքագիր եւ վիպագիր Մկրտիչ Արմէն (բուն անունով՝ Մկրտիչ Ճարուքիւնեան, Մկրտիչ Ալիքեան) ծնած է 27 Դեկտեմբեր 1906ին՝ Ալիքսանդրապոլ (այժմ՝ Լենինական)։ Նախնական կրթութիւնը ստացած է ծննդավայրի վարժարաններուն մէջ, ապա յաճախած է Մոսկուայի շրջապատակերի ուսումնարանը եւ աւարտած՝ բեմագրութեան անոր երկամեայ դասընթացքը։

1921–25 ժամանակաշրջանին մէկէ աւելի ապարէզներու մէջ աշխատելէ ետք, 1925ին հաստատուած է Երեւան եւ մաս կազմած՝ «Գրական դիրքերում» եւ «Երիտասարդ բոլշեւիկ» ամսագիրներու խմբագրութիւններուն։

Մկրտիչ Ա. մէն գրած է աւելի քան 30 անուն գիրքեր, որոնց նշանաւորներն են՝ «Հեղնար աղբիւր», «Պատուիրեցին յանձնել ձեզ» եւ «Ժիրայր Գլենցը»։ Թարգմանած է նոյնքան մը հատորներ, իսկ իր ընորոշ գործերը թարգմանուած են չուրջ տասը լեզուներու։

Մահացաւ 22 Դեկտեմբեր 1972ին՝ Երեւան։

ՀԵՂՆԱՐ ԱՂԲԻՒՐ

(ՆԱԽԱԲԱՆ)

1

Լենինականի հին թաղերից մէկում՝ Զորի Բողազում, որն ամենայն իրաւամբ դեռ կարող էր կրել Գիւմրի անունը, իր փոքրիկ տան մէջ մեռնում էր աղբիւրների հռչակաւոր վարպետ ուստա Մկրտիչը։

Թէեւ նա արդէն վաթսունհինգ տարեկան էր, բայց ծերութիւնը չէր նրա մեռնելու պատճառը, որովհետեւ նա դեռ ամրակազմ էր եւ առողջ։ Այնքան ամրակազմ էր նա եւ այնքան առողջ, որ թւում էր, թէ ահա վեր կը կենայ, կը հագնի իր աւանդական արխալուղը, կը դնի իր աւանդական չափխան եւ մի անգամ չփելով իր պայծառ ճակատը, դուրը բաց կ՝անի եւ նորից դուրս կը գնայ դէպի աշխարհ։ Սակայն նա պառկել էր եւ մեռնում էր մահապարտի անխուսափելի եւ անյետաձգելի մահով։ Նա մեռնում էր, որովհետեւ հասել էր իր նպատակին, որովհետեւ վերջացրել էր իր հաշիւները աշխարհի հետ։ Նա դրսում այլեւս ոչինչ չունէր անելու։

Իր վարպետութեան ողջ քառասուն տարիների ընթացքում նա ճիշդ այդպէս էլ համոզուած էր, որ երբ աւարտի իր քառասուներորդ աղբիւրը՝ պիտի մեռնի։ Նա դիտմամբ էր նպատակ դրել այդպիսի մեծ թիւ, որպէսզի հնարաւորին չափ հեռու հրէր իր կեանքի վերջում կանգնած մթին ստուերը՝ մահը։

Երբ նա դեռ քանվեց տարեկան էր եւ աւարտեց առաջին աղբիւրը՝

digitised by A.R.A.R.@

քառասունը նրան թուաց այնքա՛ն շատ եւ այն իրականացնելու վերջին կէտն այնքա՛ն հեռու։ Կառուցելով եւ չորս աղբիւր, նրան նոյնիսկ թուաց, թէ ինքը երբէք չի հասնի վերջինին, թէ իր նպատակը կը մնայ կիսակատար։ Եւ նա սկսեց զղջալ, որ իր վարպետութեան չեմքի վրայ երդուել էր կառուցել քառասուն աղբիւր եւ ոչ թէ եօթ կամ տասներկու...

Սակայն տարիներն ու աղբիւրներն անկասելի շարժուեցին, եւ նա մի օր՝ մեծ զարմանքով նկատեց, որ արդէն կառուցել է քսաներորդ աղբիւրը, ուրեմն եւ, արդէն կիսով չափ կատարել է իր նպատակը։

Երեսունչորսերորդի վրայ նա հիւանդացաւ եւ յոյսը կարեց։ Կարծում էր, թէ դա վերջինը կը լինի։ Բայց յետոյ առողջացաւ։ Իսկ երբ առողջացաւ, նա ամենայն պայծառութեամբ գիտակցեց, որ այժմ արդէն կառուցելու քիչ բան է մնացել եւ որ այլեւս հարկ չկայ շտապելու։

Եւ նա փորձեց չշտապել։ Փորձեց, բայց ապարդիւն։ Երեսունչորս աղբիւրի վրայ նա միեւնոյն արագութեամբ էր շարժել ուղեղն ու ձեռքերը եւ այժմ անհնար էր շարժման արագութիւնը փոխել։ Ինչպէս անցեալում, այնպէս եւ ապագայում, նա պէտք է կանգնեցնէր տարեկան մի աղբիւր՝ որպէս դէպի մահ տանող իր ճանապարհի ուղենիշ։

Երբ այդ գիտակցեց՝ նա հլու ենթարկուեց ճակատագրին։ Տեսաւ ու զգաց, որ անկարող էր փոխել իր մահուան ժամկէտը, որը սակայն նա ինքն էր սահմանել իր համար...

Եւ նա չարունակեց կառուցել ու ափսոսալ, որ իր կեանքի երիտասարդ տարիներին նպատակ էր դրել քառասուն աղբիւր եւ ոչ թէ եօթանասունեօթ կամ հարիւրումէկ։ Այժմ նա համոզուած էր, որ եթէ նոյնիսկ եռապատկէր աղբիւրների թիւը, դարձեալ կ'իրականացնէր այն։ Եւ նոյն ներշնչումը, որը պահպանել էր նրա կեանքը քառասուն աղբիւրի համար, կը պահպանէր նաեւ հարիւր քսանի համար։

Բայց այժմ այդ միտքն այլեւս ի զուր էր եւ միայն մի բան էր մնում ուստա Մկրտչին՝ մեռնել։ Եւ նա մեռնում էր հանգարտ, տխուր եւ խորհրդաւոր մահով։

Այդ մահն սկսուեց վերջին աղբիւրը կառուցելուց անմիջապէս յետոյ։ Երբ կառուցումը լիովին աւարտուեց, ուստա Մկրտիչը յանկարծ զգաց, թէ ինչպէս պաղեց արիւնն իր երակներում եւ այնուհետ՝ իր ներսում, կոտրուեց մի բան՝ երեւի կեանքի զսպանակը։ Նա եկաւ տուն, հանուեց, պառկեց, որպէսզի այլեւս երբէք վեր չկենայ...

⁂

Լենինականի հին թաղերից մէկում՝ Զորի Բողազում, որն ամենայն իրաւամբ դեռ կարող էր կրել Գիւմրի անունը, իր փոքրիկ տան մէջ մեռնում էր աղբիւրների հռչակաւոր վարպետ ուստա Մկրտիչը։

Տանը գտնուում էին նա եւ իր հարսը։ Հարսն էր, որ բարձը դրել էր ուստայի մէջքի տեսքը, եւ այժմ ուստան այդ բարձին յենուած, լուսամուտից նայում էր դուրս՝ դէպի այն աշխարհը, որից ինքը շուտով պէտք է հեռանար։

Նրա տունը կանգնած էր Զերի Բողազի՝ այդ խոր ձորակի մի լանջի վրայ եւ այժմ նա լուսամուտից տեսնում էր իր տան առջեւի անպարիսպ բակը եւ երկարահասակ բարդիների շարքը բակի առջեւամասում։ Բարդիների արանքներով նա տեսնում էր ցածրում գտնուող երկու այլ տների ապակի արանքներով նա տեսնում էր ցածրում գտնուող երկու այլ տների ապակի կտուրները, եւ կտուրներից այն կողմ՝ նորից բարդիների արեւոտ գագաթները, որ խոյացել էին [illegible] ներքեւ, որ խոյացել էին [illegible] էին գցել

Digitised by A.R.A.R.@

դրանց վրայ։ Այդ երկու տների արանքով նա տեսնում էր ձորակի տափակ ու լայն յատակի մի ընդարձակ պատառ՝ այնտեղով հոսող ստակաւաղուր առուակով։ Այս ափի վրայ երեւում էր մի կին, որ ջրի վրայ կռացած, կարպետ էր լուանում։ Երեւում էին կնոջ սպիտակ, լիքը ոտները։ Ուստային թւում էր, թէ նա նկատում էր նոյնիսկ ծնկածալերի երկայնակի զոյգ փոսիկները։ Ուստան նայում էր դրանց եւ նրա սիրտը լցուել էր անյոյս մի կարօտ։ Այդ առոյգ ու գեղեցիկ ոտները հենց ինքը կեանքն էր, որ այլեւս չէր վերաբերում նրան։ Նայում էր ուստան եւ ցանկանում էր մահուան պահին իր հայեացքը յառել դրանց վրայ։

Բայց ահա եւ մի ձի, որ արածելով կարճ խոտը, մտնում էր նրա տեսողութեան շրջանակի մէջ։ Զիու իւրաքանչիւր շարժումից արեւը խաղում էր նրա կրծքի եւ դաւակի վրայ։ Ի՞նչ պիրկ եւ փայլուն մարմին, ի՞նչ ուժեղ ձի...։ Ահա փայլատակեցին նրա սպիտակ ատամները։ Ահա նա թափահարեց գլուխը վեր ու վար եւ նրա բաշը ցնցուեց։ Ի՞նչ գեղեցիկ բաշ...։ Ոչ, ոչ թէ կնոջ ոտներին, այլ այդ ձիու մկաններին պէտք է յառել վերջին հայեացքը՝ մեռնելու պահին։

Դիմացի լանջի վրայ նոյնպէս տներ կային։ Վերեւում դրանք ձգուում էին երեք երկար փողոցներով, իսկ ներքեւում կանգնած էին առանձին-առանձին, եւ դրանցից իւրաքանչիւրի առջեւում նոյնպէս, կային անպարիսպ բակեր եւ բակերի առջեւամասերում՝ բարձր ու ոսկեգագաթ բարդիների շարքեր։ Իւրաքանչիւր բակի մի ծայրում ջրհորն էր, միւսում՝ հաւաքուներ, իսկ մէջտեղում, երկար շղթայով մի ծառից կապուած, ներհում էր հաւատաբիմ գամփռը։

Նայում էր ուստա Մկրտիչը մորմոք կարօտով այդ աշխարհին։ Նա այդտեղ էր ծնուել եւ ահա այդտեղ էլ մեռնում էր։ Նա այդտեղ էր սկսել իր վարպետութիւնը։ Ահա լուսամուտից երեւում է նրա կառուցած առաջին աղբիւրը...

Կառուցուած էր այդ աղբիւրը մի հովասուն ուռենու տակ, դիմացի փողոցներից մէկի եզրին։ Մի մեծ խորանարդ քար կազմում էր աղբիւրի գլուխը, եւ խողովակը դուրս էր գալիս դրա մէջից։ Կարճ, լայն, փայլուն խողովակ էր դա, որից ահա քառասուն տարի էր, որ յորդ հոսում էր ամենաամիտ ջուրը եւ թափւում էր իր առջեւի քարէ դուռի մէջ։ Գլխաքարը ձեռքերի շփումից եւ դուռը՝ ջրի հպումից յղկուել էին ու փայլում էին ձիւթածի պէս։ Գլխաքարը կարմրաւուն լեռ քար էր, եւ թւում էր, թէ դիմրուհիների ձեռքերի ներմուծիւնից էր այն կարմրել, իսկ դուռը կապտաւուն լեռ քար էր, եւ թւում էր, թէ ջրի ոռնուծիւնից էր այն կապտել։

Ուստա Մկրտիչը չէր կարող ասել, թէ ինչն էր տեսնում եւ ինչն էր յիշում, բայց ահա այդ ամէնն իր աչքի առջեւ էր՝ վառ ու կենդանի...

Դիմացի լանջի վերեւում, փողոցներից մէկում, փոշի բարձրացաւ։ Բարձրացաւ փոշին եւ արագ առաջացաւ դէպի այն կողմ, որտեղ ձորը հետզհետէ ցածրանալով, աննկատելի ձուլում էր իր փողոցները քաղաքի փողոցներին։ Ի՞նչ փոշի էր դա, երբ քամի չկար, եւ անշարժ էին բարդիների գագաթները։ Դա ի հարկէ աւտո էր անցնում արընթաց։

Եւ իրօք, ահա տների արանքով մի վայրկեան երեւաց այն, լուսեց դրա շլակը, որ նախազգուշացնում էր փողոցի մէջտեղում խաղացող երեխաներին — հեռո՛ւ... կ'ընկնէք աւտոյի տակ, կը մեռնէք...։ Ծանր, անդառնալի բան է մահը, հեռո՛ւ, հեռո՛ւ...

Նա դեռ անթարթ նայում էր լուսամուտից դուրս եւ նրա աչքերի առջեւ դեռ աշխարհն էր, երբ դրսում՝ նրա տան միջանցքում, լսուեցին խո-

digitised by A.R.A.R.@

ուկցութեան չտապ ձայներ եւ անմիջապէս սենեակ լցուեցին նրա հին ընկերները։

— Մկրտի՞չ...

Ուստա Մկրտիչը նայեց նրանց։

— Այ մարդ, էս ի՞նչ կ'էնես, ընչի՞ ես պառկէ...

— Վերջի պառկն է, ներող եղէք, — ասաց ուստան, — նստէք։ Հարս ջան, աթոռք առ...

Հարսն աթոռները մօտեցրեց անկողնին եւ ինքը նորից դուրս գնաց։ Ըստ երեւոյթին, նախասենեակում կամ միւս սենեակում նա աշխատում էր։

— Դուն իմ քովս նստի, հաշի, — դիմեց ուստան մէկին, որ պատրաստւում էր նոյնպէս նստել աթոռի վրայ։

Տիրեց յանկարծակի լռութիւն։ Բոլորը հասկացան, որ իրօք մեռնում է ուստան, եթէ նա ներեց այդ մարդուն եւ հրաւիրեց իր անկողնի վրայ։

Եւ երբ հաջին նստեց, ուստան դիմեց բոլորին.

— Ու էդ մասին՝ էլ հէչ խօսք չէղնի... է, ի՞նչդ է ձեր քէֆը, ախպէր տղէք...

— Մեր քէֆն ի՞նչ, դուն քուկդ ըսա, — պատասխանեց Աւետիքը, որի կեանքն անցել էր կամուրջներ կառուցելով։ — Ըսել է՝ պառկար, էլի, Մկրտիչ ախպէր... է՛, մենք էլ ահան կը լենք ուղտի նոռոցը։ Կու գայ, օր էդան էլ մեր դրանը չոքի...

— Պառկայ... Նպատակս կատարուած է... Մնաղ աւելորդ է...

Ուստան վերմակի տակից հանեց իր սպիտակած ձեռքը, որ նկատելի դողդողում էր, եւ շարունակեց.

— Ես հլը ջաել վախտս երդմունք էի կերէ, օր քառասուն ախպուր պիտի չինեմ։ Սեղրակը տեղակ էր՝ լուս իջնի էնոր գերեզմանին։ Գէւորն էլ էր տեղակ՝ Ասպած օղորմի ազիզ Գէւորիս հոգուն։ Միխակն էլ դիտէր՝ Ցոնճոնց Միխակը։ Սիմաւոնին էլ էի ըսէ...

Ցանկարծ ուստան յենուեց մի թեւի վրայ ու տեղից բարձրացաւ.

— Ի՞նչ բան է, հէ՞չ մէկը չէ մնացէ, բոլորն էլ մեռա՞ն...

— Ես էլ եմ տեղակ, — լսեցաւ մէկը։

Ուստան հանգստացած իջաւ դէպի բարձը.

— Դուն էլ ես տեղակ, Աւետիք, ճշմարիտ է...

Նա լռեց մի քիչ, ապա աւելացրեց.

— Ու էսպէսով, իմ ախպուրս էլ ցամքաւ...

Կարոն, որի կեանքն անցել էր աներ կառուցելով, ծանր հառաչեց ու խօսեց.

— Աչխարքի օրէնքն է էդպէս, Մկրտիչ։ Բոլորի ախպուրն էլ մէ օրըմ պիտի ցամքի։ Հմը մարդ կայ, օր իրան եռեւէն յիշատակ ունի, մարդ կայ, օր չունի։ Գու ախպուրդ ցամքաւ, հմը քառասուն հատ կայ քու տեղակը։ Էնոնք քեզի կ'օրշնեն քառասուն բերնով։ Զրէդ խմող ամէն մարդ քեզի պիտի յիշէ հուր-աւետեան...

Սակայն ուստա Մկրտիչը չէր լսում նրան։ Անչարժ հայեացքը մի կէտի յառած եւ ուշադրութեամբ ուրիշ տեղ վերացած, նա կրկնեց ինքնիրեն.

— Իմ ախպուրս էլ ցամքաւ Հեղնար ախպուրի պէս...

Բոլորը քարացան։ Տիրեց յանկարծահաս, երկարատեւ լռութիւն։ Վաղուց, շատ վաղուց էր, որ նրանք չէին արտասանել եւ չէին լսել Հեղնար աղբիւրի անունը։ Եւ այժմ նրանց աչքի առջեւ վերակենդանացաւ հեռաւ անցեալը...

Հեղնար աղբիւրը։ Այն չէր մոռնում ուստայի կառուցած քառասուն

digitised by A.R.A.R.@

աղբիւրների շարքը եւ չէր էլ կարող մտնել՝ այնքա՛ն արտասովոր, այնքա՛ն զարմանալի եւ այնքան անհասկանալի էր այն... Եւ այդպէս անհասկանալի էլ նա մնացել էր անցեալին, որովհետեւ Հեղնար աղբիւրն այլեւս համարեա՛ գոյութիւն չունէր աշխարհի վրայ։ Ցամենայնդէպս, դրա հրաշքը, որ տեղի էր ունեցել քսան տարի առաջ, վերացել էր նոյն օրը եւ այնուհետեւ չէր կրկնուել երբեք։

— Հեղնար ախպուրը, — շշնջաց Բագրատը, — հաստատ օր, ախպերո՛ւնք, Հեղնար ախպուրը...

Դրա պատկերը բոլորի ուղեղներում յանկարծ վերակենդանացաւ պայծառ ու որոշակի, եւ նրանք զարմացան շատ աւելի, քան այն օրը, երբ հրաշքը տեսնում էին աչքերի առաջ։ Այն ժամանակ մարդիկ հաւատում էին գերբնական երեւոյթների, եւ հրաշքի յայտնուելը բնական էին համարում։ Իսկ այժմ դա թւում էր այնքա՛ն անհաւանական...

Աղասին, որի կեանքն անցել էր ջրհորներ փորելով, վեր կացաւ աթոռից եւ նստեց մահճակալի վրայ՝ հաջու մօտ։

— Մկրտիչ ախպէր, — ասաց նա, — մենք ամմէնքս էլ քու ախպէր տղերքդ ենք ու օտար մարդ չկայ խառեզ։ Իսկ դուն, վո՞վ գիտէ, գուցէ թէ խկապէս, պիտի նստես դրանդ չոքած ուզտի վրայ ու երթաս խառնուիս աւետեանական քեռուրքին։ Լսա մեզի, Մկրտիչ ախպէր, գոնեա՝ հիմի ըսա, թէ էդ ի՞նչդ էղաւ, օր հրաշքը պատահաւ։ Զէ՞ օր դուն էիր չինէ Հեղնար ախպուրը։ Իսկ հրաշքն ախր ասպածային բան է...

Ուստա Մկրտիչը նկատելիօրէն մռայլուեց։ Ու մինչդեռ բոլորն անակնկնթարթ սպասում էին, նա սկսեց երկար, շատ երկար մտածել։ Մի պահ թուաց, թէ նա բոլորովին էլ չէր մտածում եւ երբեք էլ չէր պատասխանելու այդ հարցին։ Բայց նա վերմակի տակից նորից հանեց ձեռքը, որն այժմ աւելի էր դողդողում, եւ ասաց.

— Ախպուրը ձեռացագործ է, հրաշքը՝ անձեռացագործ։ Իմ չինածս մեննակ սովորական ախպուրն էր, հմը անսովոր հրաշքն Աստած ինքն էր դրէ էնոր մէջ։ Ես ի՞նչ ըսեմ ձեզի, ախպէր տղէք, եր օր ես ինքս մեննակ էդքանը գիտեմ։ Ինչ Աստած կրնայ ախպուր չինէ, ոնչ մարդը՝ հրաշք։ Ես հոդածին եմ։ Ես կրնամ պարզէ մեննակ իմ ախպուրս, Աստած էլ թող պարզէ իրան հրաշքը՝ թէ օր կամենայ...

— Ու թէ օր մենք արժանանանք էնոր տեսութեանը, — աւելացրեց Սարգիսը՝ հառաչելով։ — Ամմէն մէկիս մէ ուսի վրայ մէ բեռըմ մեղք կայ կամայ, մեկէլ ուսի վրայ մէ բեռըմ մեղք՝ ակամայ...

— Իսկ իմ մէջքիս վրայ մեննակ մէ բեռըմ մեղք կայ, — ծանր արտասանեց Հաջին, որ մինչ այդ լուռ էր եւ այժմ շատ դունատուած, — հմը էդ մէ բեռն աշխարքի մեղքը կը կշռէ...

Ուստա Մկրտիչն իր ձեռքը դրեց նրա ձեռքի վրայ.

— Մեղաւորը ես եմ, հաջի։ Ես ինքս ըսի, օր էդ մասին խօսել հարկաւոր չէ, հմը ինքս էլ բացի էս խօսակցութիւնը։ Ներող էղի...

Ապա թախիծով ժպտաց եւ շարունակեց.

— Մարդու սիրտը տան պէս է։ Ընձի իմաց են տուէ, օր տունս չուտով պիտի քանդուի։ Իմաց են տուէ, օր էրեխոցս դուս հանեմ։ Է՛, ես քառասուն էրեխայ ունիմ, էնոնք էլ դուսն են։ Էլ վո՞վ է մնացել նեսը... Նես աշեմ, տեսնիմ՝ լիքն են։ Էդոնք իմ խօսքերս են, օր հնարք չեմ ունեցէ դուս բերելու։ «Դուս հանէ էրեխոցդ, — կ՚ըսեն ընձի, — տունդ քարուքանդ պիտի էղնի, ուստա Մկրտիչ»...։ Է՛, ես որի՞ն դուս հանեմ, ժամանակ չէ մնացէ։

digitised by A.R.A.R.@

Տէ՛, ես էլ դուս հանեցի իմ ամմէնքէն սիրած, հիւանդ ու վիրաւոր էրեխէս։ Ներող կ՚էղնիս, հաշի...

Ոլորէղի խօսակցութիւնը մի այլ կողմ թէքի եւ հաշուն դուրս հանի ծանր վիճակից, Ոնէսը հարցրեց.

— Էրեխայ ըսիր, մէտս ընկաւ՝ տղէդ չպիտի՞ արժանանայ քու տեսութեանդ...

— Հարսս հեռագիր էր տուէ։ Պատասխանն ստացանք։ Ճամբայ է ընկէ։ Կը հասնի՞, թէ չի հասնի՝ Աստած գիտէ։ Մասկուայից մինչեւ իստեղ չորս օրուայ ճամբայ է, հմը խտից մինչի երկինք՝ չորս բոպուայ...

— Մկրտի՞չ, — յանդիմանական եւ հարցական դիմեց նրան Աղասին, — ի՞նչ ես գլուխդ քցէ՝ մեռնիմ, հա մեռնիմ։ Մէ գուցէ Աստած տուեց, վեր եկար...

Ուստան անյոյս կերպով ձեռքը թափահարեց եւ լուռ մնաց։ Նրա չընչաւութիւնը հազիւ էր նկատւում։ Մի քանիսը վեր կացան, մօտեցան լուսամուտին, բացեցին այն, սկսեցին ծխել եւ կիսաձայն խորհրդակցել, թէ որքան կեանք է մնացել ուստային։ Ապա Ոնէսը դնաց դէպի դուռը եւ կանչեց հարսին։

— Լաէ, աղջիկ ջան, — ասաց նա նրան, բայց նկատելով նրա կարմրած աչքերը, ընդհատեց ասելիքն ու խրատեց, — մի լայ բնութեան օրէնքն է էդպէս, իսկ Մկրտիչն էլ վենճ մարդ է։ Ընչի՞ կը տանջուես։ Գնա՛, դնա՛ լուացուի, արի հիւրերի քովը։ Մենք հիմի կ՚էրթանք։ Իրիկուայ կողմը նորից կու գանք։ Հմը, բան է, եթէ մինչի էդ՝ ուսոի գրութիւնը դէշրցաւ, դրկեցի մանչու հետ մեղի իմաց տու. մենք բոլորս էլի ինտեղ ենք՝ չինութեան վրայ...

⁂

Լենինականի հին թաղերից մէկում՝ Զորի Բողազում, որն ամենայն իրաւամբ դեռ կարող էր կրել Գիւմրի անունը, իր փոքրիկ տան մէջ մեռնում էր աղբիւրների հռչակաւոր վարպետ ուստա Մկտիչը։

Երբ այցելութեան եկած նրա ընկերները դնացին, նա չարունակեց պառկած մնալ անզգայ, անշարժ։ Թէեւ նա չէր կորցրել իր գիտակցութիւնը, բայց անտարբեր էր դարձել դէպի աշխարհը։ Այլեւս ոչ մի միտք չէր յուզում նրան, ոչ նոյնիսկ հեղնար աղբիւրի յուշը։ Այժմ նրա ուղեղի փակուող դարբասից ներս էր սպրդում միայն այն, ինչ որ գտնուում էր անմիջապէս նրա տեսողութեան գաշտում, նրա աչքերի առջեւ։ Իսկ այնտեղ գտնուողն այժմ արդէն ոչ թէ դրսի ամրողջ տեսալանն էր, այլ լոկ աղբիւրը՝ նրա ուղեղի եւ ձեռքերի առաջին գործը...

Զուրն այնտեղ հոսում էր զարմանալի վճիտ, աւելի վճիտ, քան երբեւէ։ Թւում էր, թէ ջրի փոխարէն ուստա Մկրտչի կեանքն էր հոսում այնտեղ, եւ ահա այդ էր պատճառը, որ ուստան սպառուել էր ու մեռնում էր։ Բայց փակել խողովակը՝ նա չէր ցանկանում նոյնիսկ այդ բոպէին։

Իսկ յետոյ թուաց, թէ այնտեղ հոսողը բոլորովին էլ իր կեանքը չէր, այլ երկրի ուժը, որ նշանակուած էր նրա զաւակների երակները կեանք լցնելու համար։ Իսկ ինքը՝ ուստա Մկրտիչը, մի սովորական դիւմրեցի էր, որին սակայն վիճակուել էր բաց անել այդ ուժի քաղաքուն ակունքներն իր ժամանակակիցների համար, իր երկրակիցների համար։ Եւ նա գոհ էր այդ մեծ, այդ բարձր պատուից...

Վերջնականապէս փակուելուն արդէն բոլորովին մօտ, յանկարծ նո-

digitised by A.R.A.R.@

բից, գուցէ միայն մի քանի բոպէով, եւ գնացին ուստա Մկրտչի ուղեղի դարբասափեղկերը եւ ուստան իր առաջին աղբիւրից յետոյ յիշեց նաեւ ճամբակէսի՝ քսանմէկերորդ աղբիւրը եւ վերջին՝ քառասուներորդ աղբիւրը, որոնք նոյնպէս, նրա կեանքի համար ունեցել էին կարեւոր նշանակութիւն։

Քաղաքի գլխաւոր փողոցներից մէկի վրայ գտնւում էր մի շէնք՝ միւսներից տարբեր։ Մինչդեռ բոլոր միւս շէնքերը կանգնած էին միահաւասար շարքով, այդ մէկը գտնւում էր աւելի ետ՝ խորն ընկած։ Շէնքի առջեւում գոյացած արձակ տարածութիւնը փորուած էր մի յարկի խորութեամբ, շարուած էր սեւաքար պատերով եւ մայթի պռունգից մի քարէ սանդուղք իջնում էր դէպի այդ քառանկիւնի փոսը։ Փոսում, սանդուղքի վերջին աստիճանների դիմաց, խուլ պատի միջից հանուած էր մի խողովակ։

Դա ուստա Մկրտչի քսանմէկերորդ աղբիւրն էր։

Փոսի յատակն ամբողջովին, աղբիւրի գուռն էր՝ ջրով լի, որը մըլտապէս թրջում էր սանդուղքի վերջին աստիճանը։

Երբ ջուր խմելու համար ներքեւ իջած անցորդը նայէր վերեւ, նա որպէս առաստաղ կը տեսնէր տախտակէ պատշգամբը, որը շէնքից ձգուելով դէպի մայթ, կիսով չափ ծածկել էր այդ փոսը։

Աղբիւրի ճակատին, սեւաքար պատի մէջ, դրուած էր մի կարմիր քար՝ փորագրուած տառերով։ Այնտեղ տանտէրը թողութիւն էր խնդրում իր մեղքերին եւ աղերսում էր անցորդներին՝ բարեմաղթել իր հոգու համար։ Աղերսի տակ աղբիւրի փայլուն, դեղին խողովակն էր, որի ներսն արծաթաւուն էր՝ կարծես ջրով զօծուած։ Խողովակը մէջտեղում ուռուցիկ էր, արմատի ու բերանի մօտ՝ նեղ, իսկ պռունգները՝ լայն երկճեղքուած, խողովակը նմանեցնելով դոյութիւն չունեցող կենդանու բերանի։ Ջուրն այնտեղից թափւում էր բուղխ, եւ զգացւում էր, թէ ինչպէս ջրի հետ միասին, խողովակից դուրս էր գալիս նաեւ յուրա թարմութիւնը։

Դա միակ աղբիւրն էր, որի կառուցման համար հետագայում այնքա՛ն զղջացել էր ուստան։ Աշխատելիս նա չէր ըմբռնել, թէ ինչ է կառուցում, որովհետեւ տան եւ աղբիւրի ճեւը հնարել էր ոչ թէ ինքը, այլ տանտէրը։ Իսկ երբ ըմբռնել էր՝ այլեւս ուշ էր եղել։ Եւ ուստային մնացել էր միայն անիծել, որ աղբիւրի ջրի նման երկաթ լինել տանտիրոջ ոչ թէ կեանքը, այլ կեանքի դառնութիւնը, որ անցորդներն աղբիւրի ճակատին կարդային ոչ թէ աղերսի խօսքեր, այլ հայհոյանք, որ Աստուած նրանցից լսէր ոչ թէ բարեմաղթութիւններ, այլ նզովք...։ Իսկ երբ իջել էր ուստայի բարկութիւնը, նա դադարել էր անօգուտ անիծելուց եւ թքելով այդ տան ճակատին, այլեւս չէր անցել դրա մօտով...

Եւ իրօք, ջուր խմելու իջնող ամէն անցորդի այնպէս էր թւում, թէ նա մտնում է այդ հանդիսաւոր տան հպատակութեան տակ։ Ջուր խմելու թեքուած ամէն անցորդի այնպէս էր թւում, թէ նա խոնարհուել է երկրպագութեան։ Ջուր խմող ամէն անցորդի այնպէս էր թւում, թէ նա ծծում է հնազանդութեան թոյնը։ Եւ ջուր խմած ամէն անցորդի այնպէս էր թւում, թէ նա դատապարտուած է անդառնալի։

Յեղափոխութիւնից յետոյ, ազատագրութեան առաջին իսկ օրը, ուստան վերցրել էր իր սրածայր մուրճը եւ շտապել էր այնտեղ՝ ոչնչացնելու աղբիւրի գլխագիրը։ Բայց հասնելով տեղ, նա տեսել էր, որ իրենից առաջ, ո՛վ գիտէ ովքեր, արդէն ոչ միայն ջնջել էին գլխագիրը, այլեւ կտրել, վերացրել էին տեսնելի պատշգամբը։ Տասնհինգ տարուց յետոյ առաջին անգամ արեւը խաղում էր ոսկեդեղին խողովակի հետ։

Եւ ահա այդ էր եղել պատճառը, որ ուստան ազատագրութեան առա-

digitised by A.R.A.R.@

ջին խոկ օրուանից գնացել էր՝ ուր որ կանչել էին իրեն, եւ աշխատել էր։ Աշխատել էր, կառուցել էր իր վերջին աղբիւրները, եւ երբ մնացել էր միայն ամենավերջինը, նա մի օր, կարմիր քարափոշով ծածկուած գոչնոցը հագին, ներկայացել էր տեքստիլ գործարանի վարչութեանը։

Տեքստիլ գործարանի թաղամասում բոլոր բնակարաններն ու հիմնարկներն ունէին ջրի ծորակներ։ Ուստա Մկրտիչն ինքն էր կաւէ լայն խողովակներով ջուրը բերել թաղամաս եւ թողել, որ ուրիշ, նոր արհեստաւորներ, երկաթէ նեղ խողովակներով բաժանեն ջուրը բոլոր շէնքերին։ Եւ բոլոր շէնքերը ջուրն ստացել էին լիուլի։

Բայց, չնայած դրան, ուստան միտք էր յղացել մի սովորական աղբիւր կանգնեցնել դրսում, փողոցներից մէկի անկիւնում։ Վարչութիւնը, աշխատելով չվիրաւորել սիրուած վարպետին, զգոյշ մերժել էր նրա առաջարկը՝ աղբիւրը համարելով աւելորդ։

— Աւելորդ ո՞րն է, — վրդովուել էր ուստան, — թող ջուրն իրան համար վազդէ, ձեզնէն ի՞նչ կ'էրթայ։ Ճամբորդ կ'անցնի՝ կը խմէ, վառ մարդ կ'անցնի՝ կը խմէ, վառուած սիրտհար կ'անցնի՝ կը խմէ... էդոնք խո չէ՞ն կրնայ ամէն բոպէ մտնի տները՝ ժանգոտ ջուր խմելու...

Վարչութեան մէջ ժպտացել էին ուստայի յայտնի արհամարհանքի վրայ՝ երկաթէ խողովակների ու ծորակների հանդէպ, բայց պնդել էին մերժումը՝ առարկելով, որ չկայ աւելորդ դուռմար՝ ճամբորդների, վառ մարդկանց եւ սիրտհարների համար աղբիւր կառուցելու։

Այդ ժամանակ ուստան յայտնել էր, որ ինքը կ'աշխատի մէն-մենակ, արտաժամեայ, առանց որեւէ վարձատրութեան, բայց աղբիւրն անպայման կը կառուցի։

Եւ նա սկսել էր աշխատել բանթողի ժամերից մինչեւ մութն իջնելը՝ աշխատանքի ընթացքում հետզհետէ աւելի համոզուելով, որ այդ աղբիւրն այդպէս էլ պէտք է կառուցուէր՝ միայն իր աշխատանքով, բոլորովին ձրի, իբրեւ նուէր... Չէ՞ որ դա իր վերջին, ամենավերջին աղբիւրն էր...

Ինչպէս իր բոլոր միւս աղբիւրների, նոյնպէս եւ այդ վերջինի դլխաքարի վրայ ուստան իր ձեռքով էր քանդակել բառերը։ Պսակաձեւ շրջանակի մէջ նա վիմագրել էր — «Կառուցաւ յաղթիւրս այս ի արտաժամու, վասն չնչոյ փրկութեան՝ ուստա Մկրտիչը»։

Գործարանի վարիչի այն խորհրդին, թէ բանուորներն այդ չեն հասկանայ եւ աւելի լաւ կը լինէր դրել աշխարհաբար, ուստան խրատական-յանդիմանական խիստ տոնով պատասխանել էր.

— Թող էդ մէ երկու խօսքն էլ գրաբար որվին, բերները չի ցաւի, իրանց պապերու լիզուն է...

«Վասն չնչոյ փրկութեան»ը նոյնպէս, ունէր իր պատմութիւնը։ Ինչպէս բոլոր նման դէպքերում, ուստան պատրաստուում էր գրել՝ «վասն հոգւոյ փրկութեան», սակայն շտապ վրայ հասած բազմաթիւ երիտասարդ բանուորներ եւ բանուորուհիներ խնդրել էին նրան՝ այդ բանը չանել։ Բացատրել էին, որ հոգի չկայ, որ մարդու մէջ եղածը շունչ է, եւ որ դա բնութիւնից է եւ ոչ թէ Աստծուց։

Ուստան լսել էր ուշադիր, առանց հակաճառելու, ապա թախիծով պատասխանել էր.

— Մարդու մէջ մէ բանում կայ, օր իրան հետ չպիտի մեռնի, օր մարդու մեռնելէն ետեւ պիտի փրկուի։ Կ'ուզէք՝ հոգի ըսէք էդոր, կ'ուզէք՝ առնուն, կ'ուզէք՝ գործ, կ'ուզէք՝ շունչ... Ըլտը ես ախպուրս կը լինեմ էդ մէ բանի փրկութեան համար...

digitised by A.R.A.R.@

Եւ հենց խսկոյն, բոլորի ներկայութեամբ, աւանդական «հոգուն փոխարէն նա քանդակել էր իր «չունչը»։

Եւ ահա, ուստայի պառկելուց միայն մի օր առաջ, բոլորովին պատրաստ կանգնել էր նրա վերջին՝ քառասուներորդ այդ աղբիւրը։ Կեանքի ճանապարհը, որ անցել էր ուստան եւ աւարտել, այժմ լրիւ լուսաւորուած էր քառասուն ջահերով՝ նրա քառասուն անապակ աղբիւրներով, որոնք այնքա՛ն պատմել էին եւ դեռ այնքա՛ն պիտի պատմէին հոչակաւոր ուստայի մասին, որոնք վառ պիտի պահէին նրա գործն ու անունը։

Բայց յանկարծ նրան այնպէս թուաց, թէ իր հետ միասին մեռնելու էին թէ՛ իր գործը եւ թէ անունը, եւ դրա պատճառը լինելու էր մի հին, վաղուց անցած բան... Այդ միտքն այնպիսի ուժգնութեամբ շանթեց-մեխեց նրա ուղեղում, որ նա ցնցուեց, սթափուեց եւ տագնապով ձայն տուեց դէպի դուռը.

— Հա՛րս, ա՛յ հարս...

Հարսն արագ մտաւ ներս.

— Ի՞նչ, հայրիկ...

— Արի։

Հարսը մօտեցաւ եւ վախն աչքերի մէջ՝ կանգնեց նրա մահճակալի մօտ։

— Նստի՛։ Մարդ խօ չկա՞յ էն սենեակը։

— Գէորի մէրն է։

— Էկել է, օր մեննակ չմնաս, — հաստատեաց ուստան։ — Լաւ է էրէ։ Ըպը քովս ընչի՞ չի գայ՝ իրանէն բարեւ տանիմ մօրս...

— Դուն քնած էիր։ Կ՚ուզե՞ս կանչեմ։

— Քնած չէի, համը էլ մի կանչէ։ Ես քեզի բան պիտի ըսեմ... Նըստի՛...

Հարսը նստեց ուստայի մահճակալի վրայ՝ լարուած, սպասողական։ Իսկ մինչ այդ, ուստայի դէմքի վրայ ակնյայտ նկատւում էր անվճռականութիւնը՝ խօսե՞լ, թէ ոչ։ Դեռ գուցէ կը գա՞յ իր տղան...

— Զեկա՞ւ, — հարցրեց նա՝ երկար լռութիւնից յետոյ։

— Հէր գնացքի վախտը չէ։

— Իսկ իմ գնացքիս վախտն է... Է՛, չեղաւ, հարս...

Դուռը կիսաբաց եղաւ եւ մի պառաւ իր գլուխը թեքեց դէպի ներս։ Հարսը ձեռքով նշան արեց նրան, որ չմտնի, որից յետոյ դուռն իսկոյն ծածկուեց։

Ուստա Մկրտիչը շնկատեց այդ եւ չարունակեց.

— Դուն չատ լաւ գիտես, օր ես նեղեցած եմ իմ տղէցս ու քու մարդուցդ։ Էնիկ գոռոզ էղաւ, էնիկ չհաւնաւ իմ դիտութեանս, գնաց, օր ախպուր չինելու արեսան ուրիշներուց սորվի, ոնչ թէ ընձնէն։ Լաւ չէրաւ...

— Հայրիկ, ախր էնտեղ պրոֆեսորները դաս կու տան էնոր...

— Պրոֆեսորնե՞րը...

Ուստան ձեռքը հանեց վերմակի տակից եւ դողացող մատները բռունցք հաւաքելով, ուժեղ խփեց իր կրծքին.

— Ե՛ս եմ ամենալենձ պրոֆեսորը։ Թող օրվի ուզէն օր կ՚ուզէ, համը առանց իրան հօր գիտութեանը՝ էնոր ուսմունքն արժէք չունի...

Ուստան նկատելիօրէն յուզուեց, կակազեց եւ խօսքն ընդհատեց։ Ըստ երեւոյթին նա դժուարանում էր չարունակել՝ վախենալով նոր խօսքեր ասել որդու հասցէին։ Բաւական ժամանակ մնաց լուռ, իսկ երբ նորից խօսեց, նրա ձայնը խաղաղ էր, վախեցնելու չափ խաղաղ։

digitised by A.R.A.R.@

— Թէ օր գար, թէ օր հասնէր, ես ինքս կը խօսէի հեռը, կը սրվեցնէի ամէն բանը։ Թող հիմի բանի տեղ չընէր, հմը էդուան առանց էդոր եոլա էրթալ չպիտի կրնընար...։ Ժամի քանի՞ն է, հարս...

Հարսը վեր կացաւ եւ մօտեցաւ կոմոդին, որի վրայ, ընտանեկան հին լուսանկարների, թղթէ ծաղիկների, գիպսէ կառուցի եւ նապաստակի միջեւ սկսկում էր սեղանի ժամացոյցը։

— Ետ արի, հարս, հարկաւոր չէ, — շտապ կանչեց ուստան, — ես իմացայ ժամը, իրենք ըսպպէ է պակաս...

Երբ հարսը վերադարձաւ ու նստեց՝ չհասկանալով ուստայի խօսքերի իսկական իմաստը, նա շարունակեց.

— Տղիս կ'ըսես, օր եթէ, վո՛վ գիտէ, մէ դժուարութեանըմ հանդըպի, թող քանդէ իմ քառասուն ախպուրներէս արն օր կ'ուզենայ ու թող սրվի էնոր հնարքները։ Կ'ըսես, օր թող չխնդայ իրան հօր վրայ ու մտեհան չէնէ էնոր։ Կ'ըսես, օր մեռնելուս ըսպպէին իմ սիրտս խռոված չէր էնոր հետ։ Վերջի մնաս բարով ու պուշտիս մտեհան չէնես...

Ուստան լուեց։ Հարսը սարսափած նայեց նրան, բայց նա դեռ չէր մեռել։ Նա մտածում էր։ Եւ յանկարծ, անսպասելի զգաստութեամբ, նա նըստեց, տագնապով լի աչքերն ուղղեց հարսի վրայ եւ ամուր բռնեց նրա ձեռքը։

— Հարս, պարտականութիւն կը դնեմ վրէդ... Տղիս ըսա, օր ինչքան դէշ բան էնէ աշխարքի վրայ, ես էնոր կը ներեմ, հմը իմ աւիտենական նըզովքս ու անէծքս կու տամ, եթէ մէ օրըմ ձեռք տայ Հեղնար ախպուրին...

— Ի՞նչ կ'ըսես, հայրիկ, — սարսռաց հարսը։

— Թող քանդէ թէկուզ իմ քառասուն ախպուրներս էլ, էդոր մէջ սրբապըղծութիւն չկայ, հմը Հեղնար ախպուրն ուրիշ է, էնոր տակը գերեզման կայ...

— Արար-աշխարք գիտէ էդ բանը։ Ինչի՞ պիտի քանդէ, հայրիկ...

— Վո՞վ գիտէ... Գուցէ թէ հրաշքի համար քանդէ։ Իմ ժամանակս մարդ էդպէս բան մտքէն էլ չէր անցընէ, հմը հիմի... Հիմի մարդն ատուգել կ'ուզէ ասպածային հրաշքը...

— Ախր հրաշք չկայ, հայրիկ, սուտ բան է։

— Հրաշքը կայ աւտրցողի համար, — էդպէս էլ կ'ըսես իրան, — հմը չաւտրցողը հրաշք չի տեսնի։ Կ'ըսես տղիս, օր Հեղնար ախպուրի հրաշքը ոնչ թէ չոր քարի կամ թաց հողի մէջն էր, այլ իմ ժամանակուս մարդոց հաւատացեալ հոգու... Իսկ քեզի, աղիկ հարս ջան, հազար մնաս բարով...

Նոյն վայրկեանին դրսում աղմուկ լսուեց։ Հարսն արագ դուրս վազեց։ Մի քանի ցրում լսուեց տղամարդու ձայն, ապա հարսի լացակումած ձայնը, որ չտաց ինչ-որ բան էր հաղորդում, որից յետոյ դուռը չրխկալով բացուեց եւ սենեակ մտաւ ուստա Մկրտչի որդին։

Ուստան արդէն մեռած էր։

ՄԿՐՏԻՉ ԱՐՄԷՆ

digitised by A.R.A.R.@

Հ. ԷԴՈՅԵԱՆ

Բանաստեղծ, գեղագետ եւ մասնագիտական հեղինակ Էդոյեան ծնած է 31 Օգոստոս 1940թ՝ Երեւան։ 1957թն աւարտած է Երեւանի 38րդ միջնակարգ վարժարանը, իսկ 1967թն՝ Երեւանի պետական համալսարանի բանասիրական ֆիզիկի հայկական բաժինը։ 1968-70 տարիներուն ուսանած է Մոսկուայի Մ. Գորքիի անուան համաշխարհային գրականութեան հիմնարկին մէջ՝ իբրեւ գրականութեան տեսութեան թեկնածու։ 1974թն պաշտպանած է «Մեսայիզմի նարցերը XX դարի հայ բանաստեղծութեան մէջ» աշխատասիրութիւնը եւ արժանացած՝ բանասիրական գիտութիւններու թեկնածուի աստիճանին։ 1971էն ի վեր կը պաշտօնավարէ Երեւանի համալսարանի գրականութեան տեսութեան եւ գեղագիտութեան ամպիոններուն մէջ՝ իբրեւ դասախօս։

Հեղինակ էդոյեան հրատարակած է երեք գիրքերգիրքեր՝ «Ցնդրաղարձումներ», «Պատկեր եւ կէսօր» եւ «Երկրային ժամանակ»։ Նաեւ գրագած է թարգմանութիւններ։ Իր կատարած թարգմանութիւնները ամփոփուած են «Մոսկէ լատս, Հին Արեւելքի պոեզիա» հատորին մէջ։

●

Ձեռքս դանդաղ բարձրանում է մազերդ ի վեր,
այնտեղ լռում, ինչպէս մի նաւ — պոկուած ափից,
մենք չենք տեսնում, բայց երկնքի շրջանակից
մեզ են նայում դեռ չծնուած երեխաներ։

Մեր աչքերից օդ են ճախրում երկու ճայեր,
նրանք թռչում, բարձրանում են, իջնում նորից,
գալիս է նա — մեր երեխան, եւ քեզ ու ինձ
տանում սիրոյ լոյսերի մէջ — հագած թեւեր։

Քո կոնքերում վազում է նա, խաղում այնտեղ,
քո ձեռքի մէջ նոր գծեր են ուելանում,
կապում փայլուն մի աստղի հետ, դառնում աղեղ։

«Ինչքան մօտ է», — աստղը դիտում, ասում ես դու,
իսկ երկնքի շրջանակից քեզ են նայում
երեխաներ, որ չես տեսնում, բայց ունես դու։

digitised by A.R.A.R.@

ԻՆՖՈՒԶՈՐԻԱ

Քամին աշխարհի ջրերն է շեղում,
Ծառերն են փայլում կայծակների տակ,
Ինչպէս ստուերներ գալիս են նրանք
Եւ կեանքի փլուզող ափը ողողում:

Ինֆուզոր, հսկայ — երկնային հողում,
Ժամանակի մէջ թռչող ժամանակ,
Դժոխքի խորքից բարձրացող քանդակ,
Այնտեղ, ուր վերջին ձկներն են լողում:

Եւ գիտութեան հետ անվերջ վիճելով,
Իբրեւ նոր Տիֆոն, յայտնւում է նա
Աշխարհի տարբեր աստիճաններով:

Իր շարժումների ցանցից ամայի
Նա դուրս է գալիս եւ խմում մի պահ
Արձագանգները տենդագին ցաւի:

ԱՐԵՒԱԾԱՂԻԿ

Խոտերի հանգիստ, ժամերի անցում,
Հանգչող ստուերներ օդում ամայի,
Ինչպէս արձագանգն անծանօթ ձայնի
Նա իր վառ-կարմիր պսակն է գործում:

Չկայ ոչ վախեան եւ ոչ արթնացում,
Նա — իբրեւ վերջին ժառանգն արեւի,
Ճակատագիրն է տեսնում աշխարհի
Փակուած խորտակուող կէսօրուայ ցանցում:

Եւ մի երկնային քամի է գալիս,
Եւ տերեւները թափւում են գետին,
Եւ թռչուններն են բարձրաձայն լալիս:

Եւ իր պսակը թողած խոտերին
Արեւածաղիկն օդ է բարձրանում,
Թռչում է երկինք եւ անշարժանում:

digitised by A.R.A.R.@

ԷԼԵԳԻԱՆԵՐ

1·

Ես քեզ կը գրէի էլեգիաներ, եթէ քեզ հաւասար լինէի,
բայց, դու բարձր ես աւելի, ինչպէս այն աստղը առաջին,
որ հսկում է մուտքը գիշերուայ եւ ինքը մնում աներեւոյթ
քաղաքի բաց կապոյտ երկնքում՝ մինչեւ կը յայտնուի
երկրորդ աստղը՝ արարիչը երկնային բազմութեան,
իսկ ես պառկում եմ հենց այնպէս եւ նայում վերեւ,
առաստաղին,
ձեռքերս գլխիս տակ դրած իմ անցած օրերն եմ յիշում
փողոցի մայթերին մէկ-մէկ կտրուող ծառերի նման,
յուշը վառ կարմիր թռչուն է լռացող մայրցամաքի վրայ —
լսի՛ր զանգերը ժամացոյցի՝ դիմացի բազմայարկ շէնքից,
նրա ո՞ր զանգն է անշարժանալու օդում ինչպէս արձան,
խօսէ՛ք, առարկաներ, ինձ հետ, բացուէ՛ք, առաստաղներ բարձր,
օ, աստղ, որ թռչկոտում ես կանաչ խոտերի մէջ դաշտի
եւ սահում քաղաքի վրայով, պահիր յիշողութեան
փայլուն պատկերները, ուր անկման շառաչն եմ լսում
սեփական իմ անցեալի, որ դեռ լողում է իմ մէջ
եւ աղօտ լոյսերով փայլում իմ մարմնի միրաժի վրայ:

2·

Ես չեմ փակում բաց դռները եւ փակ դռները չեմ բացում,
ես չեմ գոհւում կռուի մէջ ինչպէս Արա Գեղեցիկ,
քանզի ես չունեմ կռիւ եւ չի սպառնում ինձ ոչ ոք
իր սիրոյ մոլեգին ցանցով, իր մոռացումով կամ յուշով,
իսկ ես մտնում եմ երազի մէջ զգոյշ, ինչպէս ստուեր,
չքսուելով բացուած դրանը, որ կարող է իջնել շխկոցով
իմ ձգուած երակի վրայ, շողշողուն ինչպէս դանակ,
ես անցնում եմ խոտերի վրայով առանց խոտերը շարժելու,
ես մատս քսում եմ բառերի շեղբին ոչ մի բառ չասելով,
բայց լռութեան սառը դահլիճում ես չեմ յիշեցնում իմ մասին
եւ չեմ ընկալում այս խօսքը — «տեսէք, նա չի արտասուում»,
եւ կամ — «ահա նա, որ ոչինչ չգիտի նախապէս»,
կամ երբ ասում են — «այս առաւօտ ես պէտք է մեկնեմ»,
իսկ կովի դնչից կախուած են կերի մնացորդները, թաց
եւ խուլ ականջում բզզում է կացինը եղբայրաբար,
ես կովի երազի մէջ թարմ խոտ եմ հասունացող,
նա պոկում է ինձ բերանով եւ ընդմիշտ մնում քաղցած,
«Ո՞վ ես դու», — հարցնում է ինձ մի անձրեւ թափառական,
«Դու այստեղ ես», — զարմացած քաղաքն է ասում ինձ:

digitised by A.R.A.R.@

ՄԻ ԽՕՍԻՐ

Մի խօսիր Հայաստանում ժամանակի մասին —
մենք այնքան ենք շնչել դարերի փոշին,
որ ժամանակը մնացել է հեռում,
որտեղից վերադառնում են գառները ոսկեգեղմ —
միակ ժառանգները Մեծ Ցաւերժութեան:

Մի խօսիր Հայաստանում Արեան մասին — այստեղ
արշալոյսները եղել են այնքան կարմիր, որ նրանց
չենք տարբերել արեան հոսանքներից — ապրել ենք
արշալոյսների եւ արեան միջեւ:

Մի խօսիր Հայաստանում Սիրոյ մասին, քանի որ
մեր սէրը եղել է բարբարոս մի աստղ,
որ այրել է ձեռքերը իրեն մօտեցող,
բայց լողացել է, ինչպէս երկնային նաւ,
Ցաւերժական Հնչիւնների Արքայութեան մէջ:

Մի խօսիր Պոեզիայի եւ Անկման մասին,
մի խօսիր Մոռացութեան եւ Յայտնութեան մասին,
Հայրենիքի, Ծննդեան, Փախուստի,
մի խօսիր Հողի մասին,
մի խօսիր Քո մասին,
բախտի, սահմանի,
գուշակութեան բառեր
մի գրիր, մի խօսիր
Ստուերի, Պատմութեան
հրաշքի մասին, քանի որ
նրանք ունեն պատրաստի պատասխան —
Հայաստանը, որի վրայ մենք տերեւ ենք միայն
միշտ պատրաստ — ընկնելու:

ՀԵՆՐԻԿ ԷԴՈՅԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Բ. ՅՈՎՍԷՓԵԱՆ

Բաղիշ Յովսէփեան ծնած է 18 Հոկտեմբեր 1922ին՝ Մարտունի շրջանի Ալուչալու (այժմ՝ Արծուանիստ) գիւղը։ 1938-40 տարիներուն եղած է ուսուցիչ իր ծննդավայրի վարժարանին մէջ, իսկ 1944-45 տարիներուն՝ Մարտունի շրջանի «Կոլխոզ ուղի» թերթի պատասխանատու քարտուղարը։ 1950ին աւարտած է Երեւանի պետական համալսարանի բանասիրական ճիւղի հայկական բաժինը։ 1950-58 ժամանակամիջոցին պաշտօնավարած է «Գիրական թերթ»ի խմբագրութեան մէջ՝ իբրեւ բաժինի վարիչ, 1958-75 տարիներուն՝ Հայաստանի գրողներու միութեան մէջ՝ իբրեւ խորհրդական, իսկ 1975-80 տարիներուն՝ «Սովետական գրականութիւն» ամսագրի մէջ՝ իբրեւ արձակի բաժինի վարիչ։

Բաղիշ Յովսէփեան հրատարակած է հինգ հատորներ, որոնց նշանաւորներն են՝ «Սերմնացանները չվերադարձան», «Դու հասկացա՞ր ինձ» եւ «Ընտիր երկեր»։ Իր «Սերմնացանները չվերադարձան» վէպը լոյս տեսած է ռուսերէն, լեհերէն եւ հսպաներէն լեզուներով։

ՍԵՐՄՆԱՑԱՆՆԵՐԸ ՉՎԵՐԱԴԱՐՁԱՆ

Արեւը դուրս է եկել։ Մենք չորացել ենք ու պատրաստուել նախանձալի։ Մեզ տուել են մէկական կտոր խոզի ճարպ, երկուական կտոր երշիկ եւ հաց։

Կամալովը երշիկները մի բերան է արել, իսկ ճարպին ձեռք չի տալիս։ Տխուր է։

— Մգեր, — ասում է նա, — ճարպ քեզ, երշիկ ինձ, լա՞ւ։

Մէհերը անձայն մի կտոր երշիկը մեկնում է նրան, բայց ճարպը չի վերցնում։

— Տուր կոնկիինին, շաքար առ։ Ես էլ ճարպի սիրահար չեմ, — ասում է նա։

Կոնկիինը ծուռ հայեացքով է դիմաւորում Կամալովին։

digitised by A.R.A.R.@

— Ինքդ կեր։

Սա արդէն Կոնկինից չէ։ Մենք զարմանում ենք, բայց ամէնից շատ կամալովն է զարմացած.

— Երբէկ չէ, շաքար, շաքար...

— Առ քեզ շաքար։ Բայց ճարպն էլ ինքդ կեր, հասկացա՞ր, ինքդ, ինքդ։

— Ես ուզբեկ... ուզբեկ խոզ չուտի։

— Ուզբե՛կ, ուզբե՛կ։ Դմբո, պատերազմ է, պատերազմ, չան մէս էլ կարող է ձեռքդ չընկնի։ Ա՛յ, այս կտորը կեր, տես ինչ լաւն է։

Կամալովը զզուանքով ծոմռում է դէմքը։

— Տուր այստեղ, չան որդի, — ծիծաղում է Կոնկինը, — երբ ռազմաճակատ գնանք, Ֆրիցը քեզ կը սովորեցնի ճարպ ուտել։

Մենք խարոյկ ենք վառում, եւ կամալովը բոլորից շուտ է իր ջրով լի կաթսայիկը կախում կրակին։

Լէյտենանտ Սուրովը չկայ, հրամանատարներին կանչել են շտաբ, եւ մենք անում ենք այն, ինչ մեզ հաճելի է։ Իսկ մեզ համար հաճելի է պառկել բացատում, խոտերի վրայ ու նայել երկնքին։ Երկինքը խորն է, մեր պիւղի երկնքի նման կապոյտ-կապոյտ։ Մհերը Կոմիտաս է երգում.

Արօրն ասաւ տատրակ հաւքուն,
Ինչո՞ւ կու լաս կուց-կուց արուն,
Երթայ, լցուի բարակ առուն...

Հով չկայ։ Բայց ինչո՞ւ ինձ թւում է, թէ այդ երգը հովն է բերում, բերում է հեռու-հեռուներից, գուցէ Սիփանից, գուցէ Սեւանից, չգիտեմ։ Գիտեմ, որ հեռուից է գալիս այդ երգը, թափուելով հոգուս մէջ՝ զգացնել է տալիս, որ ես հայ եմ։ Դա իմ երգն է, աչքերիս նման իմ սեփականութիւնը, եւ աչքարհում չի լինի մէկը, որ այդ երգը խլի ինձանից ու ասի՝ քոնը չէ։ Պատերազմ է, եւ նոյնիսկ իմ աչքերը կարող են խլել ու տալ մի ծերացած գեներալի, բայց այդ երգը՝ երբեք։ Դա իմն է, միայն իմը, ես այդ երգը ժառանգել եմ մօրից, ինչպէս մի ժամանակ ժառանգեց Կոմիտասն ու ասաց ինձ.

— Սա է քո երգը, իսկ դու հայ ես։

Տատրակն ասաւ արօր հաւքուն,
Գնաց գարուն, եկաւ աշուն,
Կտրաւ ցրիկ ազրիւրներուն,
Կտրաւ հոտիկ ծաղիկներուն,
Կտրաւ սէրիկ կարաւներուն...

Երգում է Մհերը, եւ ես յիշում եմ Սեւանայ ափին ընկած մեր հեռաւոր գիւղը։ Բարգիները օրօրւում են ջրերի վրայ, կանաչը ծփում է ձորերում, իսկ մացառուտ ժայռերի մէջ կաքաւները լուռ են։

Ես նայում եմ Արամայիսին։ Նրա աչքերը թաց են իմ աչքերի նման։ Իսկ Կոնկինը տխուր է։

Նայում եմ Մհերին ու զգում, որ նա չի նկատում թացութիւնը Արա-

digitised by A.R.A.R.@

մայիսի աչքերում, չի տեսնում մեզ, չի տեսնում խոտերը, ծառերը, որ անշարժ են։ Նրա հոգին ուրիշ տեղ է՝ հեռո՞ւ-հեռո՞ւ, այնտեղ, ուր երկինքը կապույտ է այս երկնքի նման, բարդիները օրօրւում են ջրերի վրայ, եւ մացառուտ ժայռերի մէջ կաքաւները լուռ են։

— Դա ձե՞ր երդն է, Մգեր, հայերէ՞ն է, — հարցնում է Կոնկինը։

— Հայերէն է, մերն է։

— Առաջ, երբ դու երգում էիր այդ երգը, ես չէի հասկանում, իսկ հիմա հասկացայ։ Զգիտեմ ինչո՞ւ, հիմա հասկացայ։ Շնորհակալ եմ քեզանից, երբ դու երգում էիր, ես տեսնում էի մօրս։ Նա գնում էր արեւածաղիկների միջով, ու փէչերը քաւում էին ցօղուններին։ Այդպէս տեսայ նրան։ Բայց ինչո՞ւ առաջ չէի հասկանում, իսկ հիմա հասկացայ, չգիտեմ։ Արեւ կա՞յ այդ երգի մէջ, արեւ։ Գիտե՞ս ինչու եմ հարցնում։ Երբ ես տեսնում էի մօրս, արեւ կար արեւածաղիկների վրայ։

— Արե՞ւ։ Այո, կայ։ Այս երգը մի տխուր արեւ է։

— Ասուած վկայ, ես այդպէս էլ տեսնում էի, — աշխուժանում է Կոնկինը։

Նրանք լռում են, որովհետեւ գալիս է լէյտենանտ Սուրովը։ Մենք ոտքի ենք կանգնում, եւ ես զեկուցում եմ։

— Ընկեր հրամանատար, ջոկը հանգստանում է։ Արտակարգ ոչինչ չի պատահել։

— Բաւական է, ինչքան հանգստացաք, — ասում է Սուրովը, — հիմա էլ սկսենք պարապմունքը։

⁂

Արեւը կծում է։ Մենք գիտենք, այդպէս կծում է նա անձրեւից առաջ։ Էլի անձրեւ։ Բնութիւնը ի՞նչ է ուզում մեզանից։ Շինելները ամուր փաթաթել ենք ու ծայրերը կապել թելով։ Ամէն անգամ, երբ ես կապում եմ այդպէս իմ շինելի ծայրերը, յիշում եմ անուրը, որ գիւղում հագցնում էին ձիերին։ Բայց մենք դրանք հագնում ենք ոչ թէ անուրների, այլ կոսպանդների նման՝ ձախ ուսից դէպի աջ թեւատակը։ Հակառակ ուսից կախուած է հակագազը, որի ժապաւէնը թէեւ լայն է, բայց միշտ ոլորւում է ու կտրում ինչպէս թելը։ Մեր գօտիները կաշուից չեն, այլ թելերից հիւսուած փոկեր, ձիերի փորքաշների նման ամուր-ամուր։ Կաշին երեւի թանկ է եւ երկար չի դիմանայ, որովհետեւ ամէն մի գօտուց կախուած են բահը, տապաշիշը, վարժական նռնակը, փամփշտակալը՝ փամփուշտներով լի։ Երբ մենք կանգնում ենք, դրանց ծանրութիւնից սովորական պրկութեամբ կապուած գօտիները, պոկուելով կոնքերից, սահում են ցած։ Այդ պատճառով էլ փորը ներս քաշած՝ մենք ձգում ենք մեր գօտիները, որքան ուժը պատում է։ Իսկ ում ուժը չի պատում, օգնութեան է կանչում ընկերոջը։ Այնպէս որ, մեր կոզերը դրեթէ իրար են կպչում, սակայն մենք ցաւ չենք զգում, քանի որ տարուց աւել է, ինչ բանակում ենք։ Եթէ թոյլ թողնենք, մեր գօտիները կը կախուեն ցած եւ քայլելիս...

Բայց մենք չենք քայլում, հագած-կապած կանգնել ենք բացատի եզրին, եւ լէյտենանտ Սուրովն ասում է.

digitised by A.R.A.R.@

— Զինուոր Կոնկին, պատկերացրու, թէ բացատի միւս ծայրին գերմանացին է։ Նա դնդացիրներով, հրացաններով կրակում է։ Ոսկի հրամանատարը զոհուել է, դու փոխարինել ես նրան։ Ինչպէ՞ս պէտք է ջոկդ առաջ տանես այս բացատով, որ կարողանաս ոչնչացնել գերմանացուն։

Դեռ երէկ չէ միւս օրը լէյտենանտ Սուրովը ռազմական այդպիսի խնդիրներ առաջադրելիս, գործածում էր միայն թշնամի բառը, եւ մենք հասկանում էինք, որ թշնամի չունենք, լէյտենանտը հենց այնպէս ասում է։ Իսկ հիմա, թէեւ Սուրովը թշնամի չի ասում, բայց մենք գիտենք, որ թշնամի ունենք եւ նա կոչւում է գերմանացի։ Գերմանացին թշնամի է, թշնամին՝ գերմանացի, եւ այդ ամէնը երէկ չէ միւս օրուանից։

— Այնուհետ՝ ռազմաճակատում կը տեսնենք, ինչպէս յարմար եղաւ, այնպէս էլ կ'ոչնչացնենք, — Կոնկինը չի կատակում։

— Ինչպէ՞ս թէ, — չգիտեմ՝ զայրանո՞ւմ է լէյտենանտ Սուրովը, թէ՞ նրա տոնն է այդպէս՝ զինուորական, — մի՞թէ դու այդքան յիմար ես։ Եթէ ջոկդ վաղով տանես, գերմանացին, ինչքան էլ վատ կրակող լինի, բոլորիդ կը սպանի։ Անհրաժեշտ է ջոկը առաջ տանել փորող։ Հասկանալի՞ է։

— Թոյլ կը տա՞ք խօսել, ընկեր լէյտենանտ։

— Խօսիր։

— Եթէ, Աստուած չանի, ընկեր Սասունեանը վիրաւորուել է, ապա նրան կը փոխարինի Մգերը, — մենք հասկանում ենք, որ Կոնկինը աշխատում է ժամանակ շահել, որովհետեւ շուտով անձրեւ կը դայ։

— Մգերն էլ է սպանուել։

— Եթէ, Աստուած չանի, Մգերն էլ է վիրաւորուել, ապա նրան կը փոխարինի...

— Կոնկին, վերջապէս այդքան յիմար մի լինիր։ Պատկերացրու թէ ջոկի բոլոր անդամները շարքից դուրս են եկել, կռմտուել է նոր ջոկ, նոր զօրակոչուած մարդկանցից։ Փէզ նշանակել են այդ ջոկին հրամանատար։ Դու ինչպէ՞ս այդ ջոկը առաջ կը տանես։ Պարզ է, որ վաղով չես տանի, եթէ վաղով տանես, գերմանացին, որքան էլ վատ կրակող լինի, կը սպանի բոլորիդ։ Ուրեմն անհրաժեշտ է առաջ գնալ սողալով։

— Որ բոլորին սպանե՞ն սողալիս։

— Ի՞նչ։

— Թոյլ կը տա՞ք խօսել, ընկեր լէյտենանտ։

— Խօսիր։

— Եթէ, Աստուած չանի, ընկեր Սասունեանը վիրաւորուել է, եւ ինձ նշանակել են հրամանատար, ապա ես ջոկը առաջ կը տանեմ բոլորովին այլ կերպ։

— Այլի՞նքն։

— Թոյլ տուէք տանեմ՝ տեսէք։

— Բացատրիր՝ յետոյ։

— Ես ամէնից առաջ կը հրամայեմ տղաներին, որպէսզի դեն նետեն այս անպէտք բաները, — Կոնկինը անպէտք բաներ ասելիս՝ մատնացոյց է անում իրապարկին ու գօտուց կախուած ծանրութիւնները։

— Ինչո՞ւ, — զարմանում է Սուրովը։

— Որպէսզի կարողանան ազատ շարժուել։

— Ճիմարութիւն։ Ճեռո՞յ։

— Ապա դնդացիրը [illegible] Մգերին ու կա-

digitized by A.R.A.R.@

մալովին կը թողնեմ նրա մօտ։ Մդերը ամէն բան գիտի, ափսոս է, իսկ Կամալովի մայրը ուրիշ որդի չունի, դրա համար նրանց կը թողնեմ ու կ'ասեմ, տղերք, ձեզ տեսնեմ, կրակէք։ Իսկ ես՝ միւսներին վերցրած, առաջ կը գնամ ոչ թէ բացատով...։ Այդպէս ինչքան էլ սողաս, մէկ է, կենդանի չես մնայ։ Թագմաճակատը թիկունք չէ, որ սողալով ապրես։ Ես տղաներին կը տանեմ անտառի միջով, աջից, կը շրջանցեմ բացատը։ Ա՛յ, այդպէս կ'անեմ։ Ընկեր լէյտենանտ, այդպէս աւելի լաւ է, քան բացատով սողալ ու չանաստակ լինել, Աստուած վկայ...

— Աստուած վկայ, Աստուած վկայ, այդ ինչ հնոտի է, որ բերանիցդ չես գցում, — ջղայնանում է լէյտենանտը։

Կոնկինը արդարանում է.

— Աստուած վկայ, ես Աստծուն չեմ հաւատում, ընկեր լէյտենանտ։ Խօսք է, այնպէս ասում եմ։

— Զգո՛ստ, — հրամայում է Սուրովը, — պառկի՛ր։

Մենք քարի պէս ընկնում ենք դեռնին։

— Սողալով առա՛ջ։

Եւ մենք սողում ենք։ Տօթ է։ Ես, որպէս կրտսեր հրամանատար, սողում եմ ջոկի առջեւից, իսկ Կոնկինը բոլորից ետ է ընկել։

— Կոնկին, արագ-արագ, ետ ես մնում, — լէյտենանտ Սուրովի ձայնն է։

Ըստ երեւոյթին Կոնկինը հիմա էլ սողում է՝ գլուխը բարձր, որովհետեւ նոյն ձայնը նորից է հնչում.

— Ցիմար, գլուխդ ցածր պահիր, գնդակը գլխիդ կը կպչի։

Ես բաւականին առաջ եմ անցել, դրա համար էլ իրաւունք եմ վերապահում ինձ՝ դադար առնել ու նայել ետ։ Կոնկինը հիմա գլուխն է թաղել խոտերի մէջ, բայց յետնամասը այնքան է բարձրացրել, որ փորը կտրուել է հողից։

— Հիմա էլ գաւակը տնկեց։ Ցածր, ցածր, — ասում է լէյտենանտը, — դու էլ ե՞րբ պէտք է սողալ սովորես, չեմ հասկանում։

— Կարելի՞ է խօսել, ընկեր լէյտենանտ, — հարցնում է Կոնկինը։

— Ի՞նչ պէտք է ասես։

— Ուզում եմ ասել՝ սողալն էլ սովորո՞ւմ է։

— Բա ինչպէս, պէտք է սողաս, որ սովորես։

Կոնկինը յանկարծ պոկւում է տեղից ու դեռնին մերուած առաջ է գալիս։ Ետ է մնում Մհերը, ետ է մնում Կամալովը, ետ են մնում Արամայիսն ու Մախնիաշվիլին, Կոնկինը հասնում է ինձ, եւ մենք սողում ենք զուգահեռ։ Քրտինքը լցւում է աչքերիս մէջ, չունչս կտրւում է։ Ինձ թւում է, թէ սիրտս հիմա կանգ կ'առնի, բայց սողում եմ՝ հեռս քարշ տալով ահագին բեռն ու հրացանը։ Աշխատում եմ Կոնկինից ետ չմնալ, բայց զուր։ Հիմա ես տեսնում եմ նրա կօշիկների ներբանները, որոնք արագ-արագ իրարից ետ ու առաջ են ընկնում, տեսնում եմ մէջքին կապած իրապարկը, որ օրօրւում է մէկ ձախ, մէկ աջ եւ թողած հետքը տրորուած կանաչների վրայ։ Գնալով, իմ եւ նրա միջեւ ընկած տարածութիւնը երկարում է։

Եթէ աշխարհում սողալու մրցութիւն լինի, ապրիւ խօսք, Կոնկինը առաջին տեղը կը բռնի։ Հակագազի ժապաւէնը կտրում է ուսս, չինելի փաթեթը խեղդում է անուրի պէս, նոյնիսկ իրապարկը թրջուել է թիկունքիս վրայ։ Տօթ է։ Կանաչների միջից տաք գոլորշի է զարկւում դէմքիս։ Միայն

digitised by A.R.A.R.@

տաք գոլորշի, օդ չկայ։ Կոնկինի հէրն էլ անիծած, համաչխարհային չէմպիոն է, ինչու մրցել նրա հետ։ Ես կանգ եմ առնում ու նայում եմ։ Լէյտենանտ Սուրովը միմիայն Կոնկինին է նայում, եւ նրա աչքերում դարձանքն ու հիացմունքը խառնուել են իրար։

Հասնելով բացատի ծայրին, Կոնկինը, ուրքի է կանգնում, չուռ գալիս դէպի մեզ ու ծիծաղում է.

— Տեսնո՞ւմ էք, ընկեր լէյտենանտ...

— Կեցցե՛ս, Կոնկին, կեցցե՛ս, այդպէս էլ պէտք է, — ասում է լէյտենանտը։ — Եթէ բոլոր զինուորները քեզ նման լինեն՝ մենք շուտով կը յաղթենք։

— Սողալո՞վ, — Կոնկինը թեւքով սրբում է դէմքը։

— Այո, այո, նաեւ սողալով։

— Եթէ այդպէս է, հիւլէրը թող դայ մրցենք։ Ով յաղթեց, թող նա պատերազմը շահի։ Էլ ինչ կարիք կայ կոտորել իրար։

Մենք ծիծաղում ենք, լէյտենանտն էլ է ծիծաղում եւ հրամայում է շարուել։ Երբ մենք շարք ենք կանգնում, Սուրովը շնորհակալութիւն է յայտնում Կոնկինին «անմոռոց սողալու համար»։

Արամայիսի աչքերը շողում են նախանձից։

Անձրեւի տարափը սկսում է։

⁂

Օրերն անցնում են, բայց մենք դեռ անտառում ենք։ Մեզ տուել են պողպատեայ սաղաւարտներ, որոնք իջնում են գրեթէ մինչեւ աչքերս։ Առաջին երկու օրը դրանցով քնելը դժուար էր, առանց դրանց քնելը՝ աւելի դժուար, որովհետեւ Կամալովը բոլորիս գլուխները մաքուր սափրել է։ Հիմա լաւ է, նոյնիսկ շատ լաւ։ Երկու օրուայ մէջ մեր պարանոցները կարծես ամրացան եւ արշնանալիս այլեւս չեն ցաւում։ Սաղաւարտների եզրերը բարձր են, դրա համար էլ մենք քնելուց առաջ քարեր չենք որոնում՝ գլխի տակ դնելու համար։

Սակայն ամէնից շատ մեզ ուրախացրին անջրանցիկ թիկնոցները, որ սաղաւարտների հետ նոյն օրը բաժանեցին մարտիկներիս։ Հիմա ինչքան ուզում է, թող անձրեւ դայ։ Հիմա մենք ունենք մեր վրանները։ Որել ենք ցցեր, թիկնոցի ծայրերը կապել դրանցից եւ անունը դրել վրան, որի տակ, ի հարկէ, մենք մտնում ենք ոչ թէ կռացած, այլ սողալով։ Աւելի լաւ է սողալով խցկուել վրանի տակ ու քնել հանգիստ, քան թէ սողալով կտրել ամբողջ բացատը։ Ահա թէ ինչու, մենք ուզում ենք, որ միշտ անձրեւ գայ, բացի երեկոներից, քանի որ երբ մութն ընկնում է, մեզ համար ամէն օր կինոցի երեկոներից, քանի որ երբ մութն ընկնում է, մեզ համար ամէն օր կինոնկարներ են ցուցադրում։ Մեզ ասելով, ես անշուշտ նկատի ունեմ մեր ամբողջ գունդը եւ ոչ թէ միայն Մհերին, Կոնկինին, Մախնիաշվիլիում, Կամալովին, Արամայիսին եւ ինձ։ Գնդի հրամանատարը, որ կազմակերպում է կինոնկարների ցուցադրումը, երեւի մեր գոյութեան մասին ոչ մի լուր չունի։ Շատ-շատ նա կ'իմանայ, որ իր գնդում կայ գնդացրային վաշտ, վաշտում՝ երկու դասակ, եւ իւրաքանչիւր դասակում՝ ջոկեր։ Այդքանը անպատճառ կ'իմանայ, որովհետեւ գոյութիւն ունի զինուորական կանոնադրութիւն։

digitised by A.R.A.R.@

թիւն, իսկ զնդի հրամանատարը փոխ-զնդապետի կոչում ունի։

Դա այնքան էլ էական չէ, էականը կինոնկարն է, որը մենք խոտերին թափուած դիտում ենք։ Մարդիկ գալիս են էկրանի վրայ, հաւաքւում ժողովի ու ճառում են։ Ճառում են, երբ երկուսով են լինում, ճառում են, երբ մենակ են։ Եւ երբ ճառերն աւարտւում են, նա արթնացնում եմ Մախնիաչվիլուն։ Նա շտկւում է տեղում ու թեւերը պարզելով յօրանջում է։

— Հէ՛յ, — ասում է մի զինուոր, որի ակնոցները աստղալոյսի տակ փայլփլում են, — սա ձեր տունը չէ։

Նրա ձայնի մէջ արհամարհանք կայ, դրա համար էլ Մախնիաչվիլին չի համբերում.

— Դուք նախ եւ առաջ մարդու հետ խօսել սովորէք։ Հիմա որտեղ եմ՝ այնտեղ էլ իմ տունը։ Եթէ մեր տունը չէ, ձերն էլ չէ։

— Տեսնում ենք, թէ ինչպէս խօսել գիտես, — այս անգամ շեշտերը առաջին վանկերի վրայ դնելով, ծաղրում է Մախնիաչվիլու առոգանութիւնը, — քո տունն է, թէ քո տունը չէ, քաղաքավարի եղիր։

— Ձեր կարծիքով ո՞րն է անհրաժեշտ՝ քաղաքավարութի՞ւնը, թէ՞ ազատութիւնը, — Մհերը դանդաղ մօտենում է անծանօթ զինուորին, որն այնքան բարակ է, որ մթութեան մէջ ձողի պէս է երեւում։

— Իսկ դու քիթդ մի խոթիր այնտեղ, որտեղ պէտք չէ։

— Հէ՛յ, լուցկու պոչ, — շարունակում է Կոնկինը, — փատափուսէդ քաշիր, քանի դեռ անձրեւ չի եկել, թէ չէ կը թրջուես, էլ բանի պէտք չես գայ։ Հասկացա՞ր։

Տեսնում եմ, որ անծանօթ զինուորը չի նահանջում եւ կարող է վատ բան դուրս գալ, մօտենում եմ, ուզիղ կանգնում նրա առաջն ու զուսպ ասում.

— Զդա՞տ։

Զինուորն խսկոյն քարանում է տեղում։

— Ե՞տ դա՛րձ, քայլո՛վ մա՛րշ։

Թէեւ նա խաւարում չի նկատում իմ տարբերանշանները, բայց անձայն ենթարկւում է ինձ, քանի որ ես հրամայում եմ, իսկ նա զինուոր է։ Կոնկինը բարձր ծիծաղում է հեռացող զինուորի եռեւից, իսկ Մհերը ասում է.

— Մի ծիծաղիր, Կոնկին, նա մերն է։ Մարդու վրայ չեն ծիծաղի։

Անտառի միջով գնում ենք դէպի «տուն», եւ ես նորից յիշում եմ, որ պատերազմ է։

⁂

Ամէն օր քաղդեկ Լիվչիցը վաշտը հաւաքում է բացատում ու «Պրաւդա» է կարդում։ Լուրերը տխուր են, բօթ են։ Մերոնք անընդհատ նահանջում են՝ թողնելով քաղաքը քաղաքի եռեւից, բնակավայրը բնակավայրի եռեւից, եւ մենք տարակուսում ենք։ Մենք ծնուել ենք, ու մեզ ասել են, թէ մեր բանակը աշխարհի ամենազօրեղ բանակն է, եւ մենք հաւատացել ենք։ Բայց ինչո՞ւ մերոնք նահանջում են, իսկ թշնամին ասպատակելով առաջ է գալիս։ Սա ի՞նչ բան է։

Եւ քաղդեկ Լիվչիցը պատասխանում է.

— Մենք թշնամուն քաշում ենք մեր երկրի խորքը, որպէսզի ամէն քար, ամէն ծառ, ամէն թուփ կրակի նրա վրայ։ Մենք Հիտլէրի հետ վարւում ենք այնպէս, ինչպէս կուտուզովը՝ Նապոլէոնի հետ։

digitised by A.R.A.R.@

Գերեվերդուը խոնարհում է գլուխը, ապա նորից բարձրացնում, եւ նրա դէմքի վրայ կարմիր բծեր են երեւում։

— Ուրեմն մենք Մոսկուա՞ն էլ պէտք է յանձնենք, — յուզում են գինուորները։

— Եթէ անհրաժեշտ լինի՝ կը յանձնենք նաեւ Մոսկուան, — պատասխանում է քաղդեկը՝ ալխատելով ուրախ երեւալ, որպէսզի մարտիկները հոգեպէս չընկճուեն, — սակայն Մոսկուան յանձնելու հարկ չի լինի, որովհետեւ Թշնամին մինչեւ Մոսկուային հասնելը ծուղակի մէջ կ'ընկնի։

Գերեվերդուի դէմքի վրայ շատացող կարմիր բծերը սկսում են թրթռալ։

— Սիրելի ընկեր Լիվչիդ, — ասում է նա, — արի գինուորներին ասենք ճշմարտութիւնը։ Սրանք մերն են, օտար չեն։ Սրանք պէտք է փրկեն Հայրենիքը եւ հարկ չկայ, որ մենք ճշմարտութիւնը թաքցնենք սրանցից։ — Գերեվերդուը դիմում է մեզ։ — Հարազատներս, մենք նահանջում ենք ոչ թէ նրա համար, որ թշնամուն ծուղակի մէջ գցենք, այլ նահանջում ենք, որովհետեւ չնահանջել չենք կարող։ Առայժմ թշնամին ուելի զօրեղ է մեզանից։ Սա է ճշմարտութիւնը։

Գալիս է գնդի կապիտանն ու յայտնում, որ շտաբում խորհրդակցութիւն կայ։ Հրամանատարները գնում են։ Մենք գրում ենք անտառում եւ նորից պատկում խոտերի մէջ։ Տխուր ենք։ Այն, ինչ ասաց վաշտի հրամանատար Գերեվերդուը, մենք գիտէինք։ Մենք գիտէինք, որ նահանջողը թոյլ է, գրաւողը ուժեղ։ Սակայն իմանալով հանդերձ չէինք հաւատում մեր իմացածին, մենք կասկածում էինք։ Շնորհակալութիւն քեզ, հրամանատար, դու ասացիր ճշմարտութիւնը, եւ մեր կասկածները փարատուեցին։ Ինչ փոյթ, թէ տխրեցինք մենք, ինչ փոյթ, թէ քո ասած ճշմարտութիւնը դառն էր։ Մենք հիմա հաւատում ենք մեր իմացածին ու չենք կասկածում, մենք քուժուել ենք։

— Բախտներս բերել է, — ասում է Մախնիաշվիլին, — լաւ հրամանատար ունենք։ Այդպիսի մարդու հետ չես կորչի։

— Շատ լաւ մարդ է, — հաստատում է Մհերը։

Արամայիսը, աչքերը ցած խոնարհած, ինքնիրեն ժպտում է։

— Ի՞նչ կայ, Արամայիս։

— Մեր աւագ լէյտենանտը... ինչ լաւ մարդ է։ Կարծես աւագ լէյտենանտ չլինի, այնպէս հասարակ է պահում իրեն։

— Մարդ ճիշդ ասի՝ լաւ մարդ, մարդ աստ ասի՝ վատ մարդ, — Կամալովը ամէն բան արտասանելիս օգնութեան է կանչում ձեռքերը, որպէսզի կարողանայ իր միտքը մի կերպ տեղ հասցնել։

— Հիւլէր, չան որդի, — Կոնկինը օրօրում է գլուխը։ Նրա բռունցքները սեղմուած են, — թէ ձեռս կ'ընկնէի՛ր։

— Ի՞նչ կ'անէիր, Կոնկին, — հարցնում է Մհերը։

— Կը սպանէի, ինչ կ'անէր, — ասում է Արամայիսը։

Կոնկինը լուռ է։

— Կախել, կախել, — Կամալովը ցոյց է տալիս ծառը։

Կոնկինը բացասաբար օրօրում է գլուխը։

— Օրական մի քիչ կը կարէի՞ր, — հարցնում է Մախնիաշվիլին։

— Եւ ոչ էլ այդպէս կ'անէի։

— Հեսաքրքիր է, բա ի՞նչ կ'անէիր։

digitised by A.R.A.R.@

— Ինչ կ'անէի՞։ Գիտէ՞ք ինչ կ'անէի։ Կ'ասէի՝ կեր այն, ինչ ես եմ ուտում, հագիր այն, ինչ ես եմ հագնում, արա այն, ինչ ես կ'անեմ։ Իսկ իմ ծննդավայրը Դոնքասն է, այնտեղ ածխահորեր շատ կան։ Այ թէ ինչ կ'անէի։

— Դա էլ եղաւ պատի՞ժ, — առարկում է Մախնիաչվիլին։

— Թանկ եմ ծախում, մի առ։ Ես այդպէս կ'անէի։ Ի՞նչ կ'ասես, Մգեր։

— Դա ինչ պատի՞ժ է, — նորից առարկում է Մախնիաչվիլին։

— Շարքային զէրմանացու համար պատիւ է, իսկ Հիտլէրի համար՝ պատի՞ժ։ Ինքը մտածիր, կը հասկանաս, — ասում է Մգերը։

Հով չկայ։ Մառերի սառուցները թափուել են կանաչներին ու անչարժացել։ Անդորր է։ Անտառում ծաղիկներ կան, ծաղիկների վրայ՝ մեղուներ, որոնք գործում են այնպէս, ինչպէս գործում էին երեք օր առաջ։ Նրանք չգիտեն, որ պատերազմ է։

***

Լինում են պահեր, որ մենք չենք յիշում, թէ պատերազմ կայ։ Դրանք մեզ համար ամենաուրախ պահերն են։ Երեխաների պէս կախւում ենք ծառերից, թաւալւում խոտերի մէջ եւ ամէնից շատ անեկդոտներ պատմում։ Բայց այդ պահերը միշտ կարճ են տեւում, որովհետեւ կամ գալիս է լեյտենանտ Սուրովը, եւ մենք գնում ենք քացատում տաղալու, կամ մեզանից մէկն ու մէկը յանկարծ տխրում է։ Երբ մեզանից մէկը տխրում է, մենք յիշում ենք, որ պատերազմ կայ, եւ անեկդոտն ու ծիծաղը կիսատ են մնում։

Օրերը միապաղաղ են, տարտափելի իրար նման, ինչպէս կամալովի մի աչքը՝ միւսին։ Առաջ հայրենական տունը մեզ համար ցանկալի էր, իսկ հիմա՝ անչանգ՝ հեռաւոր ու անհաս։ Այժմ ցանկալին մեր ճամբարն է, մեր վրանները, լիմոնադի փոքրիկ գործարանը, որի լուսամուտներից մենք ճերմակ խալաթ հագած կին ու աղջիկ էինք տեսնում։ Նրանք բոլորն էլ գեղեցիկ էին, որովհետեւ անտառում ընկած մեր մենաւոր ճամբարում նրանցից բացի ուրիշ կին չկար։

— Ինչո՞ւ բերեցին այստեղ, չեմ հասկանում։ Աւելի լաւ չէ՞ր մնայինք ճամբարում, — դժգոհում է Մախնիաչվիլին։ — Կամ այստեղ, կամ այնտեղ, ի՞նչ տարբերութիւն։ Լագերում գոնէ ծղօտէ ներքնակներ կային։

— Վրանները ոպիտակ են, թշնամին կարող է ռմբակոծել, — ասում է Արամայիսը։

— Վրանները ոպիտակ են։ Բան առաց։ Դժուար էր ներկել կամ պարզապէս քողարկել հիւղերով։ Արդէն քանի՞-քանի՞ օր է բաղնիք չենք գնում։

Կոնկինը կարծես այդպիսի բանի է սպասում, որպէսզի ասի.

— Մախնիաչվիլի, դու կարծում ես, թէ միայն դասակի՞ հրամանատարը կարող է Սուրով լինել։

— Ի՞նչ։

— Ոչինչ։

— Հա՛, պարզ է...

— Ոչինչ էլ պարզ չէ, — ասում եմ ես, — մեզ այստեղ են բերել, որ մօտ լինենք երկաթուղուն։

digitised by A.R.A.R.@

— Գաղտագրում աւելի մօտ կը լինէինք։

— Մի օրում զօրանո՞ց կառուցէին...

— Նամակ չկայ, նամակ, — ասում է Կամալովը, եւ մենք դադարում ենք վիճելուց։

Երբ Կամալովն ասում է, թէ նամակ չկայ՝ նկատի ունի միայն իրեն, որովհետեւ պատերազմն սկսուելուց յետոյ Կոնկինը մի նամակ ստացել է։ Ճիշդ է, մենք աշխարհից կտրուած չենք, թերթեր ենք կարդում, քաղաքին ու նրա օգնականը ամէն օր քաղաքագրամունք են անցկացնում, բայց նամակը մեզ համար ուրիշ բան է։

Ինդրում ենք Կոնկինին, որպէսզի կարդայ մօրից ստացած նամակը, եւ նա կարդում է.

«Իմ սիրելի Վասեա,

«Նստած եմ սեղանի առջեւ ու չգիտեմ, թէ ինչ գրեմ քեզ։ Նախ եւ առաջ մեր մասին։ Այսօր դպրոցի բարձր դասարանի աշակերտներին գինեցին։ Նրանք այնքան փոքր են, որ հրացանը կրում են որպէս ծանրութիւն։ Բայց գինուեցին։ Մենք լաց էինք լինում, իսկ նրանք ծիծաղում էին։ «Գնում ենք Հիտլերին սպանենք», ասում էին ու ծիծաղում։ Ես նայում էի նրանց ու լաց էի լինում քեզ համար, քո ընկերների համար, այդ երեխաների համար, որ դեռ չեն հասկանում, թէ ինչ է պատերազմը։

«Ես մայր եմ ու չգիտեմ, թէ ինչ ասեմ քեզ։ Եթէ ասեմ գլուխդ պահիր, չի լինի, որովհետեւ ուրիշներն էլ մայր ունեն, իսկ Հայրենիքը վտանգի մէջ է։ Եթէ ասեմ մի խնայիր քեզ, դարձեալ չի լինի։ Որովհետեւ ես մայր եմ, իսկ դու իմ որդին ես։ Թող անիծուի Հիտլերը, թող անիծուեն նրանք, ովքեր պատերազմ բերեցին։

«Դպրոցը փակում են, այսինքն՝ դարձնում հոսպիտալ։ Այսօր խնդրեցի, որ ինձ աշխատանքի վերցնեն։ Շնորհակալ եմ, ընդառաջեցին։ Կ'աշխատեմ որպէս քոյր։

«Իմ սիրելի Վասեա, երբ քեզանից նամակ է գալիս, չգիտես, թէ ինչ է կատարւում ինձ հետ։ Ես ուրախանում եմ, եւ աւելի կարօտում քեզ։ Որտեղ էլ լինես, յիշիր մօրդ եւ շուտ-շուտ նամակ գրիր։ Ուրիշ ի՞նչ ասեմ։ Ասածս սիրոյն. քեզ պահիր, ինչի՞ է պէտք իմ կեանքը՝ առանց քեզ»։

— Մայրդ ուսուցչուհի՞ է, Կոնկին, — հարցնում է Մհերը։

— Ինչի՞ց իմացար։

— Նամակից։

— Այո, ուսուցչուհի է։

— Ի՞նչ պէտք է գրես մօրդ։

— Խմել եմ ուզում, — պատասխանում է Կոնկինը։

Յետոյ նամակ ենք ստանում բոլորս, բացի Կամալովից։ Երբ կարդում ենք նամակներն ու թարգմանում իրար, Մհերը ասում է.

— Մի բան նկատեցի՞ք։

— Ի՞նչ։

— Մեր բոլորի նամակներն էլ նման են իրար։ Հետաքրքիր է, թէ ի՞նչ կը գրի Կամալովի մայրը Տաշքենդից։ Ասենք, ինչ պէտք է գրի, մայրն ամէն տեղ էլ մայր է։

Միշտ ես մօրս էի կարօտում, բայց այս անգամ յիշել եմ հօրս եւ, չգիտեմ ինչու, լացս գալիս է, թէեւ չեմ յիշում, թէ արցունքներ վերջին անգամ ինչու, լացս գալիս է, թէեւ չեմ յիշում, թէ արցունքներ վերջին ան-

digitised by A.R.A.R.@

գամ երբ են ընկել իմ աչքերից։ Փղձուկը դանդաղ բարձրանում է իմ կոկորդով, եւ ես ստիպուած ատամներս սեղմում եմ իրար, որպէսզի զսպեմ ինձ։

Երեւի հայրս նախազգում էր, որ պատերազմ կը լինի, դրա համար էլ, երբ մեզ բանակ էին տանում, գալիս էր այն սայլի ետեւից, որի վրայ ես էի նստած։ Քանի՛-քանի՛ անգամ գրկել էր ինձ, համբուրել, սեղմել էր ձեռքս, ասել. «Բարով ետ դաս», բայց էլի քայլում էր՝ սայլի ետնամասից բռնած։ Սայլը արագացրեց ընթացքը, հայրս վազեց նրա հետ, իսկ երբ ձիերը արշաւեցին քառատրոփ, հայրս կանգ առաւ։ Հիմա ես տեսնում եմ նրա հայեացքը, տեսնում եմ այնպէս, ինչպէս այն ժամանակ, երբ ձիերը արշաւեցին քառատրոփ։ Կարծես սայլը պոկուել էր հօրս ձեռքից ու դահավիժել անդունդը, իսկ սայլի վրայ ես էի։ Փակում եմ աչքերս՝ այդ տեսարանն է, բացում եմ աչքերս՝ դարձեալ... Եւ փղձուկը նորից բարձրանում է իմ կոկորդով։ Ինչո՞ւ ես ցած չթռայ սայլից, ինչո՞ւ մի անգամ էլ չգրկեցի քեզ, հայր, որպէսզի ժեղմանար քո հայեացքը։ Աւելի լաւ չէ՞ր լինի, որ վերջին անգամ ես արցունք տեսնէի քո աչքերում, թախիծ տեսնէի, քան թէ այն սարսափը, որ հիմա տանջում է ինձ։ Մի՞թէ զգում էիր, որ պատերազմ կը լինի, դրա համար էլ գիւղն ու գիւղացիները մնացել էին հեռու, իսկ դու գալիս էիր այն սայլի ետեւից, որի վրայ ես էի նստած։

Պատկում եմ խոտերին ու նամակ գրում հօրս։ Խնդրում եմ նրան, որ նկարուի ու նկարն ուղարկի ինձ, շուտ ուղարկի։ Արդեօք, երբ այդ նկարը գայ, ես կը մոռանա՞մ հօրս վերջին հայեացքը։

«Իմ սիրելի հայրիկ, ես գիտեմ, որ մենք կը հանդիպենք իրար, անպայման կը հանդիպենք», — գրում եմ ես ու չգիտեմ՝ հաւատամ իմ դրածին, թէ չհաւատամ։

ԲԱՂԻՇ ՑՈՎՍԷՓԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Ա. ՑԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Բանաստեղծ եւ թարգմանիչ Արաեմ Ցարուբիւնեան ծնած է 19 Սեպտեմբեր 1945թն՝ Մոսփանակերտ։ 1968թն կ'աւարտէ Երեւանի պետական համալսարանի բանասիրական ճիւղերու հայկական բաժինը, իսկ 1971թն՝ Մոսկուայի Մ. Կորքիի անուան համաշխարհային գրականութեան հիմնարկի արտասահմանեան գրականութեան ասպիրանտուրայի անգլիական բաժինը։ 1973թն, կը պաշտպանէ գիրական ուղղութիւնների պայքարը XX դարի անգլիական վէպում» խորագրեալ իր ատենախօսութիւնը եւ կը ստանայ բանասիրական գիտութիւններու թեկնածուի աստիճան։ 1971էն ի վեր Ցարուբիւնեան կը պաշտօնավարէ Երեւանի պետական համալսարանին մէջ՝ իբրեւ գրականութեան պատմութեան դասախօս։

1977թն հրատարակուած իր երախայրիքը՝ «Նշանների երկիր» անուն քերթողութիւնը կ'արժանանայ «Ցարուցայ լուսոյն գիրքը» մրցանակին։ Այնուհետեւ կը հրատարակէ երկու քերթողութիւն՝ «Ցնորաշունչ» եւ «Ընտ»։ Թարգմանած է ճէյմս Ճոյսի «Տայլինցիներ» պատմուածքներու հաւաքածոն (հեղինակակիցներ ունենալով Գարեգին Ցարուբիւնեանն եւ Աքամ Արզէնեանը)։

ԱՆՀՈՒՆԸ

Ահա հայեացքդ տեսնում է լեռներ,
Ծառերն են շտապ հորիզոն գառնում,
Քաշքշում են իրար մի ամպ եւ քամի
Եւ արագ տանում պատճառը վէճի։

Մի մեղմ անձրեւ է յետոյ կաթկթում
Սպարթների մէջ փոշոտ ծառերի,
Եւ կարծես տեքստ է դրւում քո առաջ,
Որ հղանակն է զգոյշ կազմել։

Համեմատւում են հողն ու երկիրը,
Քամին, սպարթը վաղուց յոգնած,
Բայց օրը չի պահում իր մէջ ոչ մէկին,
Եւ մեզ գիշերն է ետ կանչում։

Լանջը տարիների փակւում է իսկոյն,
Մթութիւնը գմռւում է չորս կողմից,
Եւ նոյն տհազնութիւնն է յայտնւում քո առաջ,
Որին ցերեկը չես յիշել։

digitised by A.R.A.R.@

ՀԱՑԱՍՏԱՆ

1

Հող,
որ կոտրուածք է ստացել քարի պէս,
քէ նայես վերեւից,
ամէն ինչ փորձում է
ճեղքել-դուրս գալ
իր բազալտէ մահճից,
ուր արթնացողն Արարողն էր:
Երկիր՝
հուազող քարէ ալիք,
ոչ հորից է ծնուում,
կիսալուսնի
խաղոտ լաւայի հրէշաւոր
մտադրութիւնից ազատուած,
յետոյ, այդպացին՝
տեսիլքից ծնուած մաքուր լեռներ,
դաշտեր, ուր լոյսի մուտքը կեանք է արարում
լանջերի վրայ քար-լերան:
Ես հկել եմ ցոյց տալու
կորսուած երազը մի անգամ էլ,
ցոյց տալու մաքուր երփներանգ տեքստը
բլրալանջերի,
ուր գիւղերը ծխում են
իրենց չրոդհատուող մաքրութիւնը,
եւ ճերքեւ շտապող առուն
խոխոջում է անդիշաչարութիւնն իր արծաթէ
եւ մեռութիւնը կարծեցեալ:

2

Ցեղասպանութեան դարակիզը,
նաբաղանը յօշոտում էր
անաղարտ դէմքը մանկան,
քնի եզրից մինչեւ մահ,

digitised by A.R.A.R.@

թուում էր յաւերժ կար,
բայց աւեր եղաւ,
գերեզմանների քարէ հաւատարմութիւն,
որտեղ յարութիւնը մարդու համար
մի այլ դար էր պահանջում:
Մեզ փրկում է գեղեցիկը,
ժառանգաբար մեզ հասած հրաշք դէմքը մանկան,
եւ հոգի գիտակցութիւնը
կարծրանում է օրէցօր՝
բայց հողը չի մոռանում ոչինչ,
անգամ եթէ բացակայում են Վկան ու Զոհը,
մեր հոգը խօսում է
տաճարների վսեմ հասակով,
որ կանգնած են լանջի
մարբամաքուր ափերում,
որ պարուրուած են դաղձի
անուշահոտ ստուերով
եւ ազահ են ազօքֆի՝
վաղուց ցամաք կոկորդով:

3

Կերպարանափոխիր ինձ՝
ամոյի ստուերից մինչեւ մարդ,
միջատների միալար ձայնից՝ մինչեւ երգը թռչնի,
խորացրու բառերի անկումից ծնուող այս սէրը,
մինչեւ ոսկին խօսքի,
դարձրու ինձ տուն, նոր անկում,
որ ես ուժ ունենամ արթնացման:
Հանգստացրու ինձ,
տես՝ օրը վազում է արեւի յետեւից
եւ վերադառնում՝ ուրուական:
Եւ հեռուն նորից ծնոզի ձեռք է,
որ պաշտպանում է, բայց չկայ,
եւ կարծես յուշում անանկատ՝
որ միայն բարին է տիրելու,
ինչպէս որ սէրն է իրական:

ԱՐՏԵՄ ՑԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Գ. ԱՐՇԱԿԵԱՆ

Արձակագիր եւ թատերագիր Գէորգ Արշակեան ծնած է 20 Փետրուար 1928թին՝ Թուլատանի Գրասենասարի Երկրամասի Արմաւիր քաղաքը։ Ուր տալ եկանին գիտանիքին հետ կը փոխադրուի Հայաստան եւ կրթութիւնը կը ստանայ նախ Լենինականի № 3 միջնակարգ դպրոցին, ապա՝ Երեւանի Թումանեանի անուան միջնակարգ վարժարանին մէջ։ Տակաւին պատանի՝ 13 տարեկանին կը նետուի կեանքի ասպարէզ եւ կ'աշխատի մէկէ աւելի հիմնարկներու մէջ։

1963թին, իբրեւ խմբագիր կ'աշխատի պատկերասփիւռի եւ ձայնասփիւռի հաղորդումներու պետական կոմիտէին մէջ։ 1966թին կը նշանակուի «Սովետական գրող» (մինչեւ 1976թի կէսը՝ «Հայաստան») հրատարակչութեան գլխաւոր խմբագրի տեղակալ եւ այս պաշտօնը կը վարէ մինչեւ 1978։ Միաժամանակ իրեն կը վստահուի նոյն հրատարակչութեան ժանկապատանեկան գրականութեան խմբագրութեան գլխաւոր խմբագրի պաշտօնը, զոր կը վարէ մինչեւ օրս։

Գ. Արշակեանի «Այս աշխարհի փոքրերը», «Բակի վերջին գիշերը» եւ այլն նուն թատերախաղերը բեմադրուած են հայրենի բեմերուն վրայ։ Հրատարակած է չորս հատոր, — «Թրաշուշանները», «Սեւ եւ սպիտակ կարապները», «Գեղի բոյրը» եւ «Գնացքները»։ Իր գործերը լոյս տեսած են նաեւ ռուսերէն, լիտվերէն, պուլկարերէն, չէխերէն, լեհերէն եւ այլ լեզուներով։

ՍԵՒ ՈՒ ՍՊԻՏԱԿ ԿԱՐԱՊՆԵՐ

Կանաչ պատշգամբ։ Տգան ներկել էր, որ ծառերը չուտ բարձրանան վեր։ Առաջուայ նման, իջեցուած վարագոյրների յետեւից, հազիւ նշմարւում էր սենեակում վառուող դեղին լոյսը։ Մարդիկէն հասկացաւ, որ իրենց տանը մարդ չկայ։ Ցանկացաւ բարձրանալ, բայց ոտքերը չդնացին։ Կանգնել էր, չէր կարողանում։ Ոտքերը նրան հեռացնում էին տանից, իսկ նա չարունակ շրջւում էր ու նայում կանաչ պատշգամբին։ Ամէն առաւօտ ինքը եւ տղան այդտեղից էին նայում այն լեռներին, որտեղ աշխատում էր ամուսինը։ Երկուսով այնքան էին նայել, որ լեռները մօտեցել էին։ Ու տղան գրեթէ միշտ ծափ էր տալիս ու բացականչում.

— Մայրիկ, մարդիկ են քայլում, տեսնո՞ւմ ես, հայրիկը դնում է առջեւից։

digitised by A.R.A.R.@

Ինքն էր տղային այդպէս ասել. «Մարդիկ են քայլում ու հայրիկը գնում է առջևից»։ Նա ուրախ էր, որ տղային կարողացել է մոտեցնել հեռուում, դէպի երկինք խոյացող լեռները։ Այնքան բան նա ինքն իր համար էր արել նաև։

— Տեսնում ես, մարդիկ են քայլում, ես մեր հայրիկը գնում է առջևից։ Մայրիկ, ամէն օր ո՞ւր են գնում։

— Դէպի դաշտը։

— Ամէն օր գնում են ու չե՞ն հասնում։

— Հասնում են։ Արևի հետ են բարձրանում, արևի հետ էլ իջնում են։

— Ինչո՞ւ են բարձրանում ամէն օր, ձի՞ւն ուտելու։

Մարիանն ինքն էլ հաստատ չգիտէր՝ ինչո՞ւ են բարձրանում։ Հարցնում էր ամուսնուն, իսկ նա ծիծաղում էր ու ասում. «Երջանկութիւնը բաժանում ենք դժբախտութիւնից»։

Իսկ տղան.

— Ինչո՞ւ են բարձրանում ամէն օր, ձիւն ուտելո՞ւ։

— Այո, — պատասխանում էր ինքը։ Նա յաճախ «այո» էր ասում առանց լսելու, թէ տղան ինչ է հարցնում։ Ինչ վերաբերում էր հօրը, նա պէտք է «այո» ասէր, որ տղան իրեն լաւ զգայ։ Երբ տղան իրեն լաւ զգայ, ինքն էլ իրեն լաւ կը զգայ։

— Ես էլ եմ ուզում ձիւն ուտել։

— Մի քիչ էլ մեծանաս, հայրիկը քեզ իր հետ կը տանի ձիւն ուտելու։

— Ոը մեծանամ, էլ ձիւն չի լինի։

— Չի հալուի, այլ ձիւնը միշտ կայ։

— Փխրուն է, մեր բակի ձեան նմա՞ն։ Ես գունդ էի սարքում, իսկ նա քանդւում էր։

— Երեւի։

— Դու չե՞ս տեսել։

— Ոչ։ Հայրիկդ ասում է՝ երկուսիս միասին կը տանի։

— Ե՞րբ էր ասում, դիշե՞րը։

Նայեց տղային ու ծիծաղեց.

— Չէ, շատ վաղուց։ Այն ժամանակ, երբ քեզ բռնեցինք Հրազդանից։

— Վաղուց չէր, — ասաց տղան, — ես լսում էի։ Հայրիկն իջել էր լեռներից ու քեզ դաշտաթռչունների մասին էր պատմում։ Դու զարմանում էիր, կուլում էիր, որ քեզ տանի իր հետ։ Ես բղաւեցի՝ հայրիկ, յետոյ բղաւեցի՝ մայրիկ։ Դուք ձայն չհանեցիք։ Առաւօտեան հայրիկն իմ կողքին էր նստած. աչքերս բացեցի, քթիս ծնծաղիկ էր մօտեցնում։ Ասացի հոտ չի գալիս։

— Դու երազ ես տեսել։

— Հէչ էլ չէ, հայրիկն ինձ ծնծաղիկ չտուե՞ց։

— Տուեց, ճիշդ է։

Ետ էր նայել ու յիշել։ Մէկ էլ ետ նայեց, դեղնեց պատշգամբը աչքին, տերեւ առ տերեւ թափուեց ներքեւ, ու յանկարծ, քամին փողոցի անկիւնում նրա դէմքին շորացած մի տերեւ նետեց։ Հանոյք էր այդ հարուածը։ Հոգին բաց եղաւ քամու դիմաց ու զով չունչ առաւ։ Նա գնաց փողոցն ի վար, ուղիղ կենտրոնից, աջ ու ձախ թողնելով դատարկ մայթերը։ Մի կին, գիշերանոցով կանգնած հին տներից մէկի շեմին, ամուսնուն էր ողջունում։ Դեռատի էր, անհանգիստ, բոցբոցում էր կրակի գոյնի գիշերանոցը։ Նայեց քիչ ու էր, անհանգիստ, բոցբոցում էր կրակի գոյնի գիշերանոցը։ Նայեց քիչ ու անցաւ, չխոսեց։ Մի փոքր այն կողմ, երիտասարդի մէկը պատին սեղմած համբուրում էր մի աղջկայ։ Տեսաւ, անցաւ ոչինչ չնկատողի նման։

digitised by A.R.A.R.@

կեանքը մնում է այնպէս, ինչպէս կայ։ Վիշտն աւելի է խորացնում ապրելու ցանկութիւնը։

Նա քայլում էր, շուրջը չէր նայում այլևս, բայց տեսնում էր ամէն ինչ, ընկալում ամէնը։

Մարինէն ուզում էր հարազատ մի բան փրկել, որն արդէն փրկելու չէր։

Եւ կորցնում էր աշխարհը, հոգին լցւում էր յուսահատութեամբ։ Ու ինչպէս միշտ նման պահերին, նրա դիմաց ելնում էր Հայր մօրաքոյրը՝ «վիթխարի կինը», որը ցերեկը պառ էր շարում, գիշերը պահակում չէնքին։ Բայց նրան յիշելիս փոքրանում էր ինքը։

Նա հեռուից տեսաւ նորակառոյց տների շարքը։ Յաղթանակի զբօսայգու վերեւում, լուսարձակների խաղի մէջ։ Այդ շարքում նա արդէն երկու չէնք էր յանձնել շահագործման, եւ կիսատ էր երրորդը։ Դիպլոմային աշխատանքը պաշտպանեց առաջին չէնքի կառուցման ժամանակ. «Հաւաքոցի երկաթ-բետոնէ տների առանձնայատկութիւնները»։ Սկզբում ինքն էլ չգիտէր, թէ ինչն է դրանց առանձնայատկութիւնը։ Ուսումնասիրեց ամբողջ աշխատանքի ընթացքում եւ պաշտպանեց դիպլոմը։ Մի քանի տարի տեւեց առաջին կառոյցի շինարարութիւնը։ Այնքան էլ բարդ չէր աշխատանքը։ Մարդիկ էին տարօրինակ։ Հասակաւորներ կային՝ հանդիստ ու խաղաղ։ Կեանքը նրանց սովորեցրել էր չվրդովուել։ Իսկ երիտասարդ բանուորները տաքարիւն էին ու ջղային։

— Ինժեներ, խելքդ որ չի հասնում, մի խառնուիր գործին, — ասում էին նրանք ու ծիծաղում։

Կարմրում էր ամօթից։ Ուզում էր լաց լինել։ Օր-օրին յամաքեցին հոդում արցունքների կաթիլները։ «Ուշ թէ շուտ կը սովորեմ գործը, — մտածում էր նա։ — Բայց ինչպէ՞ս սովորեմ մարդկանց, որ լսեն ինձ»։

Ընդամէնը քսաներեք տարեկան էր, քնքուշ մի կին, նորաձեւ շրջազգեստով, մազերը յարգարած, դեղեցիկ։ Ամէն րոպէ թափ էր տալիս վրայի փոշին, ման էր գալիս բարձրակրունկ կօշիկներով, կարգադրութիւններ անում։ Մեքենան էր ընկնում վրան, վշտացած նայում էր. ընկա՞ւ, թէ՞ դիմամբ գցեցին։ Տղաները պատի յետեւում զուարճանում էին, ինքը լսում էր նրանց ձայնը։ Նեհարեց, հիւանդացաւ։ Պառկեց։ Լեռներից իջաւ Գարեգինը։ Դրան յետեւում տեսաւ կնոջ բանուորական ծանր ու փոշոտ հագուստը։

— Ես է՛լ չեմ դնա շինարարութիւն, — ասաց ինքը։

— Ինչո՞ւ չես գնայ։

— Զզիտեմ։

Ամուսինը հասկանում էր, որ կնոջ համար ծանր է տղամարդկանց հետ աշխատելը. կոչտ ու կոպիտ մարդիկ կան բանուորների մէջ, փչրում են Մարինէի քնքշութիւնը։ Բայց կեանքից չես կարող փախչել։ Ապրելը հեշտ է։ Դիմանալն է դժուար։ Պէտք է կարողանաս մտնել մարդկանց հոգիները, որ հարազատի նման բացուեն քո առջեւ, ու դու ձուլուես նրանց մտածողութեանը։ Գարեգինը հասկանում էր, որ հեշտ չէ կառուցելը, թէկուզ պանելային կոնստրուկցիաներով, երբ աշխարհը, շինքերից ու պողպատներից դուրս, բաժանուած է հաղար ու մի բլոկների։ Պատրաստի կոնստրուկցիաներից, օրը կառուցման համար է, մինչեւ ռազմական բլոկները, որը քանդման համար է, ձգւում է մի շարք բարդ յարաբերութիւն. դարը մաս-մաս է անում մարդուն ու լափում նրա ներուները, յաճախ միանգամից։ Իր համար էլ հեշտ չէ էքսպեդիցիայում, բայց մեծ է նպատակը։ Երբ նրան հարցնում են, թէ ֆիզիկոսների այդ մեծ խմբով ինչ են անում այնտեղ՝ լեռներում, նա պատաս-

digitised by A.R.A.R.@

խանում է. «Երբեք երջանկությունը եւ դժբախտությունը այնքան մօտ չեն եղել իրար, որքան մեր դարում, ուր մարդկությեան փրկությունն իր մէջ է առել նիւթի աննշան մասնիկը՝ ատոմը: Եւ ճեղքում ենք, որ դրանք բաժանենք իրարից»:

Նրանք աշխատում են զօր ու գիշեր, երեք հազար երկու հարիւր մեար բարձրությեան վրայ, որ ճեղքեն նիւթի աննշան մասնիկը: Նրա մէջ էր խտացած մարդկային հզօրությունն ու թուլությունը, նրա կործանումն ու փրկությունը, նրա դժբախտությունն ու երջանկությունը: Գէտք էր վերջապէս բաժանել այդ երկուսը իրարից, ջոկում էին լաւը վատից...

Ու հիմա Մարինէն ասում էր, թէ չեմ գնայ այլեւս չինարարությեան: Ձեմ գնայ եւ «չդիտեմ» ինչու...

— Որ առողջանաս, էլ չես ասի՝ չդիտեմ, — ասաց Գարեգինը: — Ահաւոր բան է, երբ ասում ես՝ չդիտեմ: Ինչպէ՞ս կարող ես չիմանալ, երբ ամենամեծ երջանկությունը տառապանքով է ծնւում: Մենք երկուսով չատ ենք տառապել եւ դու ասում ես՝ չդիտեմ:

— Ի՞նչ ասեմ:

— Ոչինչ էլ մի՛ ասա: Մի՛ էլ մտածի, թէ ինչ ասես:

— Դու միշտ էլ ինձ լռեցրել ես, Գարեգին: Մոռանում ես, որ ես կին եմ:

— Ձեմ մոռանում: Ինքդ էլ գիտես, որ չեմ մոռանում: Բայց ուզում եմ՝ դու այնքան մեծ լինես, որ ես չկարողանամ քեզ տեղաւորել իմ հոգում: Ինչուում եմ երբեմն լեռներից ու գտնում քեզ կուշ եկած անկիւնում: Միշտ այդպէս է լինում: Կարծես մէկը ծիծաղը ապանել է դէմքիդ: Մի փոքրիկ թաց ժպիտ աչքերիցդ ընկնում է շուրթերիդ արանքը, ու ես վախենում եմ քեզ հաբուրել: Վախենում եմ, ինձ թւում է, դու կը հեծկլտաս...

— Ճիշդ է, դու միշտ էլ վախկոտ ես եղել:

— Ըհը:

— Բայց ես ուզում եմ հեծկլտալ, որտե՞ղ լամ, ո՞ւմ մօտ... երբ տանն ես լինում, հոգուդ փոխարէն ուղեղդ ես դնում իմ ատոլեւ...: Եւ ես չեմ կարողանում պահել արցունքներս: Ու քեզ դուր չի գալիս, որ միայն ժպտում եմ ու թաց է այդ ժպիտը:

— Ոչ միայն թաց է, այլ աղի:

Մարինէն քմծիծաղ տուեց.

— Դա տառապանքի ժպիտ է: Սրանից յետոյ կ'աշխատեմ աւելի չատ տառապել, որ ծիծաղել կարողանամ, որ դու երջանիկ լինես...: Հաւատացընում եմ, թոշակի որ անցանք, դու իմ տառապանքների երջանկությունը կը վերադարձնես առանց մնացորդի:

— Դու ինձ չես հասկանում, Մարինէ:

— Դու էլ ինձ չես հասկանում, Գարեգին: Եւ մենք մեր ամբողջ կեանքում կը ձգտենք հասկանալ մէկս միւսին տառապելով, եւ դա մեզ կը պահի երջանկացած, հաւատացած եմ: Եւ վաղը նորից կը գնամ չինարարությեան տառապելու, իսկ դու կը բարձրանաս էքսկաւատոր տառապելու, որ մենք առանձին-առանձին տառապենք ու միասին երջանիկ լինենք:

— Դու նորից ինձ չես հասկանում:

— Հասկանում եմ, կեանքն այդպէս է. միայն պէտք է երջանիկ լինել: Ես հիմա երջանիկ եմ:

Դունատ էր, որ եկաւ կառոյց ու ծիծաղում էր: Նա ցոյց չէր տալիս, թէ հիւանդ է եղել: «Գէտք է առողջ լինեմ», այսպէս է կեանքը: Հրաժարուե-

digitised by A.R.A.R.@

ցիր, միեւնոյն է, առանց քեզ մարդիկ կառուցելու են։ Կաս, չկաս, ո՞ւմ է պէտք, աւելի լաւ է լինել։ Իսկ լինելու համար շատ քիչ բան է հարկաւոր՝ ծիծաղել։

Մտածում էր, որովհետեւ լուռ էր չորս բոլորը, դիշեր էր։ Ու ժըպտաց։ Դիմացը իր կառուցած թնակելի տունն էր։ Քնել են մարդիկ ու չեն էլ մտածել, թէ ինքն ինչքան զրկանք է կրել նրանց համար։ Կողքի չէնքում էլ արդէն մարդիկ են ապրում։ Հիմա ոչ ոք իրեն չի տեսնում, բայց ինքը բոլորին տեսնում է։ Նրա համար թափանցիկ են պատերը, մութ պատուհանները ողողուած լոյսով։ Ներսում քնած են մարդիկ ու ժպտում են, որովհետեւ ինքը տառապել է։

Իսկ դրանց մօտիկ մի այլ չէնք անաւարտ է։ Եւ աւելի էր սրտամօտ, քան այն չէնքերը, որտեղ արդէն մարդիկ էին ապրում, քնած էին ու ժպտում էին։ Այստեղ դեռ չէր աւարտուել իր տառապանքը։

Կառոյցի չորս անկիւններում դրուած լուսարձակները չէին վառուում։ Խաղաղ լռութիւն էր պառկել չինարարական հրապարակում։ Քարի ու ցեխի միջով ակսեց առաջանալ։ Պահակի տունը չէնքի միւս ծայրին էր, պեմզաբլոկի մի չինուքիւն, որի ճեղքերից լոյսը հիւսուած թելի նման ընկել էր սպիտակ դաշի վրայ։ Խոնաւ հուտ առաւ նա կիսաշէն պատերից ու առաջին անգամ գլխի ընկաւ, որ նրանք ուրոյն բուրմունք ունեն։ Շէնքը կառուցւում էր քարից· տուփն էր այս ուշ ժամին շնչում։ Բացից պահակի տան դուռը եւ տեսաւ մօրաքոյր Հայոյին։ Սեւ ու սպիտակ մի շուն, աչքերը լայն բացած, լուռ պառկած էր ոտքերի մօտ։ Հայոն դանդաղ բարձրացրեց գլուխը, նայեց մութ աչքերով, չզարմացաւ.

— Արի։

— Ինչո՞ւ չեն վառուում լուսարձակները, Հայօ մօրաքոյր։

— Ես եմ մարել։

— Ինչո՞ւ։

— Որ չյիշեմ լաւերը։ Ե՞րբ ես եկել։

— Այսօր։

— Տուն գնացե՞լ ես։

Մարինէն գլխով արեց։

— Նստիր, — ասաց մօրաքոյր Հայոն եւ երկու պեմզաբլոկ բերեց դրսից, շոր գցեց վրան։

— Չեմ նստում։

— Նստիր, աշխարհ է... Քեզ մի՛ կորցնի։

— Եկայ, որ գնանք գերեզմանները։

— Կը գնանք, նստիր։

— Չեմ կարողանում նստել։

— Պիտի կարողանաս։ Դժուար է, բայց պիտի կարողանաս։ Սեփական վիշտը թոյլ է տալիս տեսնելու ուրիշի ողբերգութիւնը, — ասաց նա։ — Պիտի կարողանաս։ Ինձ նայիր, կամ չէ՞, քեզ նման լինէի՝ չէի լինի։

— Սարսափելի ծանր է, Հայօ մօրաքոյր։

— Գիտեմ, — ասաց նա, եւ ձայնը եկաւ շատ հեռուից, խորքից։ — Հեշտ բան չկայ։ Իսկ աւելի ծանր է, երբ չես կարողանում դիմանալ։ Որ մայր ես դառնում, ամէն ինչի պիտի դիմանաս։ Մօր մէջ ինչքան խնդութիւն, էլքան էլ դժբախտութիւն կայ։ Ո՞վ ասաց չես դիմանայ։ Սուտ է, եթէ լաւ մայր ես, պիտի դիմանաս։ Զդիմացար, աշխարհին նայիր՝ կը դիմանաս։ Դու ինքդ գիտես, ինչքան բան եմ տեսել ու դիմացել։

digitised by A.R.A.R.@

— Ինչո՞ւ ես դիմացել։

— Որ դու էլ դիմանաս։ Դրա համար։

— Ինչո՞ւ դիմանամ...

— Մայր ես, որ աշխարհը լցնես մարդկանցով։

— Դու էլ ես մայր եղել։

— Եղել եմ ու հիմա էլ մայր եմ։ Երկուսին ամերիկեան որբանոցում կորցրի, մէկին էլ իմ ձեռքով տուի մանկատուն Երեսունհոգի թուին, որ «անցեալ» չունենայ։ Դու նոր էիր ծնուել, լաց էիր լինում գիշերները, երբ երեք հոգի եկան ու Տիգրանին տարան։ Ախ ինձ էլ տարէք, չտարան։ Երեխաս գրկած կէսգիշերին վազեցի սեւ աւտոյի յետեւից։ Կը հասնե՞ս, ինչպէ՞ս չէ։ Գիտե՞ս ինչ տեսակ ամուսին կորցրի։ Ծոյլ, ածդահա մարդ էր։ Պատ էր չարում ժողովուրդի վրայ։ Կէսօրին ճաշ էի տանում. սիրում էր տաք ճաշ։ Ուտում էր ու աշխատում։ Բազալտ քարը ձեռքն էր առնում, խմորի նման փափկում էր։ Մաքուր Աստուած էր։ Սարդարաբադի կռիւներին իրար դտանք։ Քաշեցի հանեցի սպանուածների միջից, վրան հոգի չէր մնացել։ Լուացի արիւնը առուի ջրով, քարշ տուի դիւղ։ Ջարդութիւրդ էր եղել։ Օրական ասը անդամ արդար իւղ էի քսում ձեռքերին ու ոտքերին, կախում տաք թոնիրը, հանում պառկեցնում։ «Դինիցա», — ասում էր։ Լաւացրի, մօրից մէկ եղաւ։ Ցեղոյ չարունակ ասում էր.

— Հայօ, դու իմ փրկիչն ես։

Գնացի բռնողների մօտ, ասի՝

— Իմ կէսը տանում էք, ինձ էլ տարէք։

Դուրս քշեցին դռնից։

Ոչ մի հարեւան ոտք չէր դնում տունս, վախենում էին։ Գիշերները չէի կարողանում քնել, պատի միւս կողմից դու լաց էիր լինում։ Մի օր էլ որոշեցի. տղայիս տարայ մանկատուն. դնացի էն չէնքի պատին գրեցի՝ «Գնացէ արդարութիւնը»։ Ես գիտէի, որ արդարութիւն չկայ, ասես՝ կեցցէ արդարութիւնը, կը բռնեն։ Բռնեցին։ Նայեցին աչքերիս մէջ, աչքս չթարթեցի։ Ներս տարան ուրախացած։ Լայն, լուսաւոր միջանցք էր, մի ժողովուրդ կը տեղաւորուէր։ Ալ ու ճախ սեւ զոներ էին, յետեւներից ձայն չէր լսւում։ Իջեցրին նկուղ, երկու օր յետոյ բարձրացրին։ Երեխայի մէկը, որը ոչ մի բանի չէր-մասնակցել, հարցրեց.

— Սարդարաբադի ճակատամարտին մասնակցե՞լ էք։

— Այո։

— Ինչո՞ւ էք մասնակցել։

— Բա ինչ անէի։

— Ինչո՞ւ էք մասնակցել Սարդարաբադի ճակատամարտին։

Ես գլխի ընկայ, որ սա չգիտի էլ, թէ որտեղ է Սարդարաբադը։

— Ճակատամարտ է եղել երկրում, — ասացի, — մասնակցել եմ։ Վա՞տ եմ արել։ Գլուխս էլ կտրեն, Սարդարաբադում ճակատամարտ լինի՝ էլի կը մասնակցեմ։ Ինչո՞ւ համար եմ ծնուել, որ կռիւ լինի չմասնակցե՞մ։ Աշխարհում որտեղ էլ որ Սարդարաբադի նման ճակատամարտ լինի, կը մասնակցեմ, իմացա՞ր։ Լակոտի մէկը։

Աստծանակը բռնեց վրաս։ Թքեցի երեսին, ձեռքից առա, խփեցի գլխին, ընկաւ։ Ջահել, մատաչ մարդ էր. ոնց որ թփից վարդ պոկես, ձայն չհանեց։ Սիրտս լցուեց, լաց եղայ։ Դուռը բացեցի, ասի խփել եմ, եկէք տարէք։ Եկան երկուսիս էլ տարան։ Մի թուղթ տուին, կարդացի, չըստորագրեցի։ Ասի՝ տարէք խփէք, չեմ ստորագրի։ Գցին վագոն, ասին՝ գնա՛։

digitised by A.R.A.R.@

Ուժ կար մէջս. անտառով քայլում էի, ծառերն ընկնում էին։ Կարօտից վառւում էի։ Բայց Տիգրանին չգտայ։ Գտնէի, կարող է երկուսս էլ մեռնէինք։ Լաւ էր, որ չգտայ։ Ցեղոյ գործի դրին։ Ստորագրում էին, դուրս էինք գալիս ու մտնում շախտը։ Գետնի տակ գտայ Տիգրանին։ Զէնից ճանաչեցի։ Հոգի չէր մնացել վրան. քարածուխ էր լցնում երկաթէ վագոնները։ Մի բուռ սեւ քսմիր էր դարձել։ Ձեռները բռնեցի, սառն էր, լաց եղաւ։ Արցունքն էլ էր սառը։ Երկար ժամանակ չէինք խօսել։

— Տղէն կա՞յ։

— Հա, — ասի, — կայ։

— Ո՞ւմ մօտ է։

— Կառավարութեան։

— Հա, լաւ է, — ասաց, — կ'ապրի։

— Կ'ապրի։

— Անունը մե՞րն է, թէ՞ ուրիշինը։

— Մերը չէ, — ասի։

— Հա, լաւ է, — ասաց, ապահով կ'ապրի։

— Հա, ապահով կ'ապրի։

— Հիմի քանի՞ տարեկան է, Հայօ, — ասաց։

— Տասնուվեց մէջ է, — ասի։

— Զէ, պրծաւ, կ'ապրի, — ասաց։

— Մեծ մարդ է, — ասի։

— Նայես ո՞ւմ է քաշել, Հայօ, — ասաց։

— Քեզ շատ նման է, — ասի։

— Զէ, — ասաց, — իմ վրայ հալ չի մնացել, — թող քեզ քաշի։

— Թող քաշի, — ասի։

— Նայես, ինչքա՞ն տղայ է, Հայօ, — ասաց։

— Շէնքով, ինչքով, — ասի։

— Լաւ է, — ասաց, — երկիր կը պահի։

Գետնի տակից դուրս եկանք, պառկեց։ Ճրագլուսին էր, շատ տանջուեց, չուռուժուռ եկաւ... Նայում էր առաստաղի գերաններին։

— Ի՞նչ ես այդպէս նայում, — ասի։

— Հէչ, — ասաց, — մեր ձեռքով կտրած ծառերի մէջ անտառ եմ մտա գալիս։

— Ինձ չես նայում, — ասի։

— Մեռնում եմ Հայօ, — ասաց։

— Մի մեռնի, — ասի։

— Ինչո՞ւ չմեռնեմ, Հայօ։

Ասի՝

— Տուն դառնանք, երկուսով մեռնենք։

— Զէ, դու գնա՛ ապրի, — ասաց, — էսպէս Հայաստան չեն գայ, ամօթ է։

Աղեալով փաթաթեցի, դրի սահնակի վրայ, քարշ տուի։ Գետինը փորում էի, բայց հողին չհասայ։ Ես փորում էի, քամին ձիւնը լցնում էր։ Պահակին խնդրեցի։ Բուդիան էր, ինքը, քարածխի կլոր վառարանը։

— Առանց օղու գերեզման չի փորուի, — ասաց։

Իջայ քաղաք, օղի բերեցի։ Մեկ եւ ասաց.

— Բուլը կտրուի, փորենք։

— Բա որ չկտրուի՞։

digitised by A.R.A.R.@

Դուրս եկաւ, ներս մտաւ, նստեց տեղը, երդեց ռուսերէն։

— Շո՞ւտ կը կտրուի, — հարցրի։

— Ի՞նչը։

— Բուքը։

— Չեայեցի, խաչերին էի նայում։

Լուսադէմին աչքս կպցրել էի։ Բացեցի, փաթէ խաչը ձեռքին կանգնել էր գլխավերեւս։

— Գնանք, — ասաց։

— Կտրուե՞ց բուքը։

— Արեւն էլ դուրս եկաւ։

Ինքը փորել էր գերեզմանը, արեւը ընկել էր մէջը, հոգ չէր երեւում։ Թաղեցինք, արեւը մնաց գերեզմանի մէջ։

— Լուսաւոր մարդ էր, — ասաց նա, ձեռքի խաչը խրեց ձեան մէջ, հարցրեց.

— Ցիդա՞ն էք։

— Չէ, հայ։

— Ես էլ եմ հայ, — ասաց։

Հայ չէր, այնպէս ասաց, որ նշանակում էր՝ ես էլ եմ մարդ։ Բուքը դրի թեւիս տակ, առանց հարցնելու նստեցի նաւ, տախտակամածի վրայ, խառնուեցի գնչուների թափառիկներին, եկայ հասայ, ներկայացայ։

— Փախել եմ, — ասի։

Նայեցին, ասին.

— Վատ ես արել, բայց արդարացուած ես։

Դուրս էի գալիս, կանչեցին ետ, հարցրին.

— Ի՞նչ էք մտածում անել։

Ասի՝

— Ձեր գործը չէ, ես գիտեմ ինչ կ'անեմ։

ԳԷՈՐԳ ԱՐՇԱԿԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Ն. ԱԴԱԼԵԱՆ

Արձակագիր, քննադատ եւ գրականագէտ Նորայր Ադալեան ծնած է 30 Յուլիս 1936ին՝ Ֆրունզոլ (Ղրիմ)։ 1960ին աւարտած է Երեւանի պետական համալսարանի բանասիրական ճիւղի հայկական բաժինը։ 1961ին աշխատած է Գիտական Ակադեմիայի Մ. Արեղեանի անուան գրականութեան հիմնարկի մէջ՝ իբրեւ աւագ գիտաշխատող։ 1966ին պաշտպանած է «20-30ական թթ. ռուսական սովետական պատմուածքը» խորագրեալ աշխատասիրութիւնը եւ արժանացած գիտութիւններու թեկնածուի ատաստանին։ Ներկայիս ան կը վարէ «Գրական թերթ»ի գլխաւոր խմբագիրի պաշտօնը։

Ն. Ադալեան հրատարակած է չորս տասը հատորներ, որոնց նշանաւորներն են՝ «Նոր ամառ», «Արտազանի ճիւղերը», «Սադայ զօրանոցներ» (արձակ) եւ «Սովետական պատմուածքը» եւ «Ճնողդատութեան ժամանակը» (ուսումնասիրութիւն եւ քննադատական յօդուածներ)։ Ան նաեւ կատարած է թարգմանութիւններ, իսկ իր ընդարձակ գործերը թարգմանուած են խորհրդային եւ եւրոպական լեզուներու։

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԴԱՍԸ

Երբ ծերունի Փըրափիոնը զգաց, որ իրեն քիչ ժամանակ է մնացել ապրելու այս աշխարհում, անհանգիստ շարժուեց իր բազկաթոռին, ակնախորշերում ջրակալած աչքերը միջանցքով գնացին դուրս՝ բակը, որտեղ դեզձենին էր ծաղկում, եւ գոռաց թոռանը.

— Փըրա՜փ...

Փըրափիոնը հիւանդ չէր, ոչ մի տեղը չէր ցաւում նոյնիսկ, միայն ինչ-որ ծանր բան նրան տալիցտարի, օրէցօր դանդաղ քաշում էր դէպի հողը, եւ նա մէկ մահճակալին, մէկ էլ իր պէս հնաշարեան բազկաթոռին կապուած էր արդէն ապրում։ Նա գիտէր, որ միայն հիւանդները չէ, որ մեռնում են, այլեւ ամէն մարդ ու կենդանի, որ մի օր, հեռու-հեռաւոր մի ժամանակ աշխարհ են եկել, բոլորը մեռնում են, դառնում ջուր, ծաղիկ, հող եւ Փըրափիոնը թէեւ խռով, բայց ներսում խաղաղ ու հաշտ էր մահուան հետ։

Փըրափը, որն իր անուան կրճատ յորջորջումն էր, ծերունու վերջին ժեռքերումն էր իր մօտիկներից։ Երբ նա ծնուեց, որդին, երեւի ձեւի համար կամ էլ քաղաքավարութիւնից դրդուած, հարցրեց հօրը՝ անունը ի՞նչ դնենք։ Փըրափիոն, — ասաց նա, — անունը դրէք Փըրափիոն։ Որդին եւ հարսը կարծեցին կատակ է, յետոյ անհանգստացան. Փըրափիոնա՞ն է, երեխան մեղք չի՞, ո՞ր դարում ենք ապրում։ Բայց ծերունին չդիջեց. կամ

digitised by A.R.A.R.@

Փըրափիոն, կամ ոչինչ, թէ չէ ինքը նրանց հետ էլ գործ չունի, թող իրենց համար ապրեն։ Ախր, ի՞նչ է Փըրափիոնը, ծա՞ղր է, ի՞նչ է։ Որ չգիտէք, ւ՞վ է մեղաւոր, Փըրափիոնը ծաղիկ է, հրաշք մի ծաղիկ, Երզնկայի դաշտում է ապրում Փըրափիոնը, Եփրատի հովիտներում, Տաւրոսի լանջերին, կապո՛յտ-կապո՛յտ հրինքի տակ. Փըրափիոն՝ կը նշանակի սրտի փափաք, սիրահարութիւն։

Որդուն եւ հարսին չյաջողուեց Ծերունուն եւ պահել իր մտադրութիւնից։ Երեխային տուին Փըրափիոն անունը։ Փըրափ-Մըրափ, — մեծ ու փոքրերը փողոցում ծաղրում էին նրան։ — Քո արածն է, — Ծերունուն կըշտամբում էին հրեխայի ծնողները, — Փըրափ-Մըրափ, դու ես մեղաւոր։ Մըրափն էլ անուն է, — քիչ խեղճացած, արդարանում էր Ծերունին, — Երզնկայում մի Մըրափ կար, պատուական մարդ, բեհեզագործ էր, բեհեզ՝ մենք ասում ենք մանուսա, դաղթի ճանապարհներին խելագարուեց, էլ չեմ տեսել։

— Դուրսը ո՞վ կայ, — երբ թոռը ներս մտաւ, հարցրեց Ծերունին։

— Արեւը, — ասաց փոքր Փըրափիոնը։

— Է՞վ։

— Մեղուները։ Դեղձի ծաղիկները։ Մրջիւնները։

— Էլ մարդ-մարդասանք չկա՞յ։

— Ես մի շուն եմ տեսել, բայց նա չէր հաջում, սպիտակ պոչով, նա իսկական շուն էր։

— Լաւ, Փըրափ, — ձայնը իջեցրեց Ծերունին, — ես ուզում եմ այնպիսի մի բան ցոյց տալ, որ քո օրում չես տեսել։

— Սպիտակ պոչո՞վ...

— Միայն ես, միայն քո պապ Փըրափիոնը կարող է դա ցոյց տալ, ուրիշ ոչ ոք։ Դու շատ երջանիկ կը լինես։

Ծերունին բազկաթոռից կանգնելու շարժում արեց, բայց մարմնում արդէն ուժ չէր մնացել։

— Իմ մահճակալի տակը սնդուկ կայ, քաշիր-բեր մօտս, — ասաց Ծերունին եւ ամաչեց, որ այդ ծանր գործը թոռանն է յանձնարարում։

Փոքր Փըրափիոնը իսկոյն նետուեց դէպի սնդուկը եւ, կողքի բռնակներից կառչած, սկսեց քաշքշել, հոգով հանել դուրս, ուրախութիւնից ամէն ինչ մոռացաւ, ախր, դա խորհրդաւոր սնդուկ էր, ոչ ոք չգիտէր, թէ ինչ կայ, ինչ կայ այնտեղ։

— Ծերուկը որ մեռնի, սնդուկը կը մնայ ձեզ, — ասում էին հարեւանները։ Փըրափի հայրը բարկանում էր. ինչի՞ մեռնի, է՞, ինձ խլամով լցուած սնդուկ հազար տարի պէ՞տք է։ Մէջը ոսկի կայ, ոսկիները կը մնան ձեզ, նոր, երկյարկանի տուն կը շինէք, աւտո կ՝առնէք։ Մայրը հաւատում ու չէր նոր, երկյարկանի տուն կը շինէք, աւտո կ՝առնէք։ Մայրը հաւատում ու չէր հաւատում հարեւանների խօսքին, Ծերունուն վերաբերում էր համբերութեամբ եւ զուսպ յարգանքով, լուանում, կերակրում էր նրան, յանկարծ նա սնդուկն ուրիշին, օրինակ՝ գիւղի աղջկան, որին աշխարհի չափ սիրում է, ժառանգութիւն չթողնի։

Դա հին, բայց ամուր, նախշազարդ պղնձով գօտեւորուած սնդուկ էր, գոգաւոր կափարիչով, որի վրայ բռնակ կար։

Ծերունի Փըրափիոնը գրպանից հանեց սնդուկի մեծ, ծանր բանալին եւ մեկնեց թոռանը.

— Անցքի լեզուակը թեքիր, բանալին երկու լրիւ շրջան դարձրու ալ կողմ եւ սեղմիր առաջ։ Կափարիչի բռնակը կը քաշես վեր, հասկացա՞ր։

digitised by A.R.A.R.@

Փոքր Փըրափիոնն ամէն ինչ շատ լաւ հասկացաւ, միայն բանալին անցքում դժուար պտըտուեց։ Իսկ երբ ձեռքի բոլոր ուժով բարձրացնում էր սնդուկի կափարիչը, սիրտն այնպէս թրթռաց, կարծես ուզում էր փախչել իրենից, փախչել դէպի ո՞ւր··· դէպի ծաղկած դեղձենին։

Ցուզմունքը խեղդեց փոքր Փըրափիոնի ուրախութեան ճիչը, երբ կափարիչը եւ գնաց, եւ այդքան տարի փակ սնդուկը միանգամից բացուեց նրա աչքերի առջեւ։

— Հը՛··· ի՞նչ կ'ասես, — Ծերունին էլ էր յուզուած։

Թոռը պապանձուել էր։

— Մէկիկ-մէկիկ հանիր, զգոյշ դիր գետնին, ինչ քեզ ցոյց եմ տալու՝ ամենատակն է։

— Սա ի՞նչ է, ոսկի՞···

— Կաւաման է, ոսկին ի՞նչ է, հարըս դրանով թանապուր էր ուտում։

— Բա ոսկին ո՞ւր է։

— Ինչ տեսնում ես, ոսկուց թանկ է, սա պատմութիւն է, սիրելի, հարազատ մարդիկ, ոսկին ի՞նչ է որ, պա՛զ, անսիրտ մեռազ, լաւ գիտցիր, Փըրափ։

— Լամբ է, չէ՞։

— Քարիւղի ճրագ։ Երբ ես քո տարիքին էի, այդ լամբարն էր լոյս տալիս մեզ··· իսկ հիմա տես, ինչ հզօր լոյսեր կան. մեր տան լոյսը, փողոցի լոյսերը, բայց այդ լամբարը ինձ համար ամենաթանկն է։

— Գօ՛-տի՛։

— Արծաթ գօտի, իմ մեծ քոյր Մարիամն էր կապում եկեղեցի գնալիս։

— Ո՞ւր է քո մեծ քոյր Մարիամը։

— Ասկեարից փախաւ, իրեն տուեց Եփրատի ալիքներին, աչքովս տեսայ։

— Իսկ սա թանաքաման է, կը տա՞ս ինձ, ես միւս տարի դպրոց եմ գնալու։ Դու դպրոց գնացե՞լ ես, պապ։

Ծերունի Փըրափիոնի յիշողութեան մէջ արթնացաւ հեռաւոր այն օրը, երբ նա, մօր ձեռքը բռնած, առաջին անգամ դպրոց էր գնում, եւ ճանապարհին, որն անցնում էր լուսնյի մօտով, իրենք երեսուերեսի եկան քաւոր Գեորգոսին։ Քաւոր Գեորգոս, այսօրուայ պէս յիշում է, իրեն մի կարմիր խնձոր տուեց եւ ասաց. ճամբադ երկար ըլլայ, մանչս։

— Ձախ անկիւնում, ահա այդտեղ, քաւոր Գեորգոսի ծխամորճն է, տուր տեսնեմ, — ասաց Ծերունին, — տուր հոտ առնեմ քաւոր Գեորգոսի ծխամորճից։ Այս ծխամորճը նա ծխում էր միայն մեր տանը։ Գալիս էր եւ ասում. ծխամորճս տուէք, կարօտցեր եմ։ Ամէն տանը մի ծխամորճ էր պահում։ Երբ մեր տունը դաղթում էր, արդէն դռանը կոդպէք դրել, փողոց էինք ելել, որը էշով, որը եզներով, որը ձիով, ով ինչ ունէր, մէկ էլ նա հեռուից, տեսաւ մեզ ու գոռաց. ծխամորճս լաւ պահէք, հա՛, Երեւանում ծխելու եմ, ինչպէս միշտ — թուքունը իզմէ։ Նա ծխում էր Քրաքըղոնի թուքուն, որ միշտ հետն էր քէոսէի մէջ։

— Բա ինչի՞ հիմա չի ծխում, ես քաւոր Գեորգոսին չեմ տեսել, — ասաց փոքր Փըրափիոնը։

— Գաղթի ճանապարհին նա էլ սպանուեց շատերի նման։

Փոքր Փըրափիոնը սնդուկից հանում է իրերը եւ զգուշօրէն դնում գետնին. փայտէ չերեփ, պատի ժամացոյցի կմախք, իր հին գեղեցկութիւնը դեռեւս պահպանող թուատախտակով, սատափէ մի զարդատուփ՝ գոյնզգոյն

digitised by A.R.A.R.@

կոճակներով եւ ուլունքներով լցուած, կարպետի մէջ փաթաթուած կուժ՝ կոտրուած ունկով, իսկ ներսը՝ դանակ-պատառաքաղներ ու աղաման։

— Վա՜յ-վա՜յ, — տեսնելով կուժը, ժղիտաց Ծերունին, — ո՞վ է կոտրել քեզ... քանի անգամ ենք քեզ հետ միասին սառը ջուր բերել հօրս համար։

Փոքր Փըրափիոնը դեռեւին զրեց ուրիշ իրեր, որոնց մէջ կար եւ մի կաշիկազմ դիրք։

— Մաթէոսի աւետարանն է, — ասաց մեծ Փըրափիոնը, ձեռքը երկարելով դէպի դիրքը։ — Ցո՛ւր, տո՛ւր..., — դողդոջալով բացեց մի էջ եւ կարդաց — Ես մի վախենաք երանցից, որ մարմինն են սպանում, բայց հոգին սպանել չեն կարող... Լսեցի՞ր, լսեցի՞ր ինչ ասաց Յիսուսը... հոգին սպանել չեն կարող։

— Հոգին ի՞նչ է։

Իր երկար կեանքում Ծերունին դեռ չէր կանդնել այդքան դժուար մի հարցի առջեւ։

— Հոգին ես եմ, դու ես... մեր Հայկ Նահապետն է... մեր Եփրատ գետն է, դու չգիտես, Փրրափ, դու դեռ փոքր ես, հոգին մեր Եփրատ գետն է, մեծ դետ է Եփրատը, մի անգամ որ տեսնես, հոգիդ կ'ուժեղանայ, յաւերժական սէրը կ'արթնանայ հոգուդ մէջ։

Փոքր Փըրափիոնը լսեց, բայց շատ բան չհասկացաւ։ Նրա խոշոր, սեւ աչքերը նայում էին ձեռքի թղթուած չալին։

— Մայրիկիս չալն ես, — շշնջաց Ծերունին, — յիշո՞ւմ ես, մայրս քեզնով ծածկում էր ուսերը։ Աչխարհում ամենաթանկ բանը այդ չալն է, Փըրափ, — ասաց նա բարձրաձայն, — մոր չալը չի մեռնում, արտում է ապրում նա, ամենասպահով տեղը։

— Ա՛ء..., — ոչան չալը մեկնեց Ծերունուն։

— Մալի՛ր, զգուշօրէն դիր սնդուկը։

Քիչ յետոյ, փոքր Փըրափիոնը սնդուկից հանեց բաւականին մեծ մի լուսանկար՝ ձուաձեւ շրջանակի մէջ, որ փորագրազարդ պղնձից էր։

— Ահա այդ էի ուզում քեզ ցոյց տալ, — աչխուժացաւ Ծերունին։ Հիմա բոլորը նորից դիր տեղը, սնդուկը փակիր, բանալին տուր ինձ։

Տղան ափսոսանքով փակեց սնդուկը. այնտեղ մի քանի իրեր կային, որոնց նրա ձեռքը դեռ չէր կպել։ Ծերունին նկատեց նրա տրամադրութիւնը եւ ասաց.

— Փըրափ տղայ, այդ ամբողջ հարստութիւնը քոնն է, երբ ես չեմ լինի, բանալին գրպանիցս կը հանես, տես, այստեղ է, բանալին էլ է քոնը։

Լուսանկարում տղամարդիկ, երեխաներ ու կանայք էին, երեսունվեց հոգի, մի ամբողջ դերդաստան, շարք-շարք նստել, երեխաները՝ գետնին, նրանց ոտքերի մօտ, եւ ակնապիշ նայում էին քեզ։ Վերեւում գրուած էր. «Էրզրնկա 1912 թ.»։

Ծերունի Փրրափիոնը յիշեց հեռաւոր այն օրը, երբ Երզնկայի միակ հայ լուսանկարիչ Աբրահամ Սէֆպոսեանը, քաւոր Պետրոսի ընդարձակ բակում, նկարեց իրենց։ Սուրբ Աստուածածնի տօնն էր։ Նկարուելուց յետոյ քաւոր Պետրոսը առատ հիւրասիրութիւն արեց հաւաքուածներին։ Նրանցից շատերը 1915ի Օգոստոսին արդէն մեռած էին։

Փոքր Փըրափիոնը տեսաւ, թէ ինչպէս պապի աչքից արցունքը մեղմօրէն թափանուեց, դանդաղ գլորուեց մաղմղոտ այտով եւ լուռ ընկաւ լուսանկարի վրայ։

— Փըրափ, աթոռը բեր, նստիր մօտս, — ասաց Ծերունին։ — Դու պի-

digitised by A.R.A.R.@

ոչ կարդաս այս լուսանկարը, ես քեզ կը սովորեցնեմ։ Դու յիշելու ես բոլոր պէմքերն ու անունները, նրանք քո արիւնն են, լա՛ւ յիշիր, մինչեւ երկար կեանքիդ վերջը նրանց պահիր սրտիդ մէջ։ Մինչեւ արեւը անցնի, ես քեզ բոլորի հետ կը ծանօթացնեմ։ Կը կարծես դժուա՞ր է... բնաւ... եթէ ամբողջ սրտով նուիրուելու լինես այս գործին։

— Ես ամբողջ սրտով քոնն եմ, — աթոռը ծերունուն մօտեցնելով, ասաց տղան։

Մեծ Փըրափիոնի հոգին երջանկացաւ այդ խօսքից։ Նա մտածեց, որ ինքը, յամենայնդէպս, աշխարհից պիտի գոհ լինի, չնայած ինչքա՞ն աւեր, սուգ ու չարութիւն է տեսել կեանքում, էլ տեղ ու հաչիւ չկայ։

— Այս մարդիկ, որոնց տեսնում ես այստեղ, Արմէնակեան տոհմի ճիւղերն են, նրանց բարեկամները, ահաւասիկ, մեծ Արմէնակեանը, կենտրոնում, հօրս մօրական պապը, տես ինչ բեղ, աչքունք ունի, ինչ պարթեւանոյ է, — լուսանկարը թոռան առջեւ պահելով, ասաց ծերունին։ — Այդ ժամանակ նա կը լինէր հարիւր քսան տարեկան, միտքը դեռ պայծառ, մինչեւ հիմա էլ ծիծաղը ականջիս մէջ է։ Նա չուզեց թողնել իր երկիրը, մնաց տանը, յետոյ իմացանք ասանել են՝ անպատմելի տանջանքներ պատճառելով։ Փըրափ, դու սկսում ես մեծ Արմէնակեանից։

— Նա իմ պա՞պն է։

— Քո պապը ես եմ, նա քո արմատի արմատն է։

— Իսկ սա ո՞վ է։

— Սա՞... Փըրափ, սա իմ քոյրիկն է, հօրեղբայր Քափրէլի, ահա Քափրէլը, Արուսեակ աղջիկը։ Քափրէլը չորս զաւակ ունէր՝ Իսկուհի, Կալուստ, Յեզեղել, Արուսեակ։ Այն օրը, քաւոր Պետրոսի բակում, միայն Արուսեակն էր հօր հետ, վարդի պէս աղջիկ էր Արուսեակը, մազերը երկար, խնդումբես, հապա ինչպէս էր երգում...։ Ասկեարները չատ կնամարդոց, աղջիկների հետ նրան էլ քաշեցին տարան, ի՞նչ եղաւ Արուսեակը, Թրքացրի՞ն, անպատուեցի՞ն մարմինը, սրի քերա՞ն ընկաւ... չգիտեմ, Փըրափ... նրան չատ-չատ եմ տեսել երազիս մէջ, տեսել եմ Գարթուղին, Սէթրակ աղային, Էխասփէթին, Մամփրէին, հայթուխ Աքրիբաշին։

— Ո՞րն է Աքրիբաշը։

— Ահաւասիկ։

— Ինչ լաւ Աքրիբաշ է։

— Նրա հայի անուշահոտութիւնը տարածւում էր երդնեայի վրայ, մտնում տուն եւ պարուզ։ Մի օր էլ, լաւ միտքդ պահիր, Փըրափ, մի օր էլ օդի մէջ զգացինք Աքրիբաշի հոտը... Նրան ոգի-ոգի խորովել էին փռում։ Իսկ սա խենթ Ենոքն է։ Նա բարի ու զուարթ մարդ էր։ Ցիլում եմ, գալիս էր քարաւանի ետեւից։ Յետոյ գնաց-գնաց դէպի Եփրատը... Եւ ես նրան այլեւս չտեսայ։

Ծերունի Փըրափիոնը լուսանկարի մարդկանց մէկ-մէկ ծանօթացնում էր թոռանը, համառօտ տեղեկութիւններ տալիս նրանց կեանքից, նրա սիրտը զարմանալի նրբութեամբ յիշում էր ամէն մանրամասնութիւն։

— Դու լա՞ց ես լինում, Փըրափ, — հարցրեց նա։

— Չէ, — ասաց տղան, — ես ուզում եմ լաց լինել։

— Քո պէս տղամարդը լաց չի լինելու։ Դու պէտք է յիշողութեամբ ուժեղանաս։ Ես այդ եմ պահանջում քեզնից, յիշողութիւնը թող աւելի ուժ տայ քեզ այս կեանքում։

— Ես Արթուրից ուժեղ եմ, նրան միշտ տակս եմ առնում։

digitised by A.R.A.R.@

— Դու Արթուրից ուժեղ ես, որովհետեւ նա թոյլ է։ Զխաբուես, Փըրապ։ Դու պարտաւոր ես լինել ուժեղից էլ ուժեղ։

Լուսանկարից նրանց էին նայում քեռակին Օսանը, Մէրթաղը՝ գլխին ծոպաւոր ֆէս, Լուսիկը, Իսկուհին, ուսուցիչ Զաքարը Արիստակէսեանը, դորգավանառ Վրթանէս տղան՝ իր Սերոբ եւ Նազելի զաւակների հետ, Մարուքէ քահանան եւ Սբ. Սարգիս եկեղեցու սպասաւոր Մարտիրոսը, որոնք Ամանորին տնօրհնէք էին անում հայոց թաղերում։

— Մարտիրոսը ծխացնում էր բուրվառը, իսկ Տէր Մարուքէն աղօթք էր ասում երգելով, ինչ լաւ էր երգում եւ ինչ անուշ էր այրուող խնկի հոտը։ Իսկ սա ես եմ։

Փոքր Փըրափիոնը աւելի ուշադիր նայեց եւ տեսաւ ճիշդ իր նման մի տղայ՝ մեծ Արմէնակեանի ուրքի մօտ, գեղեցիկ ծալապատիկ նստած։

— Դո՞ւ ես։

— Ես եմ։

— Ինչքան քեզ նման ես։

— Տեսնում ես, գեղակ ունեմ։

— Ո՞ւմ հետ էիր խաղում։

— Ափէի, Վրոամշաքուի, Գայծառի, ահա Գայծառը, Ջընդոյի, Ճափէքնակի, սա էլ Ճափէքը... Բոլորն էլ Գեմախ-Բոզազում սպանուեցին, եւ ես նրանց եօթանասուն տարի պահեցի մոքիս մէջ։

Մերունի Փըրափիոնի յիշողութեան մէջ արթնացաւ հեռու հեռաւոր այն օրը, երբ Ճափէքը, կեդրոնական վարժարանի բակում, իր ականջին մի բան շշնջաց... Իր սիրտը տակնուվրայ եղաւ. Ճափէքը սիրում է Գայծառին, ինքն էլ է Գայծառին սիրում, բայց Ճափէքին չխոստովանեց։ Այժմ էլ սիրում եմ նրան, — ասաց Ծերունին, բայց այնքան ցածր ու մեղմ, որ ո՛չ թոռը, ոչ էլ որեւէ մարդ աշխարհում չլսեց։

Ժամը չորսին մօտ, տղան արդէն բոլորի հետ ծանօթացել էր։ Նա սըխուր էր եւ, միաժամանակ, երջանիկ, որ այդքան բարի ու հաբազատ մարդիկ են շրջապատում իրեն։ Նա չփոթուած էր. աշխարհում ինչ-որ բան նրան վախ էր պատճառում։

Մերունին ասաց.

— Հիմա կրկնիր, տեսնեմ ամէն ինչ լաւ յիշո՞ւմ ես։

Փոքր Փըրափիոնի աչքերն անցան լուսանկարի շարքերով.

— Սա մեծ Արմէնակեանն է, ճի՞շդ է, սա հօրեղբայր Գաբրիէլն է, նրա աղջիկը...

— Ի՞նչ է անունը...

— Անո՞ւնը...

— Անունը...

— Արուս։

— Արուսեակը։ Ցետո՞յ...

— Բարթուղ, Սեդրակ աղա, Աբրիբազ։

— Ո՞վ է Աբրիբազի կողքինը, հը, Փըրապ, ո՞վ է կողքինը։

— Վրթանէսը...

— Փըրապ, լաւ յիշիր, Աբրիբազի մօտ կանգնած է Մամփրէն, յիշիր, Մամփրէն խումբ հաւաքեց, գնաց կռուելու Թուրքի դէմ, եւ ես նրան այլեւս չտեսայ։

— Թոյլ տուր լաց լինեմ, — խնդրեց փոքր Փըրափիոնը։

— Ոչ, — ասաց Ծերունին խրոխտ ձայնով, որ իրեն էլ էր տարօրի-

digitised by A.R.A.R.@

նակ, վաղուց այդպէս չէր խօսել։ — Սեղմիր առամներդ, բռունցք արա, որ լաց չլինես։ Գոմիր Մարուքէ քահանային։ Գտա՞ր։ Հիմա գոմիր Զաքար Արիստակէսեանին։ Ո՞վ է Զաքարը։

— Ուսուցիչ։

— Այո, Թուրքանութիւն էր սովորեցնում եւ հայոց լեզու։ Մեծ բանասէր էր Զաքար Արիստակէսը, աշխարհի ամենամեծ բանասէրը, Փըրաի, ամենամեծը.

Այր, բեն, զիմ,
Եվ Ցովակիմ...
Լուսինկայ, լուսինկայ.
Լուսնէն ինկայ,
Ցովուն վրայ կանթեղ մը կար,
Անձիմ ըսի մէջը ինկայ։

Զարար Արիստակէսեանին, նրա կնոջը՝ Անթառամին, նրանց Մելքոն, Եուղարեր, Հմայեակ, Գաղդասար զաւակներին քշեցին անապատ, եւ առանջեցին, խողխողեցին նրանց, եւ ոչ ոք, ոչ ոք նրանց այլեւս չտեսաւ։ Զաքարի առջեւը՝ գետնին, Ափէլն է։

— Ափէլ, Գայծառ, Ինդօ, իսկ սա դու ես, — Թուրքկեց տղան եւ ուրախացաւ, որ ամէն ինչ ճիշդ ստացուեց։

— Ես եմ, բայց այսուհետ դու ես, յիշիր, լա՛ւ յիշիր, Փըրաի, յանկարծ չմոռանաս, այսուհետ ես դու ես, ես չկամ, դու ես մնում, դու ես ապրելու եսթանասուն ու հազար տարի։

— Գաբրիէլ, Սրուսեակ, Զաքար, Վրթանէս, մեծ Արմէնակեան, Մարտիրոս, Յարէթ, Աբրիրազ, Մամբրէ։

— Ափիրի՛մ, — հիացաւ ծերունին։

Երբ տղայի ծնողներն աշխատանքից տուն եկան, արեւը դնացել էր մայրամուտ, եւ նրանք դատն արդէն ատարել էին։

Փոքր Փըրաիոնը մօրն իսկոյն յայտնեց օրուայ գլխաւոր իրադարձութիւնը։ Մօր աչքերը, տղան լաւ տեսաւ, քիչ էր մնում զարմանքից դուրս թռչէին։

— Մնդուկում ի՞նչ կար։

— Շատ հարստութիւն, ոսկուց էլ թանկ, բոլորը իմն է, բանալին էլ է իմը, պապը ասաց։

Մայրը գրկեց տղային, համբուրեց-համբուրեց, ապա բաց թողեց նրան, յետոյ դարձեալ ամուր սեղմումներով առաւ գիրկը։ Տղան չհասկացաւ՝ ինչո՞ւ է մայրն առանց որեւէ պատճառի, այդպէս իրեն սիրում, հօ չի՞ դժուել։

Մէկ ժամ յետոյ բոլորը նստեցին ճաշելու։ Այդ օրը սեղանին շատ բան կար՝ ջրալի եւ առպաստ, տաք ու սառը, ամէն ինչ համով-հոտով։ Մայրը նոյնիսկ մի չիչ դինի դրեց։

— Օհօ, — բացականչեց մեծ Փըրաիոնը։

— Ամենք-հարբենք, — ասաց հայրը։

— Գա՛հ, — ծաղրեց փոքր Փըրաիոնը։

— Ամենք Փըրաիի կենացը, — ուրախ-զուարթ ասաց մայրը, — Փըրաիս մեծանայ, շատ մեծ մարդ դառնայ, աշխարհի աչքն էլ հանի։

— Ինչի՞ հանի, է՛, — հարցրեց հայրը։

digitised by A.R.A.R.@

— Իսկ ինչի՞ չհանի, — հարցրեց մայրը։

— Աշխարհը աչք ունի՞, որ մեր Փըրաքին էլ հանի, — ասաց Ծերունին, — թէ ունենար, թէ ունենար, կը տեսնէր, որ ամենասիրուն քաղաքը Երզնկան է, ամենատխուր դեռը՝ Եփրատը, ամենատխուր դեռը ամբողջ երկրի վրայ։

Ուշ երեկոյեան մայրը դոյլով ջուր տաքացրեց, լուաց Ծերունու ոտք ու ձեռքը եւ պառկեցրեց մաքուր անկողնու մէջ։

Շուտով բոլորը քնեցին։

Մութ ու խոր քուն էր, եւ Ծերունի Փըրաքիոնը չիմացաւ, թէ ինչպէս գիշերուայ մի ժամի ժահը գրկեց իրեն։

— Ծերունու թաղումն ադմկոտ չեղաւ։ Գարնանային արեւոտ օր էր։ Մառերին ճռուողում էին ճնճղուկները։ Հողից խոնաւութիւն էր ելնում։ Դագաղը հանեցին դուրս, լուռ պտըտեցին տան տակ եւ շարժուեցին հին թաղամասի նեղլիկ փողոցներով։

Փոքր Փըրաքիոնը թափօրի առջեւից տանում էր պատի սեւ ժապաւէնով չրջանակուած, մեծադիր լուսանկարը։ Տղան գիտէր, որ իր եռեւում դագաղի կափարիչն է։ Այնուհետեւ, վեց հոգի ուսերին դրած բերում էին պապին։ Դագաղի եռեւից քայլում էին մի երկու տասնեակ պառաւ կին ու տղամարդ։ Տղան լաւ գիտէր, որ ամենավերջում, փրչոտ գլուխը կախ, գալիս է Զալանդը, որին պապն ամէն առաւօտ ուտելիք եւ ջուր էր տալիս։

Փոքր Փըրաքիոնը ծուռ եւ տխուր ժպտում էր եւ չէր նայում իր աջ ու ձախում քայլող, նամածուքիններ անող երեխաներին։

— Փըրաք–Մըրաք, ո՞ւմ ես տանում, ասա, ո՞ւմ ես տանում, էդ ո՞վ է, ասա, ո՞վ է…

— Երբ նրանք դդուեցրին, աղան կողքանց նայեց լուսանկարին եւ ասաց.

— Ես եմ։

ՆՈՐԱՅՐ ԱԴԱԼԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Ց. ԳԷՐԳԷՐԵԱՆ

ՔԵՐԹՈՂԱԿԱՆ ԱՃՈՂ ՍԱՀՄԱՆՆԵՐ

Վերջին մէկուկէս տասնամեակին ապարդիւն եկած ու ժեւատորուած հայրենի բանաստեղծներուն անդրադարձող Ց. Գէրպէրեանի յօդուածին պէս, «Բագին»ի ներկայ թիւին համար յօդուած մը պատրաստած էր նաեւ Ս. Կիրակոսեան, հաշուի առնելով այս անգամ նոյն ժամանակաշրջանին հանգէս եկած աշխատութիւնները, բայց տեղի անձկութեան պատճառով, ո՛չ կրցանք առաջինը ամբողջութեամբ տալ եւ ոչ ալ երկրորդը սկսիլ։

Յաջորդ թիւով պիտի ներկայացնենք Ց. Գէրպէրեանի դրութեան երկրորդ եւ Ս. Կիրակոսեանի դրութեան առաջին մասերը։

Գլխաւորաբար հայրենի «Գարուն» ամսագրի մէջ ուշադրութիւն դրաւեց եւ բանավէճի քննարկման առարկայ դարձաւ բանաստեղծական այն սերունդը, որուն առանձնացող անդամները կը կոչուէին Հենրիկ Էդոյեան, Յովհաննէս Գրիգորեան, Արտեմ Յարութիւնեան, Արմէն Մարտիրոսեան եւ Դաւիթ Յովհաննէս։

Առենին բաւական մելան հոսեցաւ այս գծով։ «Բագին» եւս կ'արձագանգէր բանավէճին (1971, Թիւ 10) դրականօրէն կողմնորոշուելով հայրենի բանաստեղծութիւնը թարմացնելու ճիգերուն գծով։ Աւելի ուշ՝ երկու առանձին շարքերով կը ներկայացուէին այս ազոց առաջին հատորները, ինչպէս եւ՝ ամբողջ յօդուածաշարքով մը Վ. Օշական կը փորձէր արժեւորել այս շարժումը։

Փոխարերութեան վրայ հիմնուած Հենրիկ Էդոյեանի եւ Արտեմ Յարութիւնեանի բանաստեղծական լեզուամտածողութիւնը, օտարումի (alienation), թատերականացման եւ սեւ հեղնանքի վրայ խարսխուած Յովհաննէս Գրիգորեանի աշխարհահայեացքը, ուր բանաստեղծը ողբերգաւեշտական կերպար մըն է, Դաւիթ Յովհաննէսի կրքոտ ու սուր հեղնանքով յատկանշուող տողերը եւ, վերջապէս, ոչ մէկ սահմանափակումի մէջ կաշկանդուող Արմէն Մարտիրոսեանի բանաստեղծական յախուռն խառնուածքը հաշտ աչքով չէին դիտուեր հայրենի աւանդական քննադատական-խմբագրական-հրատարակչական հաստատութեան կողմէ։ Սոսկ լաւագոյն ապացոյցը պարզ այն փաստն է, որ Մարտիրոսեան կը տպուէր 1973ին, Դաւիթ Յովհաննէս՝ 1974ին, Յովհաննէս Գրիգորեան՝ 1975ին, իսկ մեքենագրիստներուն՝ Հենրիկ Էդոյեանի եւ Արտեմ Յարութիւնեանի մեղքը քաւելու առենը կու գար 1977ին...

digitised by A.R.A.R.@

Հայրենի երիտասարդ քնադատներէն Ալեքսանդր Թոփչեան անխոնջ ճիգ կը թափէր այս տողց բանաստեղծական տեսակէտները պարզաբանելու, անոնց գործերուն անդրադառնալու եւ կատարուած յարձակողականներուն պատասխանելու համար։

Ըստ մեր գնահատումին՝ այս սերունդին գլխաւոր ճիգը կ'ըլլար բանաստեղծական նոր լեզուի մը ստեղծումը, որ հեռու պիտի ըլլար հռետորականութենէ, արուեստականութենէ եւ կեղծ աշուղականութենէ, որոնց ներկայութենէն երբեք չէ ազատած խորհրդահայ քերթողութիւնը... մինչեւ այսօր։

Այս սերունդը կը յատկանշուէր նաեւ իր մասնաւորական պատրաստութեամբ։ Այս բանաստեղծները կրնային հմմտաւորել իրենց առանձին տեսակէտները, անդրադառնալ բանաստեղծական միջազգային շարժումներուն, իրենց սերնդակիցներու հատորներուն, եւայլն։

Հիմա, որ վերոյիշեալ անուններէն իւրաքանչիւրը 3 հատոր գիրք հրատարակած է եւ յստակացուցած իր բանաստեղծական դիմագիծը, ինչպէս եւ՝ հայրենի քնադատութիւնը որոշ չափով հաշտուած է անոնց ներկայութեան հետ, կարելի է աւելի ամբողջական արժեւորումը կատարել անոնց իրագործումներուն։ Եւ աւելի ուշ պիտի տեսնենք, թէ ասոնցմէ իւրաքանչիւրը ինչ ուղղութեամբ զարգացուց իր բանաստեղծական հոլովոյթը։

Տակաւին՝ 80ական թուականներէն սկսեալ նոր անուններու փաղանգ մը սկսաւ ուշադրութիւն գրաւել, որոնք կը կոչուէին Յակոբ Մովսէս, Արմէն Շեկոյեան, Իշխան Մամեան, եւայլն, որոնք եթէ զիրենք կանխողներու յանդգնութիւնը եւ նորարարական խանդավառութիւնը չունէին՝ ունէին նախորդ սերունդի ծաւալուն փորձը եւ նոր հաւասարակշռութիւն մը, կամ՝ միջին եզր մը կը փորձէին գտնել...։ Երկու սերունդներու այս ճիգերուն պիտի անդրադառնայ տեւեալ յօդուածը։

***

1984ին Արտեմ Յարութիւնեան հրատարակեց իր երրորդ հատորը՝ «Շեմ» խորագիրով։ Եթէ զանց ընենք հատորին առաջին բաժինը, յատկապէս «Բաթելոն» հիւրանոցի տեսիլքը» անուն պոեմը, կը տեսնենք, որ տեւական գործը եւս հաւատարիմ կը մնայ Արտեմ Յարութիւնեանի փնտռտուքներուն եւ քերթողական առաջադրանքներուն։

«Շեմ»ին մէջ կը կարդանք՝

Ազատ թռչելով ընդգրկել ամէն ինչ,
բայց հաշտեցնել լեռն ու ստուերը («Ինչնանային սահման»)։

Եւ, մակարդակի մը վրայ, այս աշխատանքը կը տանի Արտեմ Յարութիւնեան, այսինքն՝ կը փորձէ հաշտեցնել երկու հակադիր իրականութիւններ — հեռու թուացող ամբողջութիւններ, ինչպէս եւ՝ շօշափելին եւ անշօշափելին...

Նման փորձ մը անշուշտ նորութիւն չէ, ծանօթ է գերիրապաշտներու օրերէն։ Սակայն Յարութիւնեան ասով չի բաւականանար։

Իր բանաստեղծութիւնը հասկնալու համար բանալի բառ է տեղանքը, որ յաճախ կը կրկնուի, իսկ «Շեմ»ի առանձին բաժիններէն մէկը կը կոչուի «Տեղանքի ձայնը»։

digitised by A.R.A.R.@

Յարութիւնեան կարծէք զգայնութեանց նոր բնաշխարհներ կը հետաքննէ եւ կը բանայ, եւ իրմով նուաճուած անծանօթ-ծանօթ այդ վայրերը, «տեղանքը», նախ՝ կ'ապշեցնեն, ապա՝ աւելի ծանօթ կը դառնան։

Սակայն միշտ փոխաբերական, մեթաֆորիք բանաստեղծական մտածելակերպն է, որ իր մէջ կը միաձուլէ բոլոր հակադիր կամ անհաշտ բեւեռները եւ կերպարանափոխուած, նոր շունչ կամ անուն ստացած վայրեր կը բերէ։

«Նշանների երկիր» հատորին մէջ (1977) բանաստեղծը շատ բան ըսած էր արդէն։ Տարերային այդ նոյն բնութեան չենք հանդիպիր այլեւս, կարծէք իր աւարագաչտին մէջ կ'իյնան աւելի ընտանի վայրեր։ Օրինակ, առաջին հատորին մէջ, տեղ մը կ'ըսէր.

Կը հանեմ գլխարկս,
Ասես թփերից աստղեր կը հաւաքեմ,
Որ յետոյ բաժանեմ մաքուր գիշերներին։

«Տեսադաշտ»ը (1979) արդէն կը բացուէր նոյն մթնոլորտին մէջ, հոն՝ առաջին բանաստեղծութեան մէջ իսկ կը կարդանք.

Գնել՝ գլուխը դնելով ծեռքերիդ վրայ,
Ինչպէս մանկութեան մաքուր պահ։
Խօսում են ծառերը անորոշ-հեռում,
Ցասմիկի թուփը վառում է լապտերը,
Եւ մութ քաւուտը լուսաւորում։
Եւ վիստում է հողը արբնացող.
Նրանց աղմուկը անձրեւ է բերում։

Բանաստեղծին առաւելութիւններէն մէկն ալ ա՛յն է, որ կրնայ ամենապարզ կամ ամենահամեստ թուացող երեւոյթներուն մէջ կենսական ճըշմարտութիւններ տեսնել եւ ընդհանրացումներ կատարել։ Օրինակ, տեղ մը կը տեսնենք լեռները, որոնք չեն հաւատար իրենց բարձրութեան եւ մայր հողէն այնքան հեռացման...։ Այլուր՝ կը տեսնենք երեք տարի առաջ տնկուած յասմիկի թուփը, որուն չոր ճիւղէն կանաչ շիւեր կը ծլին.

Ես հրնուում եմ նրանց անմեղ աճով,
որ մտնում են գոյութեան մէջ
ասես մատների ծայրի վրայ,
անմեղ եւ հեզ երեխաների պէս,
Նորից կրկնում նիւթեղէն դառնալու իրենց կամքը,
եւ յանկարծ մի օր
ծաղկում հրեշտակաթեւ ծաղիկներով,
մոռնալով նիւթը,
ինչի գերին էին միշտ։

Նիւթեղէնին անանիւթեղինացումը, որ հրաշքի պէս բնութեան մէկ շատ պարզ երեւոյթին մէջ երեւան կու գայ, միաժամանակ իրեն հետ կը բերէ կեանքի խորհուրդը։

Երբեմն անսովորն ու սովորականը այնքան դիւրութեամբ իրարու կարգին կ'ապրին։ Առնենք «Թթենին»— «Ամտծոյ իրանն է / թթենու բունը՝ / հզօր եւ հեռու / այգու ծառերից / նահապետ, / որի բարկութեան պահին, / բացւում են յանկարծ, / միլիոն տերեւներ, / նրանք փշփշում են,

digitised by A.R.A.R.@

/ նորածիլի պէս մաքուր: / Երբեմ չես ասի, / թէ շերամաորդը / յետոյ կը պաշտի նրանց / իր մետաքս տրտում...

Իսկ քիչ մը անդին կ'ըսէ.

Յետոյ
խոհանոցի լոյսը
նայում է այգուն,
եւ չի հաւատում տեսածին՝
այգիների վրայ,
կանաչ գիշերների
մեծ լուսինը
դարձել է ապտուտ
եւ ժամադրել ինքն իրեն,
չունենալով բարձունքում հաւասարին:

Անգլիացի պատկերապաշտներուն մօտեցումը կարելի է նկատել նըմման գործերու մէջ, ուր շատ ընտանի երեւոյթներ՝ սնոտվորի զգայնութիւնը կ'առթեն:

Սակայն բանաստեղծին անընդհատ յառաջընթացը շարունակական շարժման կացութիւն մը կը ստեղծէ եւ նոր կերպարանափոխութիւններ կը բերէ: Առնենք «Ջեռն կերպարանափոխութիւն»ը, որ կ'աւարտի այսպէս.

Եւ երկաթի պէս ամուր բարձունքում
աստղերի համատեղութիւնը
ցուրտի հետքերով շուրջկալի է ելնում,
եւ փնտռում մենակ թափառողին:

Ճիշդ է, որ բանաստեղծին խօսքը միշտ յստակ չէ, եւ կամ՝ յանախ որոշ տողեր կը տկարացնեն ստեղծուած պատկերներուն թելադրականութիւնը, սակայն գործին ամբողջութիւնը նոյն «տեղանքը» կը պեղէ...

Այս բաժինին սկզբնաւորութեան ակնարկեցինք «Շեմ»ին մէջ տեղ գտած Յարութիւնեանի պոեմին: Նախ՝ պոեմը Ա. Յարութիւնեանի բանաստեղծական սեռը չէ, ոչ ալ՝ պատմողական-նկարագրականի հետ ազերս ունեցող բանաստեղծութիւնը...: Ապա՝ մարդ հարց կու տայ, բանաստեղծը ժխտական երեւոյթներէ զատ բան չտեսա՞ւ Լոնտոնի մէջ: Նման տրամադրութիւններ պաղ պատերազմի կանխատրամադրուածութեան օրերը կը յիշեցնեն, եւ նման գործեր ոչ մէկ ձեւով կարելի է փրկել, որքան ալ «խելացի» կերպով գրուած ըլլան անոնք...

Բարեբախտաբար մեր յիշողութեան մէջ առաւելաբար կը ձայնեն Ա. Յարութիւնեանի առաջին գիրքէն հասած հետեւեալ տողերուն պէս բանաստեղծութիւններ.

Յետոյ ես քեզ կ'արտասանեմ իմ կեանքը:
Բայց դու չես հաւատայ.
Դու այնտեղ միայն անտառ կը տեսնես,
Ու կը թափառենք տողերի խորքից —
Դէպի նա: Դու չես տարբերի
խոսքերն ու ցիրը:

Խորքին մէջ Ա. Յարութիւնեանի արտադրութիւնը կը հետեւի այս

digitised by A.R.A.R.@

ընթացքին, բնութեան նշաններուն ընդմէջէն կը տեսնենք կեանքի նշանները, եւ այդ նշանները կը կերպարանափոխուին լեզուական նշաններու, անընդհատ նոր առընչութիւններ, նոր յարաբերութիւններ եւ նոր իրականութիւններ կազմելով։ Բանաստեղծը երբեք չի հաշտուիր բառին եւ կիրարկման սովորական եղանակին հետ։ Ընդհակառակն, իւրաքանչիւր գրութիւն նոր փորձ կը դառնայ եւ նոր տեղանք կը ստեղծէ...

***

Հենրիկ Էլոյեանի առաջին իսկ հատորը՝ «Անդրադարձումներ»ը (1977) յստակ խանդավառութիւն ստեղծած էր իր անունին շուրջ, յատկապէս գրական-մտաւորական շրջանակներու մէջ։

«Սոնետների պսակ»էն մինչեւ «Ցերեկային խօսքեր» երկարող այդ հատորը իր ստեղծագործական փնտռտուքներուն եւ իրագործումներուն այլազանութեամբ ներուժ տենդ մը կը փոխանցէր ընթերցողին։ Հոն կ'առանձնանար փոխաբերական բանաստեղծական մոտեցումները՝ հետապնդելով արեւեալի միջոցաւ «իրականութեան երկրորդ հնարաւորութիւն»ը նուաճելու առաջադրանքը։ Փոխաբերութիւն է, որ կ'իրականացնէր այդ հնարաւորութիւնը, իրականութեան մէկ նոր, աւելի խորունկ ճշմարտութիւնը փոխանցելով մեզի։

Իրականութեան եւ պատկերի սահմաններն ու առընչութիւնները կը շարունակէր պեղել Էլոյեանի երկրորդ հատորը՝ «Պատկեր եւ կէսօր» խորագրով (1980)։ Նոյնանուն բանաստեղծութեան աւարտին, այս երկու առանձին ինքնութիւններուն սահմանները դրեթէ ամբողջութեամբ կը ջնջուին, երբ բանաստեղծը կ'ըսէ.

եւ թող դառնամ պատկեր կէսօրուայ առջեւ կանգնած,
եւ թող դառնամ կէսօր պատկերի մէջ ձուլուող։

Այս յարաբերութիւնները կը յայտնուին շարունակ՝ մարդու եւ ժամանակի, իրականութեան եւ փոխաբերութեան մակարդակներուն վրայ։ Առանձնացնենք «Հինգ սոնետ՝ Միհիլանջելոյին» շարքին առաջինը, ուր արծարծուած հարցերը այնքան սերտ աղերս ունին նախորդ հատորի «Սոնետների պսակ»ին հետ.

Քարը տանջւում է ամրութեան ցաւից,
(նա չունի պատկեր, անուն ու սահման),
նա մեզ է նայում, ձեռքդ տուր նրան,
դուրս բեր նրան օդ քնի անձաւից։

Հեռացրու քաղը մարմնի վրայից,
(քարն իմանում է գինը մերկութեան),
դէմքը դառնում է բացուած պատուհան —
նա տարբերում է խոր քունը մահից։

Ներսից ճչում է ամէն մի ոսկոր,
սնքռում է ցաւից հոգին-բարձրացած
նակատագրի անխափան խօսքով։

digitised by A.R.A.R.@

Բայց քարն այլեւս չունի վերադարձ,
նա դեռ շատ երկար պէտք է նաւարկի
բաց ոչկիանոսում սեփական կեանքի:

Անշուշտ շարքը կարելի է երկարել — «Երեխաները արքուն քաղաքում», «Հին հոգեբաժոգը» կամ «Երկու շարժում»ը, այս իմաստով, յատկանշական ու բանալի դրսեւորումներ են։

«Երկրային ժամանակ» *հատորը* (1983) *աւելի եւս կը շեշտէ Հենրիկ Էդոյեանի բանաստեղծական ինքնուրոյն դիմագիծը։*

Տուեալ հատորին մէջ երկու առանձին շարքեր կ'առանձնանան. առաջինը կը կոչուի «Էլեգիաներ», երկրորդը՝ «Երկրային ժամանակ»։ Եթէ ասենցմէ առաջինը մեր ուշադրութիւնը կը դրաւէ իր պատկերամտածելակերպով, երկրորդին վրայ կը կեդրոնանանք, որովհետեւ կը բերէ արդի մարդու ներքին տագնապը։ Եւ բանաստեղծը պիտի ըսէ.

...Լոյսը գալիս է ամենամօտ ատողից, բայց տեսէ՞
մեր ձեռքի մէջ մնում է դեռեւս տաք դիակը նրա,
եւ խաչի վրայ այլեւս չկայ մարմինը խաչուած,
նկարի միջից անհետացել է փիզուրն հիմնական,
աւտոբուսը յայտնւում է, բայց առանց վարորդի,
երիտասարդ կինը նստում է խոտերի մէջ — (նա
մահացել է, անշուշտ՝ ճանապարհից) —

Խաչին վրայ՝ խաչուածին բացակայութիւնը, առանց դեկի ընթացող հանրակառքը կամ խոտերու վրայ ճանապարհէն մեռնող կնոջ պատկերները յաւ բաներ չեն ըսեր ժամանակակից մարդու իրականութեան վերաբերեալ — հաւատքի անկարելիութի՞ւն, զոհաբերելու անկարելիութի՞ւն, հիմնական ուղղութեան բացակայութի՞ւն, եւայլն, ասոնք արդի մարդու դոյութենական տագնապին առընչուող հարցեր են անշուշտ, ընդհանրականութեամբ մը, որ համամարդկային է։

Կացութեան հետ դոյակցելու ձեւերը սովորաբար մեքենական են, սակայն տեղ-տեղ այլ ձեւի փորձառութիւններ եւս կան նաեւ.

...ով սիրոյ մէջ մտաւ՝ նա վերադարձ չունի:
Եւ ահա ծաղիկը վառւում է չորս կողմից,
բայց չի մոխրանում: Երկրային ուղի
ես իմ յոյսը կախում եմ քո դարպասներից...

Բայց լուծումը այնքան ալ պարզ չէ, որովհետեւ.

...եթէ ես շրջուեմ՝ երազն այդ կ'անհետանայ
ինչպէս ստուեր, որին ոչ ոք երբեք չի հասնում:

Պէտք է ըսել, որ դիցաբանութիւնը սերտօրէն կ'առընչուի Էդոյեանի քերթողութեան հետ։ Եթէ «Անդրադարձումներ»ուն մէջ առաւելաբար հին յունական դիցաբանութեան կը հանդիպինք, հետագայ հատորները կը բերեն նաեւ հին արեւելեան դիցաբանութեան ներկայութիւնը։ Հասկնալիօրէն,

digitised by A.R.A.R.@

այս բոլորը կու գան բանաստեղծին մշակութային հարուստ ենթահողէն, իսկ այս մշակութային այլազանութիւնը հարստացնող ազդակ է անկասկած։

Մեզ կ'անհանգստացնէ անչուշտ օտար բառեր գործածելու էգոյականի յամախակի միտումը։ Նաեւ՝ կողմնակից ըլլալով հանդերձ ինքնագիտակից քերթողութեան մը, երբեմն մեզի անհանգիստ կ'ընէ այս բանաստեղծութեան շեշտուած ինքնախորհրդածութիւնը, անընդհատ կրկնութիւնը՝ քերթողական արարքի ինքնաորոնման, հակառակ անոր, որ ընդհանրապէս կողմնակից ենք այս միտումին, եւ յատկապէս հայրենի քերթողութեան մէջ զայն կը գտնենք դրական։

***

Յովհաննէս Գրիգորեանի երրորդ գիրքին հետ՝ «Անձրեւ մի տխուր առիթով» (1982), խորքին մէջ նոյն, սակայն վերանորոգուող աշխարհի մը դիմաց կը գտնենք մենք մեզ։

Բանաստեղծին նախորդ երկու հատորները՝ «Երգեր առանց երաժշտութեան» (1975) եւ «Բոլորովին ուրիշ աշուն» (1979) կը խօսէին բանաստեղծին պայմանական աշխարհին մասին։ Օրինակ, երկրորդ հատորին մէջ տեղ մը կը կարդայինք.

Բանաստեղծի պայմանական աշխարհում ուժեղ անձրեւ էր գալիս,
ծաղիկներից եւ վարդերից թարմ ներկի հոտ էր փչում,
ողբերգութիւնը սկսելու համար բաւականին ժամանակ կար,
դրա համար նա թափառում էր դեկորացիաների մէջ ու ծխում։

Հոս ներկայ են Յ. Գրիգորեանի քերթողական աշխարհի բոլոր էատարրերը։ Նախ՝ բանաստեղծին ներկայացուցած աշխարհին պայմանականութիւնը, ապա՝ այն «դեկորացիաները», որոնց ամէն տեղ կը հանդիպինք, տակաւին առօրեական ու անհեթեթ առօրեան եւ կացութեան ողբերգաւեշտականութիւնը... որովհետեւ, ինչպէս բանաստեղծութեան շարունակութեան մէջ պիտի կարդանք՝ վարագոյրը ձեւով մը կը բացուի, կը վառին լոյսերը, «նազելի շարժումներով» բեմ կը բարձրանան հրչէջները, ջուր կը թափեն բանաստեղծին գլխուն, կը մարի գլանիկին կրակը, կը ծափահարեն հանդիսատեսները... եւ բեմադրութիւնը կը շարունակուի։ Անչուշտ թափանցիկ է նաեւ այստեղ այն սեւ երգիծանքը կամ սարքազմը, որ կ'ներեւի բանաստեղծին տողերուն ետին։ Աւելի՛ն, բանաստեղծը կարծէք որոշ օտարում մը կը զգայ աշխարհէն եւ իր հակազդեցութիւններուն մեծ մասը կարելի է այս շրջագիծին մէջ կարդալ։

Յատկապէս եթէ առաջին երկու հատորները նկատի ունենանք, ինչպէս եւ «Անձրեւ...»ի բանաստեղծութիւններուն մէկ մասը, կը տեսնենք, որ Գրիգորեան ծանօթ հակազդեցութիւններէն բոլորովին տարբեր, երբեմն նոյնիսկ ներհակ հակազդեցութիւններ կը դրսեւորէ ծանօթ թեմաներու նկատմամբ։ Երբեմն այն տպաւորութիւնը կ'ունենանք, որ ան բանաստեղծի թիկնոցը ծուռ կերպով, այսինքն՝ ներսի կողմը դէպի դուրս հագած է, եւ այս բոլորը՝ շատ դիտակից բանաստեղծական կեցուածքով մը։

Այս պատճառով ալ ոչ մէկ «հանդիսաւորութիւն» կը տեսնենք իր բանաստեղծութիւններուն մեծ մասին մէջ։ Ինչպէս Անհեթեթի թատրոնի յառաջապահներուն համար աւանդական թատրոնը արուեստական կը թը-

digitised by A.R.A.R.@

ւէր, կարծէք Գրիգորեանի համար եւս քերթողութեան աւանդական մօտեցումը «կեղծ» կամ արուեստական կը թուի։ Ասոր համար ալ «Ես կը յիշես մի երգ» բանաստեղծութիւնը կը բացուի հետեւեալ տողերով.

Զքոյնե՞մ հիմա ամէն ինչ ետրից
ու զոր տամ յանգին, վանկին զօրաւոր...

Անշուշտ տեսանելի է այն սուր հեգնանքը, որ կ'երթայ մա՛նաւանդ աւանդական քննադատութեան, որ հարթիչի պէս կը փորձէ տափակցնել ամէն երեւոյթ եւ նորարարական ամէն փորձ...։ Եւ քիչ չեն անոնք՝ որոնք տուրք կու տան այդ քննադատութեան եւ կը զիջին իրենց երբեմնի բանաստեղծական առաջադրանքներէն...

Եւ շատ բնական կը թուի Գրիգորեանի բանաստեղծական վերաբերումը կամ թոնը, որովհետեւ այդքան սովորական կամ մեքենայացած առօրեայի մը մէջ, բանաստեղծը իր ձգտումներուն համահաւասար շատ քիչ բան կը գտնէ եւ, այս պատճառով ալ, ոգեւորազաւեշտական տիպարի կը վերածուի։

Բանաստեղծին համար փրկութեան ճեւերէն մէկը կ'ըլլայ սովորականին մէջ զգսիի կամ անկաս գեղեցկութիւններու գիւտը, այսինքն՝ այն գեղեցկութիւնը, որ կը խուսափի մեզմէ շատերէն։ Նման գեղեցկութիւն մը կը թերթէ «Երիցուկ»ը.

...ներմակազգեստ պարուհի
գլխաշորով դեղնաւուն։
Ակեղնագոյն տեսարան,
կախուած մի հին տան պատից —
պատուհանի մօտ նստած մի կին առանց հայեացքի
եւ մի անցորդ, որ կանգնել
մնացել է մոլորուած —
...Իսկ նրա կինը շարժուեց,
բացեց աչքերը խոնաւ —
դաշտը դանդաղ պտտուեց
եւ գոյները դողացին
եւ վիթխարի մի ծաղիկ
շատրուանի պէս ցայտեց... եւ ինչ նման էին իրար
թերթերը շուրջ վարսանդի —
ապրած օրեր՝ իրարից
չեն տարբերուում ոչնչով... եւ օդի մէջ քարացաւ
միայն մի պահ, մի վայրկեան
ու խշշոցով փշրուեց,
կոտրակուեց, թափուեց ցած
եւ անցորդը կրացաւ,
վերցրեց մի բուռ, հառաչեց —
ինչ ոգորկ են հեզութեան արցունքները ապակէ՝
ներմակազգեստ պարուհի,
գլխաշորով դեղնաւուն...

•

Եթէ սխալ չհասկցուինք՝ պիտի ըսենք, որ ներքին քնարականութիւն

digitised by A.R.A.R.@

կայ այս տողերուն մէջ, որ կը հակադրուի առօրեայի անհրապոյր ճըն-չումին։

Ինչպէս տարբեր շրջագիծի մէջ ակնարկեցինք, երբեմն առօրեայէն փախուստ տալու կամ զայն ընդունելու եղանակներէն մէկը հիւմորը կ'ըլլայ։ Եւ երբեմն ալ բանաստեղծը փրեվէրեան նայուածքով մը կը դիմագրաւէ առօրեան։ Օրինակ, «Հին պատմութիւն» բանաստեղծութեան մէջ կ'ըսէ.

Դարձեալ նոյն տունը, ուր ոչ ոք չկայ։
Փոքրիկ մի երկտող սեղանին փոշոտ. «կը գամ, սպասիր»։
Դարձեալ նոյն դուռը,
որ ոչ բացւում է, ոչ փակւում կարգին
եւ նոյն թութակը, եւայլն...

Նոյն մթնոլորտը կարելի է տեսնել «Ռոբինզոն Կրուզո» բանաստեղծութեան մէջ նաեւ, ինչ որ առանձնութեան եւ կամ, գուցէ, յարաբերելու դժուարութեան փորձառութիւն մըն ալ կը փոխանցէ.

Օրուայ բոլոր ժամերին խմում էր իր սուրճը
եւ ուշադիր ու յամառ նայում ամցնող-դարձող մարդկանց...,

Այսպէս, պատուհանէն դուրս նայող եւ ծերացող Գրուզոն, կը խնդրէ հաւաքավարէն, որ իր կողմէ սպասէ, եւ եթէ նաւ մը, փոքր կամ մեծ, յանկարծ կանգ առնէ, յուր տայ իրեն...

«Անձրեւ մի տխուր առիթով» հատորին մէջ նոր ձգտում մը տեսանելի է։ Կարծէք Գրիգորեան այլեւս հաստատած է իր ըսելիքը, եւ այս իմաստով այլեւս պէտք չի զգար յաւելեալ ուժ վատնելու։ Այս պատճառով ալ հետզհետէ աւելի կը կեդրոնանայ բանաստեղծութիւններու ներքին թելադրականութեան վրայ. այս իմաստով պերճախօս են բանաստեղծութիւններու ամբողջ շարք մը, ինչպէս՝ «Դարնանային թեմաներ», «Երիցուկ», «Մխսոմ Մեծարենց», «Ամառնային թեմաներ», «Հին պատմութիւն», «Աշնանային թեմաներ», «Նոյ», «Ձմեռնային թեմաներ», եւայլն։

Ամէն պարագայի, «Անձրեւ մի տխուր առիթով» հատորը գործ մըն է, որուն կ'արժէ անդրադառնալ առանձին, եւ ոչ այսպէս, ընդհանուր քննարկման մը շրջագիծին մէջ։

ՑԱՐՈՒԹԻՒՆ ՊԷՐՊԷՐԵԱՆ

(Շար. 1)

digitised by A.R.A.R.@

•

Այս տարի ծննդեան 100ամեակն է Միհաք Մեծարենցի, որ ընդամէնը 4-5 տարիներու վերայ երկարած գրական իր գործունէութեամբ կրցաւ դառնալ հայ գրականութեան ամէնէն խոսվիչ դէմքերէն մէկը՝ ձայնի, գոյնի, խորհուրդի ու մարդկայնական անսպառելի ապրումներու անկրկնելի հալսուութիւն մը կտակելով մեր գրականութեան։

«Բազմինչի խմբագրութիւնը իր Հոկտեմբերի համարը ամբողջութեամբ պիտի նուիրէ եղերաբախտ բանաստեղծին անձին ու գործին։ Ա՛ս այդ արդէն կատարուած ուխտանքները ու մօտիկ եւ հեռաւոր աշխատակիցներէն ստացուած գրութիւնները համարձակութիւն կու տան մեզի ըսելու, որ ծրագրուած բացառիկը պիտի ըլլայ բանաստեղծին յիշատակին արժանի հրատարակութիւն մը։

Ուրախութիւն է յայտնել նոյնպէս, որ ներկայ տարուան ընթացքին Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը ծրագրած է առանձին հատորով մը լոյս ընծայել Մեծարենցի ամբողջական գործը՝ չափածոյ թէ արձակ։

•

Յիսունական թուականներուն, Ֆրանսայի շարք մը երիտասարդ վիպագիրներ փորձեցին ստեղծել նոր ոճ մը, որ իրենց կատարած յայտաբարութիւններէն ու քննադատներու մեկնաբանութիւններէն եւ յորջորջուեցաւ «նոր վէպ»։ Անոր առաջին ներկայացուցիչները կոչուեցան Բոպ Կրիէ, Միշէլ Պիւթոր, Քլօտ Սիմոն եւ Ժան Ռօ, որոնց վրայ քննադատները աւելցուցին նաեւ Նաթալի Սարրոտն ու նորերէն Քլեզիոն, որոնք ուզղակի ոչ մէկ կապ ունեցած էին շարժումին ուղղութեան եւ ձգտումին հետ, ինչպէս առիթով մը կը յայտարարէր վերջինը։

Հետագայ տարիները ցոյց տուին, որ «նոր վէպի» ամէնէն ներկայացուցչական դէմքը 1913ին ծնած եւ արդէն քանի մը հատորներու հեղինակ Քլօտ Սիմոնն է, որ1985ին արժանացաւ Նոպէլեան մրցանակին։

«Բազմինչի հետագայ թիւերէն մէկին մէջ թարգմանաբար պիտի տանք Նոպէլեան նոր մրցանակակիրին մէկ հայրապրոյցը, որ ցատ բուակներին լոյս կը սփռէ յիսունական թուականներուն ծաւալած վիպական այդ նոր ոճին վրայ։

Հանրապետական գրադարան
Гос. Библиотека
ԽՍՀ-Арм.ССР
digitised by A.R.A.R.@

ԼԻԲԱՆԱՆ

Հատավաճառ	20	Լ. Ո.
Տարեկան բաժնեգին	200	Լ. Ո.

ՍՈՒՐԻԱ

Հատավաճառ	20	Ս. Ո.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Տարեկան բաժնեգին	40	Ամերիկեան տոլար

باكين

مجلة شهرية ، ادبية فنية وعلمية

المدير المسؤول

السيد ارتين كارنيك قزانجيان

•

PAKINE

REVUE MENSUELLE

LITERAIRE & ARTISIQUE

Propriétaire

Dr. A. KAZANDJIAN

•

ԲԱԳԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ

Խմբագիր

ՊՕՂՈՍ ՄՆԱՊԵԱՆ

Խմբագրութեան անդամներ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԷՐՊԷՐԵԱՆ

ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Վարչական պատասխանատու

Ս. ՏԷՐ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ

B.P. 11-8404 - Beyrouth - Liban

Tel. 296898

digitised by A.R.A.R.@